

ԳՄԴ 63.3(2Հ) + 81.2Հ + 83.3 (2Հ)
Հ 24

ՀՏԴ 908/941(479.25)+809.181.1+891.981.1

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍ

(հոդվածների ժողովածու)

3/2012

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
(сборник статей)

JOURNAL FOR ARMENIAN STUDIES
(collection of articles)

*Տպագրվում է ԱրՊՀ գիտական
խորհրդի որոշմամբ*

*Ստեփանակերտ
2012*

Խմբագրական խորհուրդ

- Դադայան Ս. Վ. - Խմբագրական խորհրդի նախագահ, ԱրՊՀ ռեկտոր,
պ.գ.թ, պրոֆեսոր
- Բալայան Վ. Ռ. - գլխավոր խմբագիր, ԱրՊՀ պրոռեկտոր, պ.գ.թ., պրոֆեսոր
- Սաֆարյան Վ. Ա. - պատասխանատու քարտուղար, ԱրՊՀ պատմության
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
- Մելքոնյան Ա. Ա. - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ.,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
- Հովհաննիսյան Լ. Ե. - ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
- Պետրոսյան Հ. Լ. - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ.
- Մուսայելյան Հ. Գ. - ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ.,
պրոֆեսոր
- Սարգսյան Ա. Յ. - ԼՂՀ կրթության եւ գիտության փոխնախարար, բ.գ.թ.,
դոցենտ
- Կարապետյան Ս. - ՀՀՈՒԿ կազմակերպության տնօրեն

Редакционная коллегия:

- Дадаян С.В. - председатель редакционной коллегии, ректор АрГУ, к.и.н., профессор
- Балаян В.Р. - главный редактор, проректор АрГУ, к.и.н., профессор
- Сафарян В.А. - ответственный секретарь, зав. кафедрой истории АрГУ, к.и.н., доцент
- Мелконян А.А. - директор Института истории НАН РА, д.и.н., член корр. НАН РА
- Оганесян Л.Ш. - директор Института языка НАН РА, д.ф.н., член корр. НАН РА
- Петросян Г.Л. - зав. кафедрой культурологии ЕрГУ, д.и.н.
- Мусаелян О.Г. - декан филологического факультета АрГУ, д.ф.н., профессор
- Саркисян А.Ю. - заместитель министра Образования и науки НКР, к.ф.н., доцент
- Карапетян С. - председатель общественной организации по изучению армянской архитектуры.

Editorial Board:

- Dadayan S.V. - Chairman of the Editorial Board, rector of ASU, Ph.D. in History, Professor
- Balayan V.R. - Editor in Chief, vice-rector of ASU, Ph.D. in History, Professor
- Safaryan V.A. - Executive Secretary, Head of the History Department of ASU, Ph. D. in History, Associate Professor
- Melqonyan A.A. - Director of the Institute of History of NAS in RA, Ph. D. in History, a member of NAS in RA
- Hovhannisyan L. Sh. - Director of the Institute of Linguistics of NAS in RA, Ph. D. in Philology, member of NAS in RA
- Petrosyan H. L - Head of the Cultural Studies Department of YSU, Ph. D. in History,
- Musaelyan O.G. - the Dean of the Philological Faculty of ASU, PhD in Philology, Professor
- Sargsyan A. Y. - Deputy minister of Education and Science of NKR, Ph. D. in Philology, Associate Professor
- Karapetyan S. - Chairman of the Social Organization for the Study of Armenian Architecture

ԽԱՆՅՈՒԲՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

Հովհաննես Խորիկյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Խալյուրների տեղադրության վերաբերյալ հին աղբյուրների տեղեկություններն աչքի են ընկնում հակասականությամբ և խառնաշփոթությամբ, ինչը մասնագիտական գրականության մեջ հանգեցրել է տեղագրական բնույթի տարաբնույթ ենթադրությունների առաջադնամանը: Այսպես, մի քանի աղբյուրներում խալյուրները հիշատակվում են տիբարեններից արևմուտք¹, այն դեպքում, երբ ականատես պատմիչ Քսենոփոնը խալյուրներին հիշատակում է որպես մոսսինոյկներին ենթակա ցեղ, որը փոքրաթիվ էր և, ի տարբերություն մյուս կամ արևելյան խալյուրների, զբաղվում էր երկաթագործությամբ և նրանց արտադրանքը վաճառվում էր մոսսինոյկների միջոցով: Խալյուրներից անմիջապես արևմուտք հեղինակները մտնում են տիբարենների երկիրը²:

Հերոդոտոսը տիբարեններից առաջ հիշատակում է մոսքերին, որոնք մտնում էին XIX սատրապության մեջ³: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հույն պատմիչներից միայն Քսենոփոնն է խալյուրներին տեղադրում Ճորոխից արևելք՝ հայերի հյուսիսային սահմանակցությամբ⁴: Երկու հեղինակներ խալյուրներին տեղադրում են Հալիս գետից արևմուտք: Առաջինը Հերոդոտոսն է, որը խալյուրներին հիշատակում է Կրեսոսին ենթակա ժողովուրդների շարքում, որոնք ապրել են Հալիսից արևմուտք⁵: Հարկ է նշել, որ այս հիշատակությունը

*Հոդվածը ընդունվել է 20.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժինը:

¹Латышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе (այսուհետև ИДПСК). «Вестник древней истории» (այսուհետև ВДИ), 1947, № 3, с. 280-281, 288, 290; 1949, № 2, с. 287. Տիբարենների, մակրոնների, մոսսինոյկների մասին մանրամասն տես Խորիկյան Հ., Արեւմտեան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2, էջ 114-116:

² Քսենոփոն, Անաբասիս (այսուհետև: Անաբասիս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 121:

³ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (այսուհետև: Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 94; Herodotus (with an English translation by A. D. Godley), v. II-III, Cambridge, Mass.-London, 1957 (Loeb Classical Library), III, 94, p. 122-123.

⁴ Անաբասիս, էջ 103:

⁵ Հերոդոտոս, I, 28:

ուսումնասիրողները դիտել են որպես ուշ շրջանի ընդմիջարկություն¹, չնայած, մեր կարծիքով, խալկյուրների անվան տակ հասկացվել են մետաղագործությամբ զբաղվող ցեղեր: Երկրորդ հեղինակը Կլավդիոս կայսեր ժամանակակից Պոնտոսի Մելասն է, համաձայն որի, խալկյուրներին են պատկանել Ամիսոս և Սինոպ քաղաքները, իսկ գետերից՝ Հալիսը և Թերմոդոնտը: Որ Մելասն այդ խալկյուրների տակ փորձում է ընկալել հին աղբյուրների խալկյուրներին, երևում է այն իրողությունից, որ նրա հաղորդմամբ խալկյուրներն ապրել են տիբարենների հարևանությամբ²:

Անտիկ աղբյուրների մեծամասնությունը խալկյուրներին տեղադրում է մերձսևծովյան շրջանում, մասնավորապես Թերմոդոնտի և Կեռասունտի միջև ընկած տարածքում: Քսենոփոնը տիբարեններից արևմուտք չի հիշատակում խալկյուրներին, քանի որ Կոտյուորայից հելլենները շարժվում են արդեն ծովով: Որոշ աղբյուրներում խալկյուրները տեղադրվում են Հայաստանի հարևանությամբ, ընդ որում, միաժամանակ ընդունվում է մերձսևծովյան խալկյուրների գոյությունը: Հեկատեոս Միլետացին նրանց տեղադրում էր հայերից հյուսիս, որը համընկնում է Քսենոփոնի տեղեկությանը, ըստ որի՝ Հարպասոս գետից արևելք խալկյուրները եղել են հայերի հարևանները³: Ստեփանոս Բյուզանդացու կարծիքով, Հեկատեոսը նույնպես նկատի է ունեցել պոնտական խալկյուրներին, որոնց, հների վրա հենվելով, հեղինակը տեղադրում է Սև ծովի մոտ, Թերմոդոնտ գետի շրջանում⁴, ընդ որում պոնտական խալկյուրներին (Χάλυβες) նա հակադրում է Հայաստանին հարևան խալկյուրներին (Χάλυβοι): Պետք է նշել, որ Հեկատեոսը նկատի է ունեցել արևելյան խալկյուրներին: Հույների համար խալկյուրները հանդիսացել են երկաթը հայտնագործող ժողովուրդ և երբեմն համարվել են Սկյութիայի ժողովուրդ, որն իր անունը ստացել է Արեսի որդի խալկյուրից⁵:

Խալկյուրների վերաբերյալ տեղեկությունները պարզորոշ ցույց են տալիս, որ հունա-լատինական հեղինակներն այդ անվանումը ցեղանուն չէին դիտում, այլ զբաղմունք: Կալիմաքոսից սկսած շատ հեղինակներ ընդ-

¹Максимова М., *Античные города юго-восточного Причерноморья*, М.-Л., 1956, с. 28. Ե. Լոմոնոսին բացառում է խալկյուրների տեղադրությունը Հայուսից արևմուտք կամ էլ գետի արևելյան ափին (տե՛ս Ломоносов Н., *К истории Понтийского царства*, ч. I, Тбилиси, 1979, с. 123, 126, 135):

²ИДПСК, «ВДИ», 1949, № 1, с. 273.

³Անդ., «ВДИ», 1947, № 1, с. 301. Տե՛ս նաև Անաբասիս, էջ 98, 103:

⁴ИДПСК, «ВДИ», 1947, № 1, с. 301; 1948, № 3, с. 329. Максимова М., *Նշվ. աշխ.*, էջ 29:

⁵ИДПСК, «ВДИ», 1947, № 1, с. 305; 1947, № 3, с. 269, 287-288.

հանրական անեծք են հղում երկաթը հայտնագործած խայուբներին, որոնք չարի ստեղծագործությունը հանել էին գետնի տակից¹: Ռ. Շմիդտը գրում է. «խայուբների տեղադրությունն անտիկ ավանդույթում անկայուն է. նրանք տեղադրվում են կամ Պոնտոսի հարավային ծովափում կամ Փոքր Ասիայում, կամ էլ Կովկասում և Հայաստանում: Այս էթնանունը, ըստ երևույթին, դառնում է հասարակ, լայնորեն տարածվում և հատկացվում է այն ժողովուրդներին, որոնք առավելապես զբաղվում են մետաղագործությամբ»: Շարունակելով միտքը՝ հեղինակը եզրակացնում է, որ «խայուբների մասին տեղեկություններն այնքան խայտաբղետ են, որ դա կա՛մ առասպելներում հանդես եկող լեգենդար ցեղ է, կա՛մ էլ արդեն լրիվ իրական ժողովուրդ... Հավանաբար այս հանգամանքը մի կողմից ցույց է տալիս նրանց մեծ վաղեմությունը, մյուս կողմից՝ նրանց երկարատև բնակությունը միևնույն տեղում»²: Ինչպես տեսնում ենք, Ռ. Շմիդտը վերջնական եզրակացություն ընդունելու հարցում տատանվում է՝ երկմտելով խայուբներ ցեղի իրական գոյության մեջ:

Մ. Մաքսիմովան մերծսևծովյան խայուբներին անվանում է հարավ-արևելյան Մերծսևծովի բնիկ ժողովուրդ և հավանական համարում, որ մոսսինոյկները եղել են հարավից եկած ցեղերից մեկը, որոնք էլ ենթարկել և մասամբ ոչնչացրել են խայուբներին: Ինչ վերաբերում է լեռնային խայուբներին, ապա Մ. Մաքսիմովան ենթադրում է, որ նրանք սկզբնապես մերծսևծովյան խայուբների հետ կազմել են մեկ ամբողջություն և հարավից շարժվող ցեղերի ճնշման տակ անջատվել նրանցից: Հայտնվելով լեռնային շրջանի նոր պայմաններում՝ նրանք փոխում են և իրենց տնտեսական կացութաձևը, ու մերծպոնտական մետաղագործների համբավը մնում է իրենց մերծսևծովյան համացեղակիցներին³: Մ. Մաքսիմովայի համար խայուբները իրական ցեղ են, որը հայտնի է եղել իր զբաղմունքի՝ մետաղամշակության շնորհիվ:

Դեռևս XIX դարում Կ. Մյուլլերը կարծիք է հայտնել, որ հույները խայուբների անվան տակ նկատի են ունեցել ոչ թե որոշակի ցեղ, այլ Փոքր Ասիայի տարբեր շրջաններում ապրող բոլոր այն ցեղերին, որոնք զբաղվել են երկաթի արդյունահանությամբ և մշակմամբ⁴:

¹ Անդ, «ВДИ», 1947, № 3, с. 263.

² Максимова М., Уշվ. աշխ., էջ 27:

³ Անդ, էջ 26, 31:

⁴ Անդ, էջ 27:

Ուսումնասիրողներից Գ. Մելիքիշվիլին ժամանակին այն միտքն է հայտնել, որ չնայած անտիկ շրջանում լայն տարածված էր Եվքսինյան Պոնտոսի շրջանում ապրող խալյուրների մասին ավանդությունը, ըստ որի՝ նրանք հայտնագործել էին երկաթը և հմուտ մետաղագործներ էին, լուրջ կասկածներ է հարուցում այդ անունը կրող ցեղի գոյությունը: Շարունակելով իր միտքը՝ նա գտնում է, որ «խալյուր» անվանման հետքեր հետագայում այլևս չեն նկատվում, այն դեպքում, երբ «խալդայ» և «խալդ» անվանումը նշված տարածքում երկար ժամանակ պահպանվում է: Առանց Ն. Ադոնցի անունը հիշելու, նա կրկին առաջ է քաշում «խալյուր»-ի և «խալդայ»-ի նույնության խնդիրը՝ գտնելով, որ «խալյուր»-ը առաջացել է «խալդ»-ից արևմտավրացական *-ip(-ib)* հոգնակիակերտ վերջածանցի հավելումով (*hal-d-ib > halib*)¹: Սակայն խալյուրը և խալդայը ծագումնաբանորեն բացարձակապես տարբերվում են իրարից, քանի որ առաջինը անվանում է, իսկ երկրորդը՝ սակավությունների էթնիկական անունը:

Խալյուրների մասին տարակարծություններն առկա են եղել դեռևս անտիկ ժամանակներում: Այսպես, Ստրաբոնը փորձում է ալիզոններին նույնացնել հին խալյուրների հետ, որոնք նրա ժամանակներում խալդայներ էին և հակված է Հոմերոսի «ալյուր»-ը սրբագրել «խալյուր»-ի²: Ն. Ադոնցը համամիտ է մեծ աշխարհագետին *Chal-ybes*-ի և *Chal-daei*-ի նույնացման խնդրում, գտնելով, որ *Chal-di*-ն, հավանորեն, հայ խալիբների անվանումն է: Ն. Ադոնցը քիչ հավանական է գտնում ալյուրների ու խալյուրների նույնացումը, քանի որ ալյուրները արծաթ էին մշակում, իսկ խալյուրների հանքերը երկաթ էին պարունակում, իսկ ալիզոններին խալիբների հետ համեմատելը համարում է սոսկ անհիմն ենթադրություն՝ հարց տալով, թե «*Hali-zoni* և *Alibi*-ն **ali* – *ibi*-ից արդյոք չե՞ն նշանակում այն ժողովուրդը, որ զբաղվում էր աղահանքերի մշակությամբ *Halis* գետի վրա և նրան հարևան խալիբների հետ շփոթելը տեղի չի՞ ունեցել արդյոք նրանց լեռնաարդյունաբերական նույն բնույթը կրող զբաղմունքի հե-

¹ Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 71. *խալդայների նույնացումը ուրարտացիների հետ պետք է անընդունելի համարել (տե՛ս Пуотровский Б., Ванское царство, Москва, 1959, с. 117-121; Он же: История и культура Урарту, Ереван, 1944, с. 326-332):*

² Страбон, География в 17 книгах (*այլուիտեւն Տրաբոն*), перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, XII, III, 19-20.

տևանքով: Այդ դեպքում դասական Alyb-ին կհամապատասխաներ հայկական Աղին- Aliun, *alibn-ին և թերևս an-aliba-ին»¹:

Խոսելով խալուքների մասին՝ անհրաժեշտ է կրկին անդրադառնալ հալիզոններին: Ստրաբոնը Հալիս գետի անունը բխեցնում է աղահանքերից, որոնք գտնվում էին նրա հոսանքի մոտ²: Համաձայն Հոմերոսի՝ հալիզոնները Հալիսի հովտում ապրող ցեղ էին, որոնք իրենց անունը տվել էին գետին: Հալիս գետի անունը կապվում է «աղ» բառի հետ³, և դա բացառված չէ, քանի որ գետի ջուրը աղի է: Այս դեպքում պետք է ենթադրել, որ հալիզոններ ցեղն է իր անունը ստացել գետից և ոչ թե հակառակը: Հալիս գետը խեթական աղբյուրներում կոչվում է Մարասանտիա, կա նաև համանուն քաղաք և շրջան: Խեթերի մոտ նման քաղաքները և շրջանները սովորաբար գետեղված են համանուն գետերի վերին հոսանքում: Ընդ որում, Մարասանտիա գետը գլխավորապես ձևավորվում է ներկայիս Սվազի (Սեբաստիա) մոտ⁴: Հալիսի հետ նույնացվող Մարասանտիան մեկնաբանվում է որպես «կարմիր գետ», և նրա անունը կապվում լուվ. mar(r)u-(ya)՝ «կարմիր» բառի հետ⁵: Այս գետը երկաթահանքով և կարմիր հողով հարուստ լեռներից բխելու պատճառով ունի կարմիր, պղտոր ջուր: Հետագայում թուրքերը, նկատի ունենալով նրա ջրի կարմրավուն երանգը, Հալիսը անվանել են Դըզըլ Ըրմակ: Հետևաբար Ն. Ադոնցի այն կարծիքը, թե Հալիս գետը ունի լազական և վրացական ծագում՝ «գետ», «ջուր» իմաստով⁶, սխալ է: Ինչպես տեսանք, ավելի հավանական է, որ գետը երկու դեպքում էլ՝ կամ «աղի», կամ «կարմիր», անունը ստացել է սեփական յուրահատկության շնորհիվ: Մեր կարծիքով, ալիզոնը Հալիսի վերին հոսանքի բնակիչների անվանումն է, որն առաջացել է կամ գետանունից («աղի», «կարմիր»), կամ էլ զբաղմունքից (աղագործներ): Ս. Երեմյանը ալիզոններին տեղադրում է Հալիսի վերին հոսանքում՝ Սեբաստիայի շրջանում⁷: Ընդհանրապես, Հալիսի վերին հոսանքի շրջանը հարուստ է աղահանքերով, պղնձահանքերով, երկաթահանքերով և այլ օգտակար հանածոներով: Հերոդոտոսի մոտ ալազոնները սկյութական ժողովուրդ

¹ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 72-73:

² Страбон, XII, III, 12.

³ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 146:

⁴ Хачатрян В., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 23.

⁵ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 327, ժանդ. 15: նույնի՝ Հայաստանի լեզվի հիմնականտղիական ծագման վարկածը. «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, թիվ 1, էջ 94, ժանդ. 18:

⁶ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 73:

⁷ Атлас Армянской ССР, Ереван-Москва, 1961, с. 102, «Государство Урарту и сопредельные страны в VIII-VII в.в. до н. э.», карта.

են Դնեպրի ստորին հոսանքի ավազանի շրջանում¹, և ըստ էության, հետաքրքիր է Պատմահոր այն տեղեկությունը, թե Հյուպանիս (Հարավային Բուզը-Խ. Հ.) գետի վտակներից մեկի ջուրը խիստ դառնաղի է և գտնվում է երկրագործ սկյութների և ալազոնների սահմանի վրա: Մեր կարծիքով, տվյալ դեպքում ևս, չնայած ալիզոններ-ալազոնների տարբեր աշխարհագրական տեղորոշմանը, նրանց անվանումը կարելի է կապել «աղ» բառի հետ: Ս. Երեմյանի կարծիքով, ալիզոնների Մասիք քաղաքը կարող է տեղադրվել Նիկոպոլիսի և Ջիմարայի միջև², այսինքն՝ Հալիսի ակունքների շրջանում: Այուրների անունը կարելի է, ամենայն հավանականությամբ, կապել Աղյուն գավառի հետ, որը հարուստ էր աղահանքերով, և Հոմերոսի հալիզոնների քաղաք Այուրեն նույնացնել աղի արդյունահանությամբ զբաղվողների բնակավայրի՝ Աղիալանի հետ, որից էլ, ըստ Բ. Հարությունյանի, պետք է առաջանար Աղիւնը³: Վերջինիս արևմուտքից հարում էր Հալիսի ակունքների շրջանը: Իսկ նման տեղադրության դեպքում անժխտելի է, որ, ըստ Հերոդոտոսի, Հալիսի վերին հոսանքի շրջանը գտնվել է Հայաստանում, ուրեմն ալիզոնները, որոնք Հալիսի վերին հոսանքի բնակիչներն են, մտել են XIII սատրապության մեջ և մ. թ. ա. V դարում արդեն կարող էին ներգրավված լինել հայագոյացման ոլորտը և աղբյուրներում արտացոլվել են Հալիս գետանվան ներքո: Հետևաբար խայուրների նույնացումն ալիզոններին անհիմն է, քանի որ երկուսն էլ ծագումնաբանորեն ունեն տարբեր արմատներ և միաժամանակ ծագումնաբանորեն լիովին տարբերվում են խալդայներից: Բ. Հարությունյանի կարծիքով, խալդայ կամ խալտայ անունը հայկական ծագում ունի և կապված է «խաղտ» հասկացության հետ, որ նշանակում է «կոշտ, կոպիտ»: Դրանից են կազմված խաղտալեզու, խաղտալուր, խաղտախուղտ բառերը, որոնք բոլորն էլ նշանակում են «թանձրախոս, կոշտ ու կոպիտ բարբառով խօսող»⁴: Ըստ հեղինակի, «խալդայ» նշանակել է թանձրախոս և կոպտախոս մարդ և հավաքական հասկացություն է: Հեղինակի ենթադրությամբ, խալդայների անվան տակ ամենից առաջ հասկացվում էին սկյութեն կոչված ցեղերը, որոնք չի բացառվում, որ իրականում սկյութական ցեղեր էին, որոնք

¹ Հերոդոտոս, IV, 17, 52:

² Дьяконов И., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 119.

³ Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, էջ 105: Այուրներին Աղյունի հետ նույնացնում է նաև Ս. Պետրոսյանը և Աղիւնը կապում «աղյուծ» բառի հետ. Ի.-Ե. Պեյ -«աղյուծ» արմատից (տես Պետրոսյան Ս., Սամուխայի Մայր դիցուհու պաշտամունքի ակունքները, -«ՊԲՀ», 2004, թիվ 1, էջ 160-174):

⁴ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Ի. Բ. Երևան, 1973, էջ 323:

Այսրկովկաս էին մուտք գործել կիմերական և սկյութական ներխուժումների շրջանում: Սակայն շատ հնարավոր է, որ սկյութեն անվանումն էլ ընդհանրական էր, ուստի հեսպերիտ կոչված ցեղը (ըստ հեղինակի, ասպեյրների անունը այդպես էր արտացոլվել հույների մոտ, իսկ հեսպերուիիները հունական դիցաբանության մեջ նիմփաներ էին, որոնք ծայր արևմուտքում պահպանում էին ոսկե խնձորները), որը ոչ մի դեպքում չի կարող նույնանալ ասպեյրների հետ, պարզապես դրանցից մեկն էր և թողել է իր հետքը Սպեր գավառանվան մեջ¹:

Սկյութենները, մեր կարծիքով, նույն խալդայներն են ընդհանրական ընկալմամբ: Տարբերությունն այն է, որ եթե խալդայների անունը հույներն իմացան հայերից և ընդունեցին որպես որոշակի ցեղի անուն, ապա սկյութենների անունը, որոնք հայերի համար նույն խալդայներն էին, հույներն արդեն ընդունեցին որպես հենց կոնկրետ ցեղի ինքնանուն, որի մասին հունական աշխարհն ուներ որոշակի պատկերացում: Հույները, խալդե-խալդայների երկրից դուրս գալով, կրկին մտել էին Հայաստան և այդ մասին չեն իմացել: Խալդայների մի մասը, որ սկյութեններն էին, մտել են Հայաստանի մեջ, ընդ որում, խոսքը, հավանաբար, Գյումնիասի սկյութենների մասին է: Պատահական չէ, որ «Կյուրոպեդիա»-ի տեղեկություններում հստակ երևում է, որ խալդայներն այսպես թե այնպես կապված էին հայերի հետ, և երկու ժողովուրդների դաշինքը պահպանվում էր, ըստ Քսենոփոնի, նաև իր ժամանակներում: Համենայն դեպս, «Անաբասիս»-ի վերջում մակրոնների և խալդեների միջև հիշատակվող խալդայները ինքնավար էին: Դատելով շարադրանքից՝ այստեղ պարզորոշ կերպով սկյութենները կոչված են խալդայներ: Որ Հարպասոսն անցնելուց հետո հույները կրկին մտել էին Հայաստան, կարող է վկայել «Կյուրոպեդիա»-ի մի շատ արժեքավոր տեղեկությունը: Խալդայներին, որոնք եկել էին հաշտություն կնքելու, Կյուրոսը հարցնում է. «Արդյոք չէ՞իք ցանկալ, որ դուք ևս վճարեիք նույնը, ինչ որ *մյուս Արմենները* (ընդգծումը մերն է-Խ.Հ.), և թույլտվություն ստանալիք մշակելու Արմենիայի հողերը, որքան որ կամենալիք»²: Սույն տեղեկությունում ակնհայտորեն խալդայները, որոնք բռնել էին հայացման ուղին,

¹ Հայությունյան Բ., նշվ. աշխ., էջ 95-97:

² Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, էջ 112; Xenophon, Cyropaedia (with an English translation by Walter Miller), v. I, Cambridge, Mass.-London, 1960, Loeb Classical Library, p. 258-259.

համարված են ուղղակիորեն Հայաստանի բնակիչներ, հայաստանցիներ և խալդայները, ըստ «Անաբասիս»-ի, անկախացել էին մ. թ. ա. V դարի վերջերին, որոնք մինչ այդ մտնում էին XIII սատրապության մեջ:

Մ. թ. V դարի առաջին կեսին, երբ հայերեն էր թարգմանվում Մակաբայեցիների Երկրորդ գիրքը, 4-րդ գլխի 47-րդ տան՝ *εἰ χαί ἔπι Σχυσθῶν ἔλεγον ἀπὸ τῆς θήσαν ἀχατάγνωστοι* արտահայտությունը հայերը թարգմանել են այսպես. «Թէպէտ առաջի խաղտեաց դատ վարէին, իրաւ գտանէին»¹: Ն. Ադոնցը և Ս. Երեմյանը սկյութների անվան տակ փորձում են տեսնել որոշակի ցեղ, որը տարբեր է խալդայ-խալյուբներից: Սակայն դժվար չէ նկատել, որ հայերեն թարգմանության մեջ խաղտիքը հին հունարեն տեքստի Σχυσθῶν-ի փոխարեն օգտագործված է էթնիկական համարժեքության ամենալայն և կոնկրետ նշանակությամբ, և ոչ մի հիմք չկա այստեղ տեսնել Քսենոփոնի սկյութներին, որոնք, լինելով նույն սակ-սկյութները, հայերի համար խալդայներ են կոչվել, և այն ինչ-որ հայերի համար խալդայներ են եղել, հույների համար էլ սկյութներ են եղել: Ուստի խալդայների համադրումը սկյութներ կոչվող որոշակի ցեղի հետ անընդունելի է: Սկյութները ևս խալդայներ էին հայերի համար, սակայն հետաքրքիր է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ հայկական աղբյուրները միայն Ճորոխի վերին և միջին հոսանքի շրջանում հաստատված սակ-սկյութներին են անվանում խալդայներ, չնայած նրանք հաստատվել էին նաև Հայաստանի այլ շրջաններում, օրինակ Շակաշենում: Բ. Հարությունյանը գտնում է, որ սկյութնական ցեղերը հավաքական առումով կոչվել են խալդայներ կամ, դատելով հայկական աղբյուրներից, խալտայներ²: Սկյութների անունից էլ պետք է ծագեր Սկյութիսես լեռնաշղթայի անունը, որ Պոնտական լեռնահամակարգի ճյուղավորումներից մեկն է³: Արիստոտելի աշակերտներից Դիկեարքոս Մեսսենացին գրում է, որ Կողքիսի մոտ ապրող խալդերին ոմանք անվանում են խալդայներ եռավանկով⁴, այսինքն՝ սկյութական ցեղերը հավաքական առումով կոչվում են խալդայներ: Դիոդորոս Սիկիլիացին նույնպես արևելյան

¹ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 305: Տե՛ս նաև Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «ՊԲՀ», 1968, թիվ 2, էջ 96:

² Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 95:

³ Мелукашвили Г. А., К истории..., с. 81. Հմմտ. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 304:

⁴ ИДПСК, «ВДИ», 1947, № 3, с. 254.

խայուբների փոխարեն հիշատակում է խալդայներին¹, ցույց տալով, որ Կատարգա-Կղարջքի տարածքում սկյութական տարրը բավականաչափ մեծ թիվ է կազմել, որոնց շրջանում միննույն ժամանակ տարածված է եղել մետաղագործությունը:

Ի. Ղյակոնովը ժամանակին կարծիք է հայտնել, թե Արծկեի (Աղըլջևա-զի) արձանագրության մեջ հիշատակված խալիտու երկիրը համապատասխանում է հայկական աղբյուրների խաղտիքին²: Վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղտիքի բնակչությունը հնդեվրոպական-իրանական է և ոչ թե քարթվելախոս³: Օրինակ, ըստ «Աշխարհացոյց»-ի՝ եգերացիք Պոնտոսի ծովը կոչում են Ակամսիս, իսկ խաղտերը՝ Կականար⁴: Մենք կիսում ենք Ս. Պետրոսյանի կարծիքը, ըստ որի՝ ծովանունը բաղկացած է կակա (հմմտ. հուն. կակոս «վատ», «կատաղի», «սարսափելի») և մար (հմմտ. լատ. mare «ծով») բաղադրիչներից⁵: Համեմատության համար նշենք, որ հայիրականության մեջ Աղթամար նշանակել է Աղի ծով:

Ավելի ուշ խայուբների՝ որպես մետաղագործների զբաղմունքը հատկացվում է նաև հայերի մի մասին: Պլինիոս Ավագը գրում է. «... այնուհետև Փառնակիայից 100 մղոն հեռավորության վրա՝ հսկայական լեռներով շրջապատված ազատ քաղաք Տրապեզունտը, որից հետո գալիս է արմենոխայուբներ ցեղը, իսկ 30 մղոն այն կողմ՝ Մեծ Հայքը»⁶: Արմենոխայուբներին Պլինիոսը հիշատակում է նաև մեկ այլ հատվածում. «Թասիեի և Թրիարիեի տարածքները հասնում են մինչև Պարիհեդրյան լեռները, որոնցից այն կողմ գտնվում է Կողքիսի անապատը: Նրա կողքին՝ կերավնացիների ուղղությամբ, բնակվում են արմենոխայուբները, և մոսքերի տարածքն է՝ մինչև Կյուրոսի վտակ Հիբերոսը. նրանցից ներքև սակասաններն են, այնուհետև՝ մակերոնները

¹ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Հին հունական աղբյուրներ», Բ, Դիոդորոս Սիկլիդիացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 67:

² Дьяконов И., Заметки по урартской эпиграфике, «Эпиграфика Востока», VI, 1952, с. 111-112; Он же: Предыстория армянского народа, с. 170-171; Հայրությունյան Բ., նշվ. աշխ., էջ 102: Գ. Մելիքիշվիլին «խալիտուն» նույնացնում է ասորեստանյան արձանագրությունների «Թաբալ»-ին և տեղադրում այն հայկական շրջաններից արևմուտք, սակայն այս նույնացումը խիստ կասկածելի է (Меликшвили Г. А., Նշվ. աշխ., էջ 76-77):

³ Меликшвили Г. А., Наир-Урарту, Тбилиси, 1954, с. 411.

⁴ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110:

⁵ Петросян С., Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «Հ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 4, էջ 53-64:

⁶ ИДПСК, «ВДИ», 1949, № 2, с. 288. См. также Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, VI, III, 11-12.

և Աբսարրոս գետը»¹: Ըստ Բ. Հարությունյանի, Պլինիոսի առաջին հիշատակության մեջ արմենոխալուբները համապատասխանում են սկյութեն-խալդայներին, որոնք բնակվել են Ծանախոժոր գետի վերին հոսանքի շրջանում և ներառնվեցին հայագոյացման ոլորտը: Իսկ երկրորդ հիշատակության արմենոխալուբները տեղադրվում են այն խալուբների տարածքում, որոնց «Անաբասիս»-ը տեղորոշում է տաոխների հարևանությամբ²: Դժվար չէ նկատել, որ ինչպես Ստրաբոնի, այնպես էլ Պլինիոսի մոտ, խալուբը և խալդայը համարժեք են, քանի որ վերջիններիս շրջանում ևս զբաղվել են մետաղագործությամբ, երբ ավելի վաղ ժամանակների աղբյուրների վերլուծությունը ցույց էր տալիս նրանց հստակ տարբերակումը: Ընդ որում, Պլինիոսի առաջին վկայությունից պարզորոշ նկատվում է, որ այդ արմենոխալուբները մ. թ. I դարի արշալույսին չէին մտնում Մեծ Հայքի մեջ, որոնք մինչ այդ Փոքր Հայքի անբաժանելի մասն էին կազմում:

Ստրաբոնի ժամանակներում խալդայ հայկական անվանումը աստիճանաբար ներթափանցել էր Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերը, տարածվել հույների շրջանում, որը և պատճառ էր դարձել, որ Ստրաբոնը խալուբներին նույնացնի խալդայների հետ³: Խալդայ հավաքական անունով ցեղերը, որոնք հնդեվրոպական էին, մեծ մասամբ հայացան (XIII սատրապության տարածքում գտնված մասը-Խ. Հ.), իսկ Կղարջքի շրջանում՝ վրացացան: Դրա հետևանքով Խաղտիք կամ Խալդայների երկիր հասկացությունն աստիճանաբար տարածվեց հայերից հյուսիս-արևմուտք բնակվող մերձսևծովյան ցեղերի վրա, այսինքն՝ Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերի տեղաբնիկների վրա, որոնք զբաղեցնում էին Տրապիզոնից մինչև Ճորոխ գետն ընկած տարածքները⁴: Խաղտիք է համարվել նաև Արսեսա-Արսիքը, որտեղ հաստատվել էին «աս» կոչված սկյութական ցեղերը, և ավելի ուշ Խաղտիք է անվանվում ճան-մակրոնների երկիրը⁵: Խաղտիքի առավել լայն տարածական ընդգրկումը առավել ուշ շրջանի աղբյուրներում

¹ ИДПСК, -ВДИ", 1949, № 2, с. 298. Стен ула Pliny, Natural History, VI, XI, 29.

² Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 97-98: Ըստ Ս. Մուրադյովի, արմենոխալուբները տեղադրվում են Լյուկոս գետի վերին հոսանքի տարածքում՝ Կիրեսոն լեռնաշղթայի հարավային կողմից, Փոքր Հայքի սահմանի մոտ (տե՛ս Мираев С., Заметки по исторической географии Закавказья. Плиний о населении Кавказа, -ВДИ", 1988, № 1, с. 160-161):

³ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 104:

⁴ Անդ, էջ 101:

⁵ Անդ, էջ 99, 109-111:

պայմանավորված է բյուզանդական խաղտիք վարչական միավորի (սկզբում՝ տուրմա, իսկ այնուհետև՝ բանակաթեմ) հանդես գալով, որի մեջ ներառվում է նաև Ճորոխի ավազանը¹։ Կատարված քննությունից կարելի է եզրակացնել, որ խաղտիքը, որը Ճորոխի ավազանն է, ավելի ուշ ժամանակներում հարավից պետք է տարածվեր հյուսիս, և որ աղբյուրներում խալդայները համարվել են էթնանուն, իսկ խալյուրները՝ զբաղմունք։ Դատելով Կարինի և Դերջանի սահմանագլխին գտնված խաղտոյառիձ գյուղի անունից՝ խալդայները շարժվել են նաև դեպի հարավ և հաստատվել էթնիկ այլ միջավայրում։ Թերևս ուրարտական արձանագրությունների խալդիրիուլիսի տեղանունը կարելի է կապել խալդայ էթնանվան հետ և աշխարհագրորեն նույնացնել խաղտոյառիձին։ Խալդիրիուլիսին չի կարող նույնացվել Չալդրանի՝ Չլդր լճի ափամերձ շրջանի հետ, քանի որ տվյալ տարածքը գտնվել է էթիունի երկրի կազմում²։ Մեր կարծիքով, տեղանվան մեջ –ուլիսի–ն հայկական «աղխ»-ն է, և հետագայում տեղանունը պետք է ստանար –առիձ (առինձ, առինջ) «գյուղ, շեն» իմաստը։

«Ամաբասիս»-ում հիշատակված արևելյան խալյուրները էթնիկական առումով նույնանուն են մոսքերին, որոնք պատկանել են իրանական

¹Անդ, էջ 111: Վ. Իվանովը երկաթի կամ պողպատի հունական ձևը չձևափոխ (նաև խալյուրների անունը) բխեցնում է խաթերեն *ḫaralki*-ից (տես *Иванов В., Проблемы истории металлов на Древнем Востоке в свете данных лингвистики*, -«ՊԲՀ», 1976, թիվ 4, էջ 82-83: Հմմտ. նաև *Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы*, т. II, Тбилиси, 1984, с. 710, прим. 1): Խթական արձանագրությունների խալիպաստվա տեղանվան առաջին բաղադրիչը, ըստ Վ. Խաչատրյանի, հիշեցնում է ինչ-որ մասնագիտություն նշող խթերեն *ḫaliri*- բառը, ինչպես նաև հին հունական *χάλυβος* «մետաղագործ» տերմինը, որը հին հեղինակների աշխատություններում հաճախ տրվել է Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերին (հմմտ. արմենոխալյուրներ և խալյուրներ): Հեղինակը միաժամանակ նշում է, որ խթական աղբյուրներում *ḫaliri*- բառը հանդիպում է հաճախ որպես աշխարհագրական անվանում, ըստ էության, նույնպես Հայկական լեռնաշխարհի հետ կապված (խալիպի (այս լեռնանունը մենք կհամեմատենք նմանատիպ կազմություն ունեցող հետևյալ լեռնանունների հետ. Երկաթափանք և Երկաթափառաց-Աղծնիք աշխարհում, Երկաթասար-Չանգեզուրի լեռնահամակարգում, Երկաթաղբյուր-Ուրարաղի բարձրավանդակում, Երկաթներ-Արձակ լճի արևմտյան կողմում և այլն), Խալիպուտա, Խալիպսիուրա): Հեղինակի քննությունը հիմք է տվել նրան ենթադրելու, որ խալիպաստվան գտնվել է Ասուվա երկրում (ըստ հեղինակի՝ հետագա Երիվարքն զավառն է), որտեղ զբաղվել են մետաղամշակությամբ, որն այն ժամանակներում կապված էր նաև մարտականքների արտադրության հետ (տես *Хачатрян В., Восточные провинции Хеттской империи*, с. 127. Հմմտ. նաև *Պետրոսյան Ա., Ասուվա երկիրը և զույգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը*, -«ՊԲՀ», 2002, թիվ 3, էջ 261-276; *Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն*, էջ 334): Այսպիսի մոտեցման դեպքում անկասկած է, որ խալյուրների անունը՝ որպես մետաղագործներ, հին հունարեն է ներթափանցել այլ լեզվից (խաթերենի՝ *g*) և ունեցել է այլ արմատներ։

² Խաչատրյան Վ., Հայաստանը մ. թ. ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 124:

աշխարհին՝ զբաղեցնելով Ճորոխ գետից մինչև Կուր ընկած հողերը¹։ Մենք ընդունում ենք նման տեղադրությունը։ Բ. Հարությունյանը Քսենոփոնի խալկոբների տեղադրում է Ճորոխից արևելք և տաոխներից հյուսիս ընկած շրջանում, որը նույնանում է արևմտյան Գուգարքին կամ Կատարգա-Կղարջքին²։ Եթե նկատի ունենանք, որ նրանց երկրից հույները հասել են Հարպասոս-Ճորոխ գետին, ապա այդ տեղադրությունը միանգամայն ընդունելի է։

Քվինտոս Կուրտիոս Ռուփոսի մի հիշատակության մեջ ասվում է. «... Ձախից գտնվում են կերկետների, մոսսինների և խալկոբների երկրները, մյուս կողմից՝ լևկոսիրներին ու ամազոնուհիներին»³։ Ելնելով հյուսիսից հարավ թվարկումից՝ մոսսինները նույն մոսքերն են։ Եթե խալկոբները հիշատակվեին լևկոսիրների ու ամազոնուհիների հետ, ինչը, մեր կարծիքով, ըստ սկզբնաղբյուրների, ավելի ճիշտ է, ապա մոսսիններ-մոսքերը կտեղադրվեն կերկետներից հարավ, այնտեղ, ուր Ստրաբոնի «Մոսքերի երկիրն» է։ Հակառակ դեպքում, խալկոբները, որ նույն մոսքերն են, պետք է տեղադրվեն Ճորոխի ստորին հոսանքի շրջանում, այսինքն՝ Ռուփոսը միևնույն ցեղի երկու տարբեր անվանումները, մեկը որպես զբաղմունք, մյուսն էթնանուն, ընկալում է որպես երկու տարբեր ցեղերի անուններ, որն իրական չէ։ Այս շփոթը, երբ միևնույն էթնոսը հիշատակվում է երկու տարբեր անուններով, առկա է նաև Ստրաբոնի մոտ։ Ստրաբոնը հավաստում է, որ Արտաշես Ա և Ջարեհ թագավորները խալկոբներից ու մոսսինոյկներից գրավեցին Կարենիտիսը և Քսերքսենեն (իմա՝ Դերքսենե-Դերջան)⁴։ Ինչպես նկատում է Բ. Հարությունյանը, Ստրաբոնն՝ ազդվելով Քսենոփոնի վկայություններից, ինքն էլ խալկոբների անունը փոխարինել խալկոբներով, իսկ այնուհետև, ելնելով այն իրողությունից, որ խալկոբներից արևելք գտնվում են մոսսինոյկները, որոնց ենթակայության տակ են խալկոբները, ավելացրել է մոսսինոյկների անունը, կամ էլ քսենոփոնյան խալկոբների հարևանությամբ բնակվել են մոսքերը, հանգամանք, որը հույն աշխարհագետի մոտ կարող էր ծնել խալկոբ-մոսսինոյկ զուգորդությունը։ Նման զուգորդությունը կարող է ծագել հեղինակի մոտ, սակայն

¹ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 69, 78։ Մոսքերի և ընդհանրապես XIX սատրապության տարբեր ցեղերի մասին տես Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 120-126։

² Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 95։

³ Անդ., «ВДИ», 1949, № 1, с. 288.

⁴ Ստրաբոն, քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 57։

Կարենիտիսի և Քսերքսենե-Դերքսենեի գրավումը խայլութների և մոսքերի կողմից բացառվում է, որովհետև Արտաշես Ա-ն, Ստրաբոնի հավաստմամբ, Մոսքերի երկրի տարածքը գրավել էր իբերներից¹: Ինչպես կարելի է ենթադրել Ստրաբոնի տեղեկություններից, խոսքն Արտաշես Ա-ի կողմից կատարված վերանվաճման մասին է, քանի որ Հերոդոտոսի և Քսենոփոնի ժամանակներում Դերջանը և Կարինը մտել են XIII սատրապության մեջ: Հերոդոտոսը Եփրատի ակունքները դնում էր Հայաստանում², իսկ համաձայն Քսենոփոնի, փասիանների, հեսպերիտների և տաոխների բնակության շրջանները համարվել են Հայաստան³: Ուրեմն, մոսքերը պատմական ինչ-որ ժամանակահատվածում, հավանաբար մ. թ. ա. III-II դարերում, ստեղծել էին սեփական պետական կազմավորումը, որը հարավային ուղղությամբ բավականին տարածվել էր:

Գայոս Պլինիոսի հիշատակած կեփալոտոմները⁴ ինչ-որ ցեղի մակդիրն է, որը բնակվել է Սև ծովի արևելյան ափին: Կեփալոտոմներ մակդիրը լիովին համապատասխանում է խայլութներին, որոնց հունաց բյուրը հանդիպում է Ճորոխի ստորին հոսանքի շրջանում և բնորոշում որպես գլուխ կտրողների:

Բ. Հարությունյանը գտնում է, որ մարերը նույնանում են «Անաբասիս»-ի մոսսինոյկների ենթակայության տակ գտնվող խայլութների հետ և մարը ցեղի պարսկական անվանաձևն է⁵: Սակայն այդ փոքրաթիվ խայլութները չէին կարող ինքնուրույն ցեղ դիտվել և հանդես գալ կոլիսերի հետ: Պարզապես մոսսինոյկների մի մասը զբաղվել է երկաթագործությամբ և այդ մասը հույների համար ընկալվել է որպես առանձին ցեղ, և վերջին հաշվով նկատենք, որ մոսսինոյկները ևս ցեղի բնորոշում է հույների կողմից տրված, և թե ինչ է եղել ցեղի իրական էթնանունը մեզ համար անհայտ է:

Այսպիսով, աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ հին հեղինակները խայլութների անվան տակ նկատի են ունեցել մետաղագործությամբ զբաղվող տարբեր ցեղերի, ընդ որում արևելյան

¹ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 102-103:

² Հերոդոտոս, I, 180:

³ Անաբասիս, էջ 98:

⁴ ИДПСК, -ВДИ", 1949, № 2, с. 291.

⁵ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 92:

խալիւբները նույնացվել են մոսքերին, որոնք եղել են իրանական ցեղ և բնակվել են Ճորոխի ստորին հոսանքից մինչև Կուր գետն ընկած հողերում:

К вопросу об идентификации и локализации халибов
Оганнес Хорикян
Резюме

Анализ источников показывает, что древние авторы под названием халибы имеют ввиду разные племена, занимающиеся металлообработкой. При этом, восточные халибы идентифицировались с мосхами, которые были иранским племенем и локализовались на землях в нижнем течении р. Чорох до р. Кура.

On the Issue of the Identification and Location of the Chalibyans
Hovhannes Khorikyan
Summary

The investigation of sources shows that the ancient authors accepted different tribes dealing with metallurgy under the name of Chalibyans. Therefore the Eastern Chalibyans are identified with the Moschians, being an Iranian tribe and living in the lands that stretch from the lower stream of the Çoroh River to the Cyrus River.

**ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՄԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐՆ
ԱՐՑԱԽՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ 18-ՐԴ ԴԱՐԻ
ՍԿՋԲՆԵՐԻՆ***

Վահրամ Բալայան

Պրոֆեսոր

ԱրՊՀ

16-17-րդ դարերում հայ ժողովրդի վիճակն ավելի էր ծանրանում: Պարբերաբար կրկնվող արշավանքները, կոտորածն ու գերեվարությունը և դրանց հաջորդող սովն ու մահտարածամն ամայացնում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, ոչնչացնում արտադրական ուժերը:

16-րդ դարի թուրք պատմագիր Փեչևին, որպես ականատես, նկարագրում է այն ավերածությունները, որ կատարեց օսմանյան բանակը Երևանի նահանգում, Նախիջևանում, Սյունիքում և Ղարաբաղում: «Նրանք ...,- գրում է Փեչևին,- այնուհետև մտան Ղարաբաղ կոչված երկիրը, որն իր լեռներով և հարուստ այգիներով շատ հայտնի մի գավառ է...: ... Այս գավառի բնակչությունը այնպես էր ցրվել ու ոչնչացվել, որ մարդու հետք անգամ չերևաց»¹:

Հայ պատմիչն էլ, ականատեսի վկայությամբ, հավելում է, «Մարդիկ սնունդ հայթայթելիս այլևս չէին տարբերվում գազաններից: Մարդիկ ուտում էին ինչ պատահեր, երբեմն էլ հարձակվում էին անպաշտպան անասունների վրա, միսը հում-հում ուտում: Իսկ ուժասպառ եղածները փողոցներից հավաքում էին ոսկորները և բերաններն առնելով մռնչում էին: Հին տրեխները և կաշե փոկերը եփում ուտում էին: Գարնան բացվելուն պես սևացած մաշկով մարդկանց հոտը թափառում էր դաշտերում՝ սնվելով վայրի խոտաբույսերով: Մարդկանց մեծ մասը ուռչելով մահանում էր: Տասնյակ դիակներ անթաղ մնացին: Այս կամ այն գյուղերում քաղցից խելագար մարդիկ իրար միս էին ուտում»²:

Հայ հանրության առաջադեմ գործիչները, մտահոգ երկրի ճակատագրով, ուղիներ էին փնտրում՝ ազատագրելու հայրենիքը: Քննարկվող

*Հոդվածը ընդունվել է 15.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

¹Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մասին, Մաս Ա., Երևան, 1961, էջ 33:

² Ղապրիժեցի Ա., Պատմություն, Երևան, 1988, էջ 81-82:

ժամանակաշրջանի տարածաշրջանային զարգացումները նպաստավոր էին հայ գործիչների ազատագրական ծրագրերի իրագործման համար:

15-րդ դարի երկրորդ կեսին և 16-րդ դարի սկզբներին, Մոսկովյան պետության հզորացմանը զուգընթաց, ցարական կառավարությունը սկսեց հետաքրքրություն ցուցաբերել Այսրկովկասի նկատմամբ: Ռուսաստանը, լինելով քրիստոնյա երկիր, շահագրգռվածություն էր հանդես բերում Այսրկովկասի քրիստոնյա ժողովուրդների ազատագրման գործում:

Իհարկե, ցարիզմն իրականում հետամուտ է եղել իր ռազմաքաղաքական նպատակներին: Այս պարագայում էլ հայ ժողովրդի քաղաքական նկրտումները համապատասխանում էին Ռուսաստանի շահերին, և ազատագրման հույսը մարմին էր առնում, դառնում շոշափելի: Սակայն այդ բաղձանքներն ու տրամադրությունները քաղաքական անշեղ ճանապարհի վրա դնելու, երկու ժողովուրդների համագործակցությունը դիվանագիտական կանոնավոր հունի մեջ առնելու համար ռուսական արքունիքի հետ քաղաքական լեզվով խոսող լիազոր վարչական մարմին էր պետք:

Բուն մայր երկրում չկար քաղաքական որևէ գործոն կամ սոցիալական ներքին ուժ, որը զորավիգ լիներ կամ ձգտում ու հնարավորություն ունենար օգնելու, միավորելու հայ ժողովրդի ջանքերը, նպատակ ու ընթացք տալու ազատագրական մղումներին: Նման պայմաններում ռուսական արքունիքի հետ հարաբերությունները վարում էին Արցախի մելիքները, որոնց մոտ վառ էին մնացել հայկական պետության գաղափարները, և «գլխավորապես Գանձասարի կաթողիկոսները, որոնք բավականին անկախ էին պարսկական իշխանություններից»¹: «Արցախի հայ ֆեոդալները, - կարդում ենք 1532թ. հիշատակարաններից մեկում, - համարվում են մեր ժողովրդի և ամբողջ քրիստոնյաների պարծանքը»²:

Ակնհայտ փաստ է, որ 17-րդ դարի վերջերից հայ ժողովրդի ազատագրական շարժումը թևակոխել էր նոր փուլ: Հատկանշական է այն իրողությունը, որ այս անգամ շարժման իսկական կենտրոն դարձավ Գանձասարը: Այդ առթիվ շատ բնորոշ է արտա-հայտվել Լեոն՝ գրելով, որ «Գանձասարը ղեկավարում էր, ներշնչում էր, բանակցություններ էր վարում ռուսաց կառավարության հետ: ... Գանձասարի մեծ ջանքերով

¹ ԱԾՏԶ թ., Աշվ. աշխ., էջ XII:

² Իսկուս' Շ., ԸՐՎպվո՛ 2 տպրճՏռ տՏսՏՆվպ XVI2., ԾՏրՍՁՈ, 1971, թ. 18.

էր, որ կազմակերպուեց հայ զինուորական Ղարաբաղում, Եսայի և Յովհաննէս կաթողիկոսները շարժման հոգին էին... և ահա մի հոգևորականություն, որ ծուլուած էր իր ժողովրդի հետ, որ տանում էր նրան դէպի կռիւ, դէպի տանջանքներ և հերոսութիւններ՝ լեռնային ոգին, լեռնային կեանքի ազատութիւն սիրելու և պահպանելու համար»¹:

Արցախի մելիքական տների ներկայացուցիչների մեծ մասը, Գանձասարի կաթողիկոսներին թե ու թիկունք դառնալով, 17-րդ դարի վերջերից մի աննախադէպ և աննահանջ պայքար սկսեցին հայկական թագավորության վերականգնման համար:

17-րդ դարի վերջերից մինչև 1813 թվականը՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը, այդ բեռը տարբեր ժամանակահատվածներում և այլազան իրավիճակներում իրենց ուսերին կրեցին Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Խաչենի Հասան-Ջալալյանների, Վարանդայի Մելիք-Շահնազարյանների, Դիզակի Մելիք-Եգանյան-Ավանյանների ներկայացուցիչները:

17-րդ դարի 70-ական թվականներին Արցախում մեկնարկած ազատագրական շարժման համար կային որոշակի բարենպաստ պայմաններ: Անդրադառնալով դրանից երեք տասնամյակ առաջ տեղի ունեցած պատմական իրադարձություններին՝ մեզ համար պարզ կդառնան այդ վերընթացին լիցք տվող հանգամանքները:

Չնայած շահ Աբաս առաջինը և նրա հաջորդները հայության նկատմամբ կատարեցին դաժանություններ, բայց և այնպէս Պարսկաստանի խորամանկ տիրակալները, լավ ծանոթ լինելով հայ զինվորականության քաջությանն ու ազատասիրական ոգուն, փորձեցին Արցախի մելիքական ուժն օգտագործել Թուրքիայի ծավալապաշտության դէմ: Այդ նպատակով նրանք խրախուսեցին մելիքական կարգը, օրինականացրեցին նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ուղղակի գործողությունների ժամանակ աչքի ընկած մելիքներին շահերը գյուղեր էին նվիրում: Նրանց իրավունք էր վերապահվում պահել մշտական զորք, իրականացնել դատական գործառնություններ: Մելիքները պարտավոր էին պաշտպանել երկրի սահմանները, շահին հարկեր վճարել, մասնակցել նրա արշավանքներին²:

¹ Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրոցի, էջ 56:

² Մելիքների իրավունքների և պարտականությունների մանրամասները տես՝ Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ: Ուլուքաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975: Արցախի պատմություն: Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները:

Արցախի մելիքների մի մասն, իրենց անձնական կապերի շնորհիվ մեծ հեղինակություն ունեին պարսից արքունիքում: Չնայած Արցախի մելիքությունները պարսից տերության կազմում օգտվում էին միայն ներքին ինքնավար կարգավիճակից, բայց և այնպես, հայկական այդ մանր իշխանությունների տերերի ճկունության, քաջության և անձնական բազմաթիվ այլ բարեմասնությունների շնորհիվ դարձան հայության ինքնության պահպանման երաշխավորներ, նպաստեցին հայկական ինքնատիպ մշակույթի զարգացմանը և հանդիսացան ազատագրական պայքարի գաղափարախոսներ ու առաջնորդներ:

Չնայած դժնդակ ժամանակներին՝ Արցախի մելիքական տները, ապավինած լեռնաստանի անմատչելի բարձունքներին, շարունակեցին պահպանել հայկական պետականության բեկորները:

Արցախում քննարկվող ժամանակաշրջանում դեռևս պահպանվում էին վաղնջական ժամանակներից մնացած համայնավարական որոշ սկզբունքներ, ինչի արդյունքում իշխող մելիքական դասի ներկայացուցիչները չէին կտրել կապը ազատության համար մարտնչող ժողովրդական մասսաների հետ: Փույթ չէ, որ Արցախի մելիքներն իրենց տիրույթներում ունեին անսահմանափակ իշխանություն: Միջնադարյան խավարի ու հետամնացության պայմաններում լեռնաստանում գործում էին նաև ժողովրդավարական որոշ սկզբունքներ, որոնք հարիր են ժամանակակից քաղաքակիրթ աշխարհին, մասնավորապես՝ եվրոպականին: Այսպես, մելիքներին սովորաբար փոխարինում էր նրանց ավագ որդին: Սակայն նրանք իրենց իրավունքներն ու պարտականություններն ստանձնում էին ժողովրդի համախոսական-համաձայնությունից հետո: Արցախում ժողովրդի և իշխանության այս միասնությունն էլ դարձավ ազգային ինքնության պահպանման հիմնական գրավականը: Եվ այդ միասնական կենարար ուժը հզոր ազդակ հանդիսացավ երկրի ազատագրման և պետականության վերակերտման գործին: Համաժողովրդական պայքարի բովում Արցախի լեռներում հղացավ միասնական հայրենիքի՝ Մեծ Հայաստանի ազատագրության գաղափարը:

Մելիքական շրջանում Արցախում գործող երկրի կառավարման համակարգում արմատավորված ժողովրդավարական որոշ սկզբունքները

տվյալ ժամանակաշրջանի չափորոշիչների համատեքստում, այնքան տպավորիչ էին, որ իր հայրենիքի՝ անգլիական հասարակության, զարգացման նրբերանգներին քաջածանոթ գրող-ձանապարհորդ Ջոնս Հանվեյը, հանձին այդ լեռնաստանի իշխանությունների, տեսել է հանրապետությանը հարիր մի բան¹:

Բնականաբար, արցախահայության մոտ արմատավորված ժողովրդավարական պետականամետ գաղափարները 18-րդ դարի դեպքերի զարգացման արդյունք չէին: Դրանք ավելի խորը արմատներ ունեին և գալիս տանի, Ջրաբերդի, Վարանդայի և Դիզակի մելիքական տների ներկայացուցիչներին տեղական ծագում չի վերագրվում²: Այնուհանդերձ՝ նրանք, հաստատվելով այդ գավառներում, դարձան երկրամասում գործող լավագույն ավանդույթների շարունակողն ու կրողը:

Զնայած Արցախի մելիքություններից ամեն մեկն իր գավառի սահմաններում ուներ առանձին իրավաքաղաքական սուբյեկտի կարգավիճակ, այնուամենայնիվ, չգրված օրենքի ուժով միմյանց նկատմամբ նրանք ունեին որոշակի պարտականություններ: Եղած իշխանական գերդաստաններից առավել աչքի ընկած ներկայացուցիչներից մեկը համակարգողի դեր էր կատարում՝ հավասարաչափ ներկայացնելով բոլորի շահերը: Պատերազմի, խաղաղության և բախտորոշ այլ երևույթների քննության ժամանակ վերջնական որոշումը կայացվում էր մելիքների խորհրդաժողովում: Միջնա-դարի պատմական անցքերում, աղբյուրների վկայությամբ, մելիքների մեջ «ավագի» պարտականությունները կատարում էին Գեղարքունիքի տեր Մելիք-Շահնազար Ա-ն, Քաշաթաղի Մելիք-Հայկազը, իսկ Խամսայի շրջանում՝ Դիզակի Մելիք-Եգանը:

17-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ սուզերենության ինստիտուտի մեջ որակական փոփոխություն կատարվեց: Այդ ժամանակ դա

¹ Jonas Hanway, *A Historical Account of the British trade over the Caspian tea with the Revolutions of Persia*, London, 1754, vol. III, part VIII, p. 252. Լինելով Անգլիայի ծավալապաշտության ջատագովներից մեկը Ջոնսս Հանվեյը թշնամաբար էր լցված այն ուժերի նկատմամբ, որոնք կանգնած էին այդ ձանապարհին, մասնավորապես խոսքը վերաբերում է հայ վաճառականներին, որոնք ազատ մրցակցության պայմաններում ասիական և հնդկական շուկաներից դուրս էին մղում անգլիացիներին: Բայց դա չխանգարեց, որ նա անկողմնակալ գնահատական տա տվյալ ժամանակաշրջանի Արցախի հասարակական-քաղաքական զարգացումներին:

² Զալալեանց Ս., ձանապարհորդությունն ի Մեծն Հայաստան, հ. Ա, հ. Բ: Միդգա Յուսուֆ Ներսեսյով, Ճշմարտացի պատմություն: Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10; Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ; Տեր-Սյրտչեան Կ., Դօիեանք եւ Մելիք-Շահնազարեանք, «Նիթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, Էջմիածին, 1914:

հիմնականում պատկանում էր Գանձասարի կաթողիկոսներին: Ըստ էության՝ 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813 թվականը՝ ռուսական գերիշխանության ընդունումը, հանձին Գանձասարի կաթողիկոսության, Արցախն իրենից ներկայացնում էր որպես մի կրոնապետություն: Հասան-Ջալալյան մեծանուն տոհմը 13-րդ դարից սկսած վայրիվերումներով գլխավորում էր արցախահայության ազատագրական պայքարն ու պետականակերտման գործընթացը:

Գանձասարի դերն Արցախի հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման և ազգային ազատագրական պայքարին նոր որակ հաղորդելու տեսանկյունից ավելի էր կարևորվում, որովհետև Հասան-Ջալալյան տոհմի ձեռքին կենտրոնացված էր Խաչենի՝ ինչպես աշխարհիկ, այնպես էլ՝ հոգևոր իշխանությունը: Հայկական պետականության պատմության մեջ կառավարման մոդելի այս ձևաչափը թույլ էր տալիս ներքին կյանքում առավել մոտ լինել ժողովրդին, իսկ արտաքին ճակատում՝ վարել հավասարակշռված ձկուն քաղաքականություն:

Հասան-Ջալալյանները, թերևս, հայ իշխանական տների շարքում այն եզակի ներկայացուցիչներն էին, որոնք ունեցած իրավասությունների մի մասը, գիտակցաբար պատվիրակելով նույն տոհմի հոգևոր դասին, փորձում էին իրենց ազդեցության ուղեծրում պահել Գանձասարի հովանու տակ գտնվող ոչ միայն բուն Խաչենի, այլև Կուր-արաքսյան միջագետքի և անդրկուրյան աստվածապաշտ հայ հանրությանը: Այդ նպատակով Հասան-Ջալալյաններն իրենց զավակների մի մասի համար հոգևոր պատշաճ կրթություն էին ապահովում, իսկ Գանձասարի վանքին նվիրաբերում գյուղեր, կալվածքներ:

Գանձասարը, հանձին նրա հայրենապաշտ հոգևորականության, 18-րդ դարի վերջերին դարձավ վաղ և միջին միջնադարում Հայոց արևելից նահանգներում գոյություն ունեցած թագավորությունների արժանի ժառանգորդը: Նրանք սկսեցին արտահայտել Արցախի ինչպես մեկիքական տների, այնպես էլ՝ հասարակ ժողովրդի շահերը:

Գանձասարի հովանու տակ գտնվող ժողովուրդն իր հերթին Հասան-Ջալալյան կաթողիկոսներին ընկալում էր ոչ միայն որպես հոգևոր առաջնորդների, հովվապետների, այլև նրանց մեջ տեսնում էր երբեմնի գոյություն ունեցած հայկական հզոր պետականության գաղափարախոսների և դրան հասնելու առաջնորդների:

Գանձասարի կաթողիկոսների ընտրման ընթացակարգն իր մեջ նույնպես պարունակում էր ժողովրդավարական որոշ սկզբունքներ: Այսպես, Գանձասարի Պետրոս կաթողիկոսի իրավունքները հաստատող Շահ Աբաս Բ-ի 1663 թվականի հրամանագրի մեջ ասված է. «Պետրոս կաթողիկոսը ներկայացրեց Ղարաբաղի հայերի մի խմբի ձեռքով գրված ու կնքված մի նոտարական փաստաթուղթ՝ հաստատված Ղարաբաղի բեկլարբեկի կողմից այն մասին, որ Գրիգոր կաթողիկոսը մահացել է և Ղարաբաղի բնակչությունը, մելիքները, գեղջավազներն ու քյադխուդաները իրենց համաձայնությունն են տվել Պետրոսի կաթողիկոսությանը: Մենք այն նրան շնորհեցինք ու կարգադրեցինք, որ հիշյալ հայ ժողովուրդը նրան իր կաթողիկոս ու առաջնորդ ճանաչի ...»¹:

Պետրոս կաթողիկոսին հաջորդած Գանձասարի Երեմիա կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքները հաստատող շահ Հյուսեինի 1699/ 1700թ. հրովարտակում նույնպես խոսվում է ժողովրդավարական այն սկզբունքների մասին, որոնք արմատավորված էին արցախահայ իրականության մեջ: «... Օրերս կարգակիցների մեջ լավագույն Գանձակի, Ղարաբաղի ու Շիրվանի հայերի Երեմիա կաթողիկոսը տեղեկացրեց,- ասված է հրովարտակում,- որ այդ մահալների հայերի կաթողիկոսությունը, ինչպես որ իր նախնիների վերաբերությամբ էր այդ արվել, այնպես էլ դրախտաբնակ արքայի հրամանագրով իրեն է շնորհվել ...: Այդ դիրքն իր համապատասխանության մասին մի համախոսական ներկայացրեց՝ գրված Ղարաբաղի մահալների մի խումբ հայ բնակիչների կողմից ..., ըստ որի վերոհիշյալ ռայաթները շատ գոհ են նրա հաճելի վարվելակերպից և խնդրեց արքայական ստորագրությունը»²: Հրովարտակում մատնանշված համախոսականը պահպանվում է Մատենադարանի կաթողիկոսական դիվանում³:

Եղած աղբյուրների քննությունից կարելի է եզրակացնել, որ Գանձասարի կաթողիկոսների հաստատման հարցում շահական հրովարտակներն ավելի շատ ձևական նշանակություն ունեին: Պարզապես դա շահական իշխանության քմահաճ և ինչ-որ տեղ, «տիրական» վերաբերմունքի արտահայտություն էր, գոյություն ունեցած

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 2ա, վավ. 58: Մատենադարանի պարսկերեն վավերագրեր. հրովարտակներ /1652-1731/, պրակ 3-րդ, էջ 50:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 2բ, վավ. 133ա: Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 3-րդ, էջ 142:

³ Տես՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 240, վավ. 2:

Օսմանյան կայսրությունում քրիստոնյա բնակչության հանդեպ 19-րդ դարի վերջին քառորդից սկսած և մինչև 1920-ական թվականների սկիզբը շարունակված ցեղասպանությունների, կոտորածների հետևանքով մեծապես փոխվեց այդ երկրի էթնիկ-կրոնական պատկերը: Քենալական շարժման արդյունքում 1923թ. ձևավորված Թուրքիայի Հանրապետությունը ևս որդեգրեց և շարունակեց իր ոչ մուսուլման քաղաքացիների հանդեպ անհանդուրժողական և խտրական քաղաքականություն: Հանրապետական Թուրքիայի պատմության տարբեր ժամանակահատվածներում արձանագրվել են պետականորեն և տարատեսակ «օրենքներով» սահմանված կրոնական, էթնիկ պատկանելության հիման վրա հալածանքներ, խտրականություններ, որոնք հանգեցրել են ազգային փոքրամասնությունների համար մի շարք բացասական հետևանքների՝ արտագաղթ, տնտեսական կյանքից բռնի հեռացում, հոգեկան, բարոյական խեղումներ և, ի վերջո՝ ֆիզիկական ոչնչացում:

*Հոդվածը ընդունվել է 22.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ թուրքագիտության ամբիոնը:

Թուրքական պատմագրությունը նման թեմաների կամ չի անդրադարձել, կամ հետևելով ձևավորված ավանդույթներին՝ խեղաթուրել է իրականությունը: Թուրքիայի պետական տարբեր կառույցների՝ Ազգային մեծ ժողովի, որոշակի նախարարությունների արխիվները մինչ օրս անհասանելի են ուսումնասիրողների համար: Սակայն վերջին շրջանում թուրքական իրականության մեջ տեղի ունեցող որոշ զարգացումների համատեքստում փոքր թվով պատմաբան-ուսումնասիրողներ, որոնք չեն պատկանում «պաշտոնական պատմաբանների» թվին, սկսել են հետաքրքրվել հանրապետական Թուրքիայում ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառված հալածանքի քաղաքականությամբ: Սրան զուգահեռ հրատարակվում են այդ հալածանքների ականատես-վերապրողների հուշերը, որոնք ևս կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն:

20-րդ դարում Թուրքիայի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառված հալածանքի քաղաքականության դրսևորումներից առավել քիչ է ուսումնասիրված 1941թ. ոչ մուսուլման քաղաքացիների շրջանում անցկացված, այսպես կոչված, 20 դասակարգի զինակոչը: Ի՞նչ էր սա ենթադրում: Երկրորդ Համաշխարհային պատերազմի թեժ ժամանակաշրջանում թուրքական իշխանությունները երկրի ոչ մուսուլման քաղաքացիների՝ հայերի, հույների, հրեաների շրջանում հապճեպ հայտարարել են զորակոչ՝ ըստ 20 դասակարգման: Այս դասակարգումների մեջ էական տեղ էր զբաղեցնում զորակոչիկների տարիքը, այսինքն՝ ըստ առաջին դասակարգման զորակոչվում էին 18 տարեկանները, ըստ երկրորդ դասակարգման զորակոչվում էին 20 տարեկանները և այսպես դասակարգումների թիվը հասել էր 20-ի, ինչի պատճառով էլ գիտական գրականության մեջ այդ զորակոչը ստացավ «20 դասակարգի զորակոչ» անվանումը:

Աղբյուրները փաստում են, որ զորակոչի են ենթարկվել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ չափափաս տղամարդկանց մեծամասնությունը: Ըստ որոշ տվյալների, զորակոչվել են 18-48¹, 26-45², 18-60³ տարիքային խմբերին պատկանող տղամարդիկ: Ավելին՝ զորակոչվել են նաև զինծառայություն անցած տղամարդիկ և

¹ Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 504:

² Kozoğlu Y., Hattırlıyorum Türkiye'de gayrimuslim hayatları, İstanbul, 2003, s. 40.

³ Аванесов С., Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963, стр. 162.

պահեստագորայինները¹: Ջորակոչվածների մեջ նույնիսկ եղել են ծառայությունից նոր վերադարձածներ²: Կարևոր է նկատել նաև, որ զինծառայության են կանչվել առանց խտրականության բոլոր տղամարդիկ, անգամ՝ հիվանդներն ու հաշմանդամները³: 20 դասակարգի զորակոչի ենթարկված և ծանր պայմաններում իր ծառայությունը անցկացրած հայազգի Սարգիս Չերքեզյանը վերոնշյալի մասին հետաքրքիր տվյալներ է փոխանցում: Նա պատմում է իրենց ճամբարում «ծառայող» հայազգի մի հոգեկան հիվանդի մասին. *«Յեղիքուլեի հայկական հիվանդանոցում հոգեկան հիվանդներ կային, թեթև խանգարում ունեցողներ... Սրանցից մեկին ուղարկել էին նալա-րավաճառի մոտ, ճանապարհին ոստիկանությունը ձերբակալել էր, վերց-րել, բերել էին ծառայության: Մարդն իրականում գիժ էր... Մի օր ասաց. «Այ մարդ, հոգեբուժարանում այստեղից ավելի լավ էր»: Մարդն իրավացի էր: Նրան բերել էին միայն հայ լինելու համար»⁴*: Նմանատիպ փաստեր է ներկայացնում նաև հայազգի գրող-լրագրող Երվանդ Գոբեյանը, ով նույնպես այդ տարիներին եղել է պարտադիր զինծառայության մեջ: Ըստ նրա, 20 դասակարգի զորակոչի ժամանակ բացարձակ ուշադրություն չի դարձվել մարդկանց առողջական վիճակին. օրինակ հույն Թեոհարին կույր է եղել, Արսլան Յորգուն մտավոր հետամնաց և այլն⁵:

Կարևոր է շեշտել, որ ոչ մուսուլմանների զորակոչի որոշումը ընդուն-վել է հույժ գաղտնիության պայմաններում և մինչև վերջերս հստակ չէր անգամ ամսաթիվը, սակայն ուսումնասիրող Սայիթ Չեթինօղլուի 2009թ. տպագրված ուշագրավ և արժեքավոր աշխատության մեջ հեղինակը ներկայացնում է գաղտնի որոշման հետ կապված մանրամասներ և լույս սփռում հարցի այդ կողմի վրա: Այսպես, Թուրքիայի կառավարությունը 1941թ. ապրիլի 22-ի նիստում որոշում է ընդունում բանակ զորակոչել ազգային փոքրամասնությունների համայնքների չափահաս տղամարդ-կանց՝ ընդհանուր առմամբ շուրջ 12 000 մարդու⁶: Նույն օրը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստում քննարկվել և ընդունվել է պաշտպանու-թյան նախարարության առաջարկը 1896-1913թթ. ծնված ոչ մուսուլման

¹ Bali R., "Yirmi Kura İhtiyatlar" olayı, Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 4.

² Kozoğlu Y., ՅԻՄԻԿՐԱ, չ. 3 40:

³ Bali R., ՅԻՄԻԿՐԱ, չ. 3 4:

⁴ Zekerzyan S., Dünya Hepimize Yeter, İstanbul, 2003, s. 121.

⁵ Bali R., ՅԻՄԻԿՐԱ, չ. 3 9:

⁶ Zetinoğlu S., Ekonomik ve Kültürel Jenosit: Varlık Vergisi 1942-1944, İstanbul, 2009, s. 57.

տղամարդկանց զորակոչել, սակայն հանձնել հասարակական աշխատանքների նախարարության ենթակայությանը¹: Հետաքրքիր է փաստել, որ Թուրքիայի կառավարությունը զորակոչի անցկացման անհրաժեշտությունը «հիմնավորել» է այն անհեթեթ փաստարկով, թե իբր ֆաշիստական Գերմանիան նպատակ ունի հարձակվել Թուրքիայի վրա²:

20 դասակարգի զորակոչի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ օրենքի համաձայն այն կիրառվում էր բացառապես ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ³: Թուրքական որոշ աղբյուրներ փաստում են, որ հատուկ ջանքեր է գործադրվել, որպեսզի այդ որոշման մասին տեղեկացվեն միայն համապատասխան ատյանները⁴ և տեղեկության արտահոսք չլինի: Ջորակոչի մասին նախօրոք չի հայտարարվել և այն կատարվել է հապճեպ, ընդամենը մի քանի ժամվա ընթացքում: Ոստիկանները փողոցներում, աշխատավայրերում, տներում ստուգել են անձնագրերը և, երբ հաստատվել է, որ տվյալ անձը պատկանում է ազգային փոքրամասնությունների համայնքներից որևէ մեկին, անմիջապես տարել են, անգամ թույլ չտալով տեղյակ պահել իրենց հարազատներին⁵: Այն տղամարդկանց նկատմամբ, ում ոստիկանները չեն կարողացել հայտնաբերել, հայտարարվել է հետախուզում:

Վերևում նշվեց, որ զորակոչվածները պատկանում էին տարբեր տարիքային խմբերի և ականատեսներ-վերապրողները վկայում են, որ ոստիկանները շատ ուշադրություն չեն դարձրել մարդու տարիքին, քանի որ նրանց հրամայված է եղել հավաքատեղի բերել ոչ մուսուլման ցանկացած տղամարդու: Օրինակ՝ գործարար Վիտալի Հաքբոն, որը երրորդ անգամ է ծառայության գնացել, իր հուշերում պատմում է. *«Մեզ «բարձել» էին ապրանքային վազոններում: Մեր բոլոր կարիքները այս վազոնում էինք հոգում: Մեր մեջ ձերմակ մազերով վաթսուն տարեկան հույներ, հայեր, հրեաներ կային: Սրանք զորակոչվել էին լոկ ոչ մուսուլման լինելու պատճառով: Այս մարդիկ ողբում էին իրենց ճակատագիրը»*⁶:

Ջորակոչի հապճեպ անցկացմանը զուգահեռ կար մեկ այլ հանգամանք ևս, որն անհանգստացնում էր ազգային փոքրամասնությունների

¹ Նույն տեղում:

² Bali R., *Devletin Yahudileri ve “Öteki” Yahudi*, İstanbul, 2004, s. 301.

³ Bali R., “Yirmi Kura İhtiyatlar” olayı, *Tarih ve toplum*, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 4.

⁴ Նույն տեղում, էջ 9:

⁵ Նույն տեղում:

⁶ Bali R., “Yirmi Kura İhtiyatlar” olayı, *Tarih ve toplum*, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 10:

ներկայացուցիչներին. դա այն էր, որ ծառայությունից ազատելու համար առաջարկված կաշառքն անգամ կտրականապես մերժվել էր թուրքական համապատասխան կառույցների կողմից¹:

Հարկ է շեշտել, որ զորակոչված ոչ մուսուլմանները ենթարկվում էին ոչ թե Թուրքիայի պաշտպանության նախարարությանը, այլ հասարակական աշխատանքների նախարարությանը և աշխատում էին տարատեսակ շինարարություններում: Ջորակոչվածներն, ըստ էության, զինվոր չէին, այլ ինչպես ցույց տվեցին զարգացումները, պետության կողմից պատանդ վերցված անվստահելի քաղաքացիներ: Նրանք չեն անցել զինվորական պատրաստվածության դասընթաց-պարապմունքներ, նրանց չի տրվել զենք և անգամ զինվորական համազգեստ. ոչ մուսուլման «զինվորները» կրել են 1939թ. դեկտեմբերի 28-ին Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժից հետո որպես օգնություն Հունաստանի ուղարկած աղբահավաքի սրճագույն հագուստները²: Երվանդ Գոբեյանի տվյալների համաձայն, զինվորական երկարաձիտ կոշիկների փոխարեն նրանց տվել էին տրեխներ³, իսկ Սարգիս Չերքեզյանը նշում է, որ իրենք ստիպված կրել են «թաքունյա» կոչված փայտե սանդալներ⁴: Նկատենք նաև, որ այդ յուրահատուկ համազգեստների շնորհիվ հասարակությունը ևս տարբերակել է զորակոչված ոչ մուսուլմաններին և նրանց կոչել «գյավուր (անհավատ) զինվորներ»⁵:

Ուշաբժան է հատկապես այն հանգամանքը, որ երեք ոչ մուսուլման փոքրամասնություններին թուրքական պետությունը նույն վերաբերմունքը ցույց չի տվել և դա վկայված է տարբեր աղբյուրներում: Այսպես, նշվում է, որ եթե հույները և հրեաները իրենց «ծառայությունը» անցկացնում էին բանակի ծառայողական գումարտակներում, օդանավակայանների շինարարություններում որպես բանվոր, ապա հայերը ընդգրկված էին գերազանցապես հասարակական աշխատանքների գումարտակում⁶: Ուսումնասիրող Ունթաթ Բալին հայերի նկատմամբ այս ընդգծված անվստահությունը պայմանավորում է. «20-րդ դարի սկզբին

¹ Նույն տեղում, էջ 9:

² Նույն տեղում, էջ 5, տե՛ս նաև՝ Koçoğlu Y., *նշված աշխ.*, էջ 40:

³ Bali R., "Yirmi Kura İhtiyatlar" olayı, *Tarih ve toplum*, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 5.

⁴ Çerkezyan S., *նշված աշխ.*, էջ 114:

⁵ Նույն տեղում, էջ 113:

⁶ Bali R., *նշված հոդ.*, էջ 6, տե՛ս նաև՝ Koçoğlu Y., *նշված աշխ.*, էջ 40:

տեղի ունեցած դեպքերով»¹: Սարգիս Չերքեզյանը հետազայում իր հուշերում «զինծառայության» մասին գրում է. «Անունը «զինծառայություն» էր, սակայն ծառայության հետ բացարձակ կապ չուներ, մեզ հավաքում էին աշխատանքային ճամբարներում և աշխատեցնում: Ոչ մուսուլմաններին զենք, նորմալ զինվորական համազգեստ չէին տալիս: Առավոտից երեկո աշխատեցնում էին, անտեսվում էր և՛ ծննան ցուրտն ու ձյունը, և՛ ամռան տապն ու արևը»²:

Ջորակոչված ոչ մուսուլմաններին հիմնականում ուղարկել են Թուրքիայի արևելյան շրջանները. «զինվորներին» ցրում էին Աֆյունբարահիսարում, Սեբաստիայում և Յոզղաթում տեղակայված հավաքատեղիներից³: Բանվորական ճամբարներում, ուր տարել են «զինվորներին», պայմանները եղել են ծայրահեղ վատ, ինչի հետևանքով տարածվել են հիվանդություններ՝ պատճառ դառնալով հաշմանդամության և մահվան: Սարգիս Չերքեզյանը փոխանցում է, որ 12-13 հոգով ապրել են մի վրանում, որտեղ չեն եղել անկողնային պարագաներ և քնել են հողե հատակին⁴: Իսկ հրեա «զինվոր» Յաշար Փաքերը այսպես է նկարագրում ճամբարային պայմանները. «Ես Դենիզլիի Չիվրիլ գավառակում էի: Նախ և առաջ բոլոր ոչ մուսուլմաններին ուղարկել էին Աֆյուն, այնտեղ մի հանձնաժողով մեզ ցրեց: Երբ հասանք Չիվրիլ մեզնից սարսափելի հոտ էր գալիս: Այնտեղ խմում էինք մի ցեխոտ ջրափոսի ջուրը: Դրանով նաև ճաշ էինք պատրաստում: Եվ սկսվեց տիֆի համաճարակ: Հինգ հարյուր հոգի էինք, որոնցից միայն քսան հոգին չէին վարակվել, այդ թվում և ես: Վրանում տասնչորս հոգի էինք, որոնցից տասներկուսը հիվանդ էին»⁵: Չնայած պաշտոնական թվեր չկան այդ «զինծառայության» ընթացքում արձանագրված մահվան դեպքերի մասին, սակայն ականատես-վերապրողների և որոշ աղբյուրների համաձայն դրանք բավական շատ են եղել⁶: Սարգիս Չերքեզյանը պատմում է. «Այդ ընթացքում շատ մարդ մահացավ. ո՞ր մեկն ասեմ, Եփրատում խեղդվածներին ասե՞մ, հիվանդություններից, թոքախտից մահացածներին ասե՞մ...»⁷: Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանն անդրադառնալով այդ թեմային՝

¹ Bali R., “Yirmi Kura İhtiyatlar” olayı, Tarih ve toplum, İstanbul, 1998, cilt 30, sayı 175, s. 6.

² Çerkezian S., նշված աշխ., էջ 113-114:

³ Նույն տեղում, էջ 113:

⁴ Նույն տեղում, էջ 114:

⁵ Bali R., նշված հոդ., էջ 9:

⁶ Koçoğlu Y., նշված աշխ., էջ 40:

⁷ Çerkezian S., նշված աշխ., էջ 120:

փաստում է. «Պայմաններն այնքան ծանր էին, որ նրանցից շատերը մեռան հոգնածությունից ու հյուծախտից, կամ խեղանդամ եղան»¹:

Ավելորդ է անդրադառնալ նաև ճնշիչ հալածանքի մթնոլորտին, որը տիրել է ճամբարներում, որտեղ իրենց տառապանքն են կրել տարբեր խավերի և կրթվածության աստիճանի «զինվորները»: Այս առումով խիստ բնութագրական է Սարգիս Չերքեզյանի փոխանցած հետևյալ փաստը. «Շատ հաճախ առանց որևէ նպատակի փորել էին տալիս մի տեղ և դուրս եկած հողը, խիճը մեկ ուրիշ փոսի մեջ լցնել տալիս: Թուրքերը մեր գլխին որպես վերակացու ավելի շատ մալաթիացի քրդերին էին կարգում: Այդ քսան դասակարգի հավաքվածների մեջ կային քիմիկոսներ, դեղագործներ, մտավորական, կրթված մարդիկ... Սակայն նրանց չէին աշխատեցնում ըստ իրենց կրթական կամ մասնագիտական հնարավորությունների: Օրինակ՝ Արմենակ Քալայջըյան անունով մի բարձրակարգ ինժեներ կար: Քալայջըյանը իմ Ազնիվ մորաքրոջ ծանոթն էր: Առաջին անգամ երբ եկանք Ստամբուլ՝ 1928-ին և մնում էինք մորաքրոջս մոտ, Արմենակ Քալայջըյանը գալիս գնում էր նրանց տուն: Այն ժամանակ Ռոբերտ քոլեջի ուսանող էր: Ծառայության ժամանակ այս մարդու հետ նույն գորամասում էինք: Բարձրակարգ ինժեներ Արմենակ Քալայջըյանին էլ մեզ հետ միասին աշխատեցնում էին հող փորելու գործում. ձեռքին տվել էին սայլակ, հողը լցնում էինք, վերցնում տանում էր մի քիչ այն կողմ թափում էր ու ետ գալիս... Մալաթիացի քուրդ հսկիչները Քալայջըյանի ամեն գնալ գալուց հայիոյելով մահակներով հարվածում էին մեջքին: Սա արդեն սովորական երևույթ էր, որ կրնվում էր ամեն օր մինչև երեկո»²:

Ձորակոչի ընթացքում արձանագրված խիստ ուշագրավ մի երևույթի մասին արժեքավոր տեղեկությունների ենք հանդիպում նույն Սարգիս Չերքեզյանի հուշերում: Ըստ նրա, ոչ մուսուլման փոքրամասնությունների հետ միասին «զինծառայության» են տարել նաև բռնի կրոնափոխ հայերին³: Չերքեզյանը նշում է. «Այդ տարիներին ինչքան կրոնափոխ կար, նրանց էլ Իսմեթ փաշան⁴ բերեց մեզ հետ: Մեր վրաններ բերել էին մեծ մասամբ Մալաթիայի շրջակայքի կրոնափոխ հայերին: Խեղճերը Կարա-

¹ Սիմոնյան Հր., նշված աշխ., էջ 504:

² Çerkezian S., նշված աշխ., էջ 115:

³ Խոսքը հիմնականում Հայոց ցեղասպանության ժամանակ ստիպված իսլամ ընդունած հայերի մասին է:

⁴ Նկատի ունի Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինենյուին (1938-1950թթ.):

պետ օղլու Ահմեթ, Գրիգոր օղլու Հասան և նմանատիպ անուններ ունեին: Քանի որ մուսուլման էին դարձել, ուստի ոչ մի կերպ չէին կարողանում հասկանալ, թե ինչու էին իրենց այստեղ բերել: Այդ մարդիկ շարունակ ասում էին. «Այ մարդ համ մուսուլման ենք, համ էլ մեզ բերեցին այս գյավուրների մեջ»: Մեզ մոտ ուզում էին ձևացնել, թե մուսուլման են: Իսկ ոչ մուսուլման զորակոչվածները, որոնք մեծ մասամբ Ստամբուլից էին, այլևս չդիմանալով կրոնափոխ հայերի մուսուլման երևալու համար արած դերասանություններին՝ նրանց նախատում էին. «Եթե մուսուլման էիր, ապա ի՞նչ գործ ունես այստեղ»: Ի վերջո, այդ մարդիկ ընդունեցին, որ հայ են»¹: Այս հետաքրքիր փաստը ևս մեկ անգամ ապացուցում է, որ 20 դասակարգի զորակոչը ունեցել է հստակ էթնիկ երանգ և նույնիսկ բռնի իսլամացված հայերը թուրքական իշխանությունների համար եղել են վտանգի աղբյուր ու անվստահելի տարր: Սա նաև ցույց է տալիս, որ պետական կառույցները հայերի իսլամացման գործընթացի հենց սկզբից նրանց պահում են ուշադրության կենտրոնում և, ի վերջո, նրանց իրականում չեն համարում մուսուլման:

Խոսելով 20 դասակարգի զինակոչի պատճառների և նպատակների մասին՝ պետք է նշել, որ աղբյուրներում եղած որոշակի փաստերը, ինչպես նաև ականատես-վերապրողների պատմածները գալիս են հաստատելու այն վարկածը, որ, խոշոր առումով, այն էթնիկ զտում էր՝ դրան ածանցյալ այլ խնդիրներով:

Նախ պատճառների մասին. որոշ հեղինակների մոտ կարելի է հանդիպել այն միտքը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ կախված ռազմական գործողությունների ընթացքից, Թուրքիան պետք է պատերազմ սկսեր Խորհրդային Միության դեմ՝ այդ հարցում հետապնդելով հստակ պանթյուրքիստական նպատակներ: Հր. Սիմոնյանը Թուրքիայում տեղի ունեցած նախապատրաստական աշխատանքների մասին նշում է. «Երկրի խորքերից սկսվեց զորքերի տեղաշարժ դեպի Անդրկովկասի սահմանները, կատարվեց պահեստայինների զորահավաք, նոր զորամասերի ձևավորում, բանակի թվաքանակը հասցվեց պատերազմական պայմանների»²: Խորհրդային Միության դեմ ֆաշիստական զորքերի հարձակման լուրը մեծ ոգևորություն է առաջացրել թուրքական քաղաքական վերնախավում:

¹ Çerkezian S., նշված աշխ., էջ 123:

² Սիմոնյան Հր., նշված աշխ., էջ 502:

Հետագայում այդ մասին իր հուշերում անդրադարձել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի այն ժամանակվա պատգամավոր Ֆայիք Ահմեթ Բարութչուն՝ նշելով. «Բոլորը շնորհավորում էին միմյանց: Պատգամավորները ասում էին իրար. «Ձեր տունը թող շնորհավոր լինի»»¹:

Անդրադառնալով նպատակներին՝ հարկ է նկատել, որ առավելապես տարածված է եղել այն տեսակետը, համաձայն որի թուրքական իշխանությունները՝ պատրաստվելով հնարավոր պատերազմի, նախօրոք հավաքել և չեզոքացրել են «5-րդ շարայում» համարվող ազգային փոքրամասնություններին: Ավելին՝ ականատեսվերապրողների վկայությունները, ինչպես նաև որոշակի փաստեր, թույլ են տալիս ասել, որ թուրքական իշխանությունները նպատակ են ունեցել անհրաժեշտության պարագայում ֆիզիկապես ոչնչացնելու ոչ մուսուլման «զինվորներին»: Ականատեսները փոխանցում են, որ «զինծառայության» ժամանակ թուրք սպաները և վերակացուները հաճախ են բացահայտ կամ թաքուն ակնարկել նրանց կոտորելու մասին, հայտարարելով՝ «Ստամբուլը մոռացեք»², «Այս փոսերը ձեր գերեզմաններն են դառնալու»³: Ստամբուլի կայարանում նրանց «ճանապարհելիս» պետական պաշտոնյաներն ասել են. «Հերիք է ինչքան ապրեցիք»⁴: Սարգիս Չերքեզյանն այս ամենում կարևոր է համարում նաև Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինենյուի բացահայտ հակահայկական դիրքորոշումը և նշում. «Նա (Իսմեթ Ինենյուն Ռ.Մ.) շարունակում էր այն քայլերը, որոնք ժամանակին արել էր երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, պակասում էր միայն կոտորածը, այն էլ չհամարձակվեց անել, քանի որ հարմար առիթ չեղավ»⁵: Ինչպես շատերը, այնպես էլ Չերքեզյանը այս հարցում վճռորոշ է համարում Ստալինգրադի ճակատամարտի ելքը. եթե գերմանական բանակը հաղթեր ճակատամարտում, ապա թուրքական իշխանությունները կիրականացնեին ոչ մուսուլման բնակչության կոտորած:

Բացի այդ դեպքերի ականատես-վերապրողների վկայություններից, կա թուրքական իշխանությունների իրական նպատակը բացահայտող

¹ Barutçu F. A., *Siyasi Hatıralar*, İstanbul, 2001, c. 1, s. 494, *YâdÜYÂ* ı»'ë Y'3", Hür A., *Yirmi Kur'a İhtiyatlar Olayı*, Ağos, 30/05, 2008.

² Koçoğlu Y., *նշված աշխ.*, էջ 40:

³ Bali R., *նշված հոդ.*, էջ 15:

⁴ Çerkezyan S., *նշված աշխ.*, էջ 126:

⁵ Նույն տեղում, էջ 125:

շատ կարևոր մեկ այլ հայտարարություն ևս, որն արվել 1955թ. Թուրքիայի Ազգային մեծ ժողովում այն ժամանակվա վարչապետ Ադնան Մենդերեսի կողմից: 1955թ. սեպտեմբերի 6-7-ին թուրքական իշխանությունները կազմակերպել են Ստամբուլի, Իզմիրի հույն և հայ բնակչության կոտորած ու թալան: Դեպքերից հետո թուրքական խորհրդարանում իշխող Դեմոկրատական և արդեն ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցությունների միջև սկսվում է փոխադարձ մեղադրանքների շղթա ու ի պատասխան ԺՀԿ նախագահ Իսմեթ Ինենյուի քննադատական ելույթների՝ վարչապետ Ադնան Մենդերեսը խորհրդարանի ամբիոնից հայտարարում է. *«Առաջին հերթին, դեմոկրատների համար շատ հեշտ է հիշեցնել Ստամբուլի դժբախտ ոչ մուսուլման տարրերին այն մասին, թե ո՞վ է պարոն Իսմեթ Ինենյուն, ի՞նչ է ներկայացնում իրենից ԺՀԿ-ի ղեկավարությունը, հիշելով դրա համար «Ունեցվածքի հարկի» սարսափելի էջերը, քրիստոնյաների հավաքը՝ զինակոչի անվան տակ պատերազմի տարիներին նրանց սպանդանոց ուղարկելու համար: Եթե այդ օրերին նացիստական Գերմանիան չպարտվեր Ստալինգրադում, ապա անհապաղ գործի մեջ կդրվեր Իսմեթ Ինենյուի ծրագիրը, որի համաձայն պետք է ոչնչացվեին հայ, հույն, հրեա 18-60 տարեկան տղամարդիկ այնպես, ինչպես ոչնչացվել են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ զինծառայողները բանվորական գումարտակներում իրենց ձեռքերով փորելով իրենց գերեզմանները (ընդգծումը մերն է Ռ.Մ.): Թուրքիայի և հատկապես Ստամբուլի բնակչությանը լավ հայտնի է Իսմեթ Ինենյուի և իր ժողովրդական կուսակցության կատաղի ատելությունը քրիստոնյաների և ոչ թուրքերի նկատմամբ»¹:*

Ավելորդ չէ հավելել նաև, որ ազգային փոքրամասնությունների շրջանում տարածված է եղել այն միտքը, որ ոչ մուսուլման «զինվորներին» ոչնչացնելու որոշմանը, իբրև թե, դեմ է եղել Թուրքիայի գլխավոր շտաբի այն ժամանակվա պետ մարշալ Ֆեզի Չաքմաքը² և այդ պատճառով նրա հանդեպ շատ ոչ մուսուլմաններ երախտագիտորեն են տրամադրված³:

Ոչ մուսուլման տղամարդկանց ֆիզիկական ոչնչացումից բացի, ենթադրվում է, որ թուրքական իշխանություններն ունեցել նաև տնտեսական կյանքից նրանց մեկուսացնելու և հեռացնելու նպատակ:

¹ Аванесов С., *Նշված աշխ.*, էջ 161-162:

² Koçoğlu Y., *Նշված աշխ.*, էջ 40:

³ Bali R., *Նշված հոդ.*, էջ 15:

Վերլուծաբան Ռըդվան Աքարը մեջբերում է այս վարկածը հաստատող տարբեր աղբյուրներ և հավելում, որ ոչ մուսուլմանների լուրջ դիրքերը առևտրի ոլորտում մտահոգում էր թուրքական իշխանություններին: Տնտեսական կյանքից ազգային փոքրամասնություններին այս կերպ հեռացնելու միտքը բավական իրատեսական է թվում նաև այն առումով, որ 20 դասակարգի գորակոչի ավարտից (1942թ. հուլիսի 27¹) կարճ ժամանակ անց՝ 1942թ. նոյեմբերի 11-ին Թուրքիայի Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ունեցվածքի հարկի» մասին օրենքը, որը համարվում է ոչ մուսուլմանների տնտեսական ցեղասպանություն²:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ հանրապետական Թուրքիայում 20-րդ դարի կեսերին ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ դրսևորվել է ծայրահեղ խտրական վերաբերմունք և անգամ գորակոչն ունեցել է էթնիկ բնույթ: Թուրքական պետական մեքենան իր բոլոր կառույցներով լծված է եղել միատարր, այն է՝ թուրքական պետություն ստեղծելու գաղափարի իրականացման գործին, որի ձանապարհին ազգային փոքրամասնությունների դեմևս պահպանված բեկորները դարձել են առաջնային թիրախներ: Փաստերը ցույց են տալիս, որ հանրապետական Թուրքիայում մինչև 20-րդ դարի կեսերը մեծապես շարունակվել է երիտթուրքական գործելակերպը. սրա պատճառներից առաջինը պետական շարունակական քաղաքականության բնույթն ու էությունն էր, սակայն չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակվա թուրքական քաղաքական վերնախավի մեծագույն մասը երիտթուրքական կուսակցության նախկին անդամներ ու ակտիվ գործիչներ էին: Եթե այսօր Օսմանյան կայսրության հատկապես 19-20-րդ դարերի քաղաքականության ուսումնասիրությունը թույլ է տալիս վստահաբար կիրառել «ցեղասպան պետություն» հիմնավորված եզրը³, ապա ազգային փոքրամասնությունների նկատմամբ Թուրքիայի Հանրապետության 20-րդ դարի հատկապես 30-60-ական թվականների քաղաքականության ուսումնասիրությունը հիմք է տալիս կիրառել «այլամերժ պետություն» եզրը: 20 դասակարգի գորակոչը, ինչպես նաև

¹ Bali R., *նշված հոդ.*, էջ 16:

² Այդ մասին մանրամասն տե՛ս, Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսաության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2008, հ. 5, էջ 127-143:

³ Այդ մասին տե՛ս, Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009, էջ 32-33:

նմանատիպ այլ փաստեր ապացուցում են թուրքական այլամերժ քաղաքականության շարունակական բնույթը:

Призыв «двадцати классов» в Турецкой Республике (1941-1942 гг.)

Рубен Мелконян

Резюме

Сформированная в результате Кемалистского движения Турецкая Республика также переняла и продолжила политику нетерпимости и дискриминации по отношению к своим гражданам немусульманам. Из проявлений дискриминационной политики Республиканской Турции в отношении национальных меньшинств в XX в. наименее изученным является так называемый призыв «двадцати классов», проведенный в отношении немусульманских граждан в 1941 г.. В разгар Второй мировой войны турецкие власти наспех призвали в армию большинство совершеннолетних мужчин, представителей нацменьшинств. На самом деле этот призыв был целенаправленной этнической чисткой со всеми производными от нее проблемами. Турецкая государственная машина и все ее структуры были вовлечены в дело притворения в жизнь идеи создания однородного, то есть турецкого государства, и еще сохранившиеся осколки национальных меньшинств стали первичными мишенями на этом пути.

“20 classes” draft in the Republic of Turkey (1941-1942)

Ruben Melkonyan

Summary

The Republic of Turkey, established as a result of Kemalist movement, adopted and continued the policy of intolerance and discrimination towards its non-Muslim citizens. The least investigated problem among the manifestations of Turkish persecution policy against national minorities in the XX century is the so-called “20 classes” draft, conducted in 1941 against non-Muslim Turkish citizens. At the height of the World War II Turkish authorities conscripted the majority of adult male representatives of

national minorities. This draft was a real ethnic purge with all problems derivative to it. Turkish state apparatus with all its structures was involved in the process of realization of the homogeneous that is Turkish state creation idea and still preserved debris of non-Muslim minorities became the primary targets on its way.

ГЕНЕЗИС НЫНЕСНЕЙ СТАДИИ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО ПРОТИВОСТОЯНИЯ, ЕГО ДИНАМИКА И ОСОБЕННОСТИ*

Давид Карабекян

АрГУ

Азербайджано-карабахский конфликт возник в начале двадцатого века после распада Российской империи и образования на Юге Закавказья независимых государств: Армянской Республики, Азербайджанской Республики, а также Армянский Национальный Совет и правительство Нагорного Карабаха.

Он является одним из наиболее сложных, затяжных и кровопролитных конфликтов на постсоветском пространстве. Волевое решение Кавказского бюро Российской Коммунистической Партии (большевики) от 5 июля 1921г. о передаче Нагорного Карабаха Азербайджану и образовании для армянского населения Нагорного Карабаха автономной области с широкими полномочиями, якобы “в интересах национального мира между армянами и мусульманами», а также Декрет Центрального Исполнительного Комитета Азерб.ССР «Об образовании Нагорно-Карабахской Области (НКАО)» (7.07.1923г.), будучи неправовыми по форме и содержанию, противоречили ранее принятым руководствами Советской Армении и Советского Азербайджана решениям о признании Нахичевани, Зангезура, Нагорного Карабаха частями Советской Армении. Они также входили вразрез с положением постановления Кавбюро РКП(б) (4. 07. 1921г.) о признании права на самоопределение населения НК. Подчинение НК Азербайджану явилось одной из причин многочисленных страданий коренного армянского населения Нагорного Карабаха и всего Восточного Закавказья. Как отмечал председатель Совета Народных Комиссаров Советской Армении А.Мясникян подчинение исконно армянского края, подавляющее большинство которого составляет

армяне недопустимо. И. Сталин и председатель правительства Азербайджана Н.Нариманов оказывали давление и пытались подкупить руководителей Армении, Грузии и членов Кавбюро, чтобы заставить их принять решение о подчинении Нагорного Карабаха Азербайджану¹. Участники заседания, проголосовавшие против подчинения Нагорного Карабаха Азербайджану, в последующем были репрессированы.

Угрожая и увещевая участников заседания Кавбюро, Сталин подчеркивал, что даже если они не проголосуют за решение о подчинении НК Азербайджану, обсуждение Карабахского вопроса будет перенесено в политбюро РКП(б), которое примет данное решение. Примечательно, что глава правительства Армении А.Мясникян, вместе с рядом руководителей республики, трагически погиб в авиакатастрофе в 1925г..

В течение 70 лет пребывания в административном подчинении Азербайджана армянство Нагорного Карабаха и всего Восточного Закавказья являлось жертвой политики выживания и ассимиляции, проводимой его властями. Все это время, армяне Нагорного Карабаха и народ Армении не мирились с исторической и политической несправделивостью. Представители властей, известные деятели общественности и рядовые граждане Армении и жители Нагорного Карабаха периодически обращались в органы власти СССР с ходатайствами об устранении исторической несправедливости, приводя доказательства политики выживания и ассимиляции населения края, проводимой азербайджанскими властями, и свидетельства крайне негативных последствий насильственного присоединения армянонаселенного Нагорного Карабаха к Азербайджану во всех сферах (экономике, культуре, образовании и др.) жизни края.

Оценки причин трагической судьбы армян Карабаха и других районов, подчиненных Азербайджану, данные передовыми представителями армянской интеллигенции, во многом оказались созвучны оценкам передовых общественных деятелей СССР, известного ученого и правозащитника А.Сахарова, а также группы передовых представителей русской интеллигенции, образовавших Комитет Российской Интеллигенции Карабах (КРИК) и вошедших в его состав.

*Հոդվածը ընդունվել է 27.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրդՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնը:

¹ Айрапетян Г. "Последний спаррапет" . – М.: КРОН-ПРЕСС, 1995, с. 83

В качестве факторов, в наибольшей степени повлиявших на принятие Кавбюро решения о подчинении НК, Азербайджану указывались: а) интервенция Турции в Закавказье в 1918-1920гг., б) приход к власти в Азербайджане националистических сил во главе с партией «Мусават», в) поддержка руководством большевистской России кемалистского правительства Турции, в том числе и в Карабахском вопросе, г) шантаж и давление со стороны руководства РКП(б) и Азербайджана на членов Кавбюро.

В Декрете Совета Народных Коммиссаров о “Турецкой Армении”, в котором большевистское правительство признавало за армянами оккупированных Россией территорий Западной Армении право на самоопределение, вплоть до полной независимости (29 декабря 1917г.)¹, а также указывалось, что после отвода русских войск Совет Депутатов армянского народа, избранный на демократических началах, должен был образовать Временное Народное Правление “Турецкой Армении”. В Примечании документа говорится: “Географические границы “Турецкой Армении” определяются демократически избранными представителями армянского народа по согласованию с демократически избранными представителями смежных и спорных (мусульманских и иных) округов совместно с Чрезвычайным Временным Комиссаром по делам Кавказа”². Им являлся Степан Шаумян. Ему также поручалось обеспечить выполнение.

Остальных пунктов Декрета: о беспрепятственном возвращении армян, насильственно выселенных во время войны турецкими властями “в глубь Турции” и На сайте армян-эмигрантов, “рассеянных по всему миру” в пределы “Турецкой Армении”, а также согласовать сроки вывода войск из Турецкой Армении³. На беспрепятственном возвращении армян “в пределы Турецкой Армении” Совет Народных Коммиссаров обязался настаивать на мирных переговорах с турецким правительством. Хотя уже в марте 1918г. Россия, согласно Брест-Литовскому договору, уступила Турции Западную и значительную часть Восточной Армении.

Таким образом, площадь территории, на которой в мае 1918г. была восстановлена армянская государственность, составляла всего 10 ты-

¹ www.genocide.ru

² 3. Правда о Нагорном Карабахе. Документальный сборник. Изд-во “Арцах” Степанакерт 1989г., стр. 33-34

³ www.genocide.ru

сяч кв.км.¹. Следует отметить, что практически до заключения Мудросского перемирия (октябрь 1918г.) между руководителями стран Антанты и Турцией турецкие войска совместно с силами, подчиненными азербайджанским мусаватистам, совершали акты массового насилия в отношении армян в различных частях Закавказья – в Джавахке, в Республике Армения, Зангезуре, Нахичевани, Нагорном Карабахе, Азербайджане. Только в результате резни, устроенной в сентябре 1918г., в Баку было уничтожено и изгнано более 30 тысяч армян.

Единственным способом выживания армян стала организованная и самоотверженная самооборона. И хотя державы-победительницы обязали Турцию вывести войска из Закавказья, а Верховный совет стран-членов Антанты в январе 1919г. принял решение об отделении от Османской империи Армении, Сирии, Палестины, Месопотамии (Ирак), «однако в дальнейшем державы Антанты не предприняли серьезных шагов для претворения в жизнь тех пунктов Мудросского договора, которые могли способствовать справедливому решению Армянского вопроса. Сформированное в Анкаре новое турецкое правительство во главе с М.Кемалем отвергло Мудросское соглашение и добилось его фактической отмены»².

На переговорах между делегациями Республики Армении и РСФСР в Тифлисе (август 1920г.) и подписанном ими Соглашении, как сказано в статье «Россия и Армянский вопрос», «говорилось лишь о признании государственности, созданной в Восточной Армении и об урегулировании, относящихся к ней территориальных вопросов»³. Там же констатировалось, что 28 октября делегации Советской России и Республики Армения подписали в Ереване проект мирного договора, согласно которому признавалась независимость Республики Армения, Турция отводила войска к границам 1914г., Зангезур и Нахичевань фактически оставались в составе Советской Армении. Россия становилась посредником в решении вопросов о Западной Армении.

Причиной коренного изменения положения считается тяжелое поражение, понесенное войсками Республики Армения осенью 1920г., после которого правительство Армении подписало с РСФСР договор (2

¹ там же

² www.genocide.ru

³ там же

декабря 1920г.), по которому уступало на определенных условиях власть в стране большевикам¹.

Согласно договору, заключенному между Турцией и Советской Россией 16 марта 1921г. в Москве под контроль Турции переходили Карс-кая область и ряд обширных районов Восточной Армении, а под контроль Советского Азербайджана-«Нахичеваньский уезд и большая часть Шарур-Даралагезского уезда». РСФСР добросовестно выполнила свои обязательства перед Турцией - «предпринять шаги в отношении закавказских республик для обязательного признания этими республиками в договорах, которые будут заключены ими с Турцией, статей Настоящего договора их касающихся». Они вошли в условия четырехстороннего договора, подписанного представителями Турции, Грузии, Армении, Азербайджана при участии представителя РСФСР в Карсе 13 октября 1921г. .

Члены делегации Закавказья, представляющие наиболее влиятельные политические силы будущей Азербайджанской Демократической Республики, и до, и после распада Закавказского сейма добивались присоединения мусульманской части Южного Кавказа к Турции, и отказались от своего намерения только после того, как Турция выступила против этого. Воспользовавшись хаосом, турки продолжили интервенцию в Закавказье и навязали более тяжелые условия примирения Армении и Грузии. Согласно турко-азербайджанским планам в Закавказье не только не должно было существовать армянского государства, но и армян. Лишь героическая борьба армян и победы, одержанные под Сардарapatом и Баш-Апараном, по заверением высокопоставленных турецких военных, в том числе командующего турецкой армией Вехиб-паши, заставили их признать право армян на государственность и потребовать от руководителей делегации своего государства в Батуми ускорить заключение мирного договора с Арменией, ознаменовавшее юридическое признание Армянской Республики Османской империей.²

В полной соответствии с турецкими планами, в 1991–1994 гг. новосозданная армянская государственность подверглась азербайджанской агрессии по всей протяжённости своих восточных границ.

¹ там же

² Արդյան Ս., Արամ Մանուկյան. Կյանքը եւ գործունեությունը: (Ազատագրական շարժման եւ անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երեւան, 2005, էջ 200:

Армении были жизненно необходимы стабильные гарантии безопасности и прежде всего – обороняемые границы. Хотя и ценой огромных жертв, но эту задачу частично удалось решить путём освобождения определенной части Родины.

Начиная с 1994 года, после достигнутой армянами победы в освободительной войне, Турция всячески поощряет милитаризацию и военную истерию в Азербайджане, выступая в качестве непосредственного участника, старшего советчика, зачастую – инициатора и руководителя всех, осуществляемых против Армении, совместных операций¹.

В статье «Геноцид армян и современность» Ю.Барсегов пишет: Большевистское правительство России знало, что претензии советизированного Азербайджана на Карабах и другие армянские территории неизбежно сопряжены с продолжением геноцида армян. Говоря о претензиях Азербайджана «на огромные округа, принадлежавшие Армянской республике» на Карабах, Зангезур и Шаруро-Даралагезский уезд вместе с Нахичеванью, Ордубадам и Джульфой, наркоминдел Чичерин 29 июня 1920 г. писал Ленину, что занятие этих территорий татарскими частями «абсолютно не приемлемо и было бы величайшим преступлением». Отвергал он и передачу этих территорий Азербайджану в виде компенсации за советизацию как «совершенно недопустимую» и «роковую ошибку». Тем не менее, Азербайджану были переданы Нахичеванский и Шарур-Даралагезский уезды по договору РСФСР с кемалистской Турцией в качестве «протектората» и Нагорный Карабах по решению Кавказского бюро ЦК РКП/б под условием «широкой автономии». Таким образом, традиционная политика этнической чистки армянских территорий от коренного армянского населения, осуществлявшаяся совместно с турецкими вооруженными силами в ходе двух вторжений Турции в Закавказье в 1918 и 1920 гг., продолжалась национал-коммунистами в условиях советского режима с использованием возможностей тоталитарного режима.

В разделе «Пособники и соучастники» вышеуказанной статьи «Геноцид армян и современность» профессор Барсегов рассматривает попытки Великобритании и России добиться своих целей путем

¹ <http://blog.ararat-center.org/?p=180>.

сговора с Турцией и уступок в Армянском сквозь призму соперничества двух форм империализма:

«Осуществление геноцида армян на протяжении почти полувека было возможно только потому, что у геноцидного турецкого государства всегда были покровители из числа соперничавших великих держав. До и в период 1-ой Мировой войны это в основном была Германия, противостоявшая державам будущей Антанты. На этом общем фоне проявлялись и менее значимые, но острые противоречия между самими державами Антанты. В период послевоенного мирного урегулирования главным покровителем геноцидного государства стала Англия.

Характер противоречий кардинально изменился с выходом на международную арену Советской России и появлением глобального антагонистического противостояния социал-империализма и классического западного империализма. Ведущая держава Антанты Великобритания вступила в сговор с вчерашним противником с целью направить турецкий национализм в его самой агрессивной форме пантюркизма против советского государства.

За обещанные политические услуги турецких националистов англичане расплачивались сокращением размеров территории Армении и заигрыванием в вопросе Карабаха с военно-политическим союзником турок – Азербайджаном.

Уверовав, что с помощью турок можно переиграть Запад, большевистское правительство Советской России объединилось в военно-политический союз с противником России в Мировой войне Турцией в лице никем не признававшегося кемалистского правительства и с ее политическим придатком теперь уже советским Азербайджаном. Платили им тоже за счет армян, представляя этот доведенный до полусмерти народ как агентов “мирового империализма”. Отсюда все последующие акты политической сделки большевиков с турецкими националистами: и прежде всего заключение Московского договора 1921 года.»¹

В целом, вычленив из Армянского вопроса, а точнее, отделив от проблемы создания Единой и Независимой Армении на территориях так называемой турецкой (западной) и восточной Армении проблемы Зангезура, Нахичевани и Нагорного Карабаха с одной стороны, и проблемы выхода Армении к Черному и Средиземному морям – с другой,

¹ <http://armenianhouse.org/barsegov/genocide.ru/nowdays.ru.html>

державы Антанты и большевистская Россия, способствовали продолжению политики геноцида Турцией и Азербайджаном, искажению истинного содержания Армянского вопроса и его составляющих. Как следствие, сценарий событий в Турецкой Армении практически полностью повторился в Восточной Армении – сначала был предан забвению вопрос о судьбе части армянского народа, проживающего на данной территории, и при этом замалчивается вопрос об ответственности виновных, восстановлении прав и компенсации ущерба жертвам массового насилия. Затем всплывали факты о насильственных действиях армян по отношению к тюркоязычному населению, инициировались переговоры, в которых соответствующий вопрос ставился бы в наиболее выгодном для их инициатора свете. Ярким примером сказанного является трагическая судьба и вопрос об армянах северной части Карабаха, которые только в 1918 – 1921гг. несколько раз становились жертвами турецких и азербайджанских погромов. Одним из наиболее драматичных эпизодов из событий указанного периода является армянский погром в Гяндже.

В целом судьба армян Закавказья являет собой еще один пример турко-большевистско-британского сговора.

В действиях армянских большевиков нетрудно обнаружить “руку Москву”, которая не только инициировала возникновение конфликта между “Дашнакцун” и большевиками, но и начала проводить политику военного коммунизма, вызвавшую недовольство у населения и углубившую раскол в армянском обществе, и очевидно, способствовавшую формированию других факторов, приведших к новым, тяжелым для армян потерям ¹.

В результате политических манипуляций Армения в качестве компромисса получила Зангезур, часть которого была присоединена к Нахичевани, а другая - к собственно Азербайджану, уступив за это Карабах, Нахичевань и ряд других исконно армянских территорий. В своей монографии “Геополитика Кавказа” известный российский политолог К.Гаджиев приводит слова лидера белого движения А.Деникина из “Очерков русской смуты”: “Все в Азербайджанской республике было искусственным, “не настоящим”, начиная с названия, взятого взаимнообразно у одной из провинций Персии. Искусственная территория, об-

¹ История Армении (Краткий очерк) Издание второе, дополненное – Хачикян Э.А.- Ереван, 2009, стр. 184 – 189.

нимавшая лезгинские Закаталы, армяно-татарскую Бакинскую и Елисаветопольскую губернии и русскую Мугань, и объединенная турецкой политикой в качестве форпоста пантюркизма и панисламизма на Кавказе. Искусственная государственность. Наконец, искусственно держалось и азербайджанское правительство: первоначально – волею Нури-Паши, потом генерала Томпсона и в дальнейшем – просто по инерции”¹. Возможно, если бы генерал дожил до дня, когда Иосифа Сталина, прибывшего в Баку “на своем бронепоезде” восторженно встречали вчерашние кемалисты, младотурки, мусаватисты, в одно мгновение ставшие большевиками, он бы точно узнал, чьей еще воле подчинялось(следовало) азербайджанское правительство.

Все тенденции развития конфликта и проблемы Нагорного Карабаха, сформировавшиеся в 1918-1920гг., в полной мере вновь проявились после начала нынешнего этапа Карабахского движения. Влиятельные державы вновь не желают признавать тот факт, что, как говорил Г.Нжде, армянам вместо процветания и безопасной жизни на Родине приходится на ее краешке (1/12 от всей территории, занимаемой Восточной и Западной Арменией до 1914г.) влачить тяжелое, полное опасностей существование, причем во враждебном окружении. Под Родиной он понимал единую Армению, охватывающую исконно-армянские земли как Западной, так и Восточной Армении.

Вновь противники армянского народа пытаются использовать “пятую колонну”, расчленив Армянский вопрос на различные составляющие, зачастую противопоставляемые друг другу, и разыграть “русскую карту”.

Они не признают и не желают признавать того, что проблема НК и других, аннексированных армянских территорий, может быть справедливо решена только в контексте разрешения Армянского вопроса и деколонизации всех армянских территорий Западной и Восточной Армении.

Нынешняя стадия азербайджано-карабахского конфликта и ее особенности

Нынешний этап Карабахского движения начался не в 1988, и даже не в 1987 году, а в 1985 – 1986гг.. При этом руководство Советского Союза было хорошо осведомлено о целях и задачах Движения,

¹ История Армении, (Краткий очерк), с. 102

истоках и содержании Карабахской проблемы, положении армян НКАО и других подчиненных Азербайджану территорий и других вопросах, связанных с Карабахским движением и проблемой.

События в Чардахлу декабря 1987г. должны были рассеять все иллюзии относительно первопричин межнациональной напряженности и ее возможного перерастания в массовые столкновения между армянами и азербайджанцами, которые М.Горбачев в ходе встречи с армянскими писателями и общественными деятелями З.Балаяном и С.Капутикян, состоявшейся 26 февраля 1988г., назвал “импульсивными действиями”. (Сквозь призму всего произошедшего в течение 23 лет в Нагорном Карабахе и регионе конфликта в целом отчетливее становится зловещий контекст следующих слов Генерального Секретаря ЦК КПСС: “То, что происходит вокруг Нагорного Карабаха – это просто удар в спину. Азербайджанцев удержать непросто. В стране несколько десятков потенциальных источников межнациональных столкновений. Карабахский прецедент может спровоцировать на импульсивные действия тех, кто ранее не осмеливался прибегать к насилию”)¹

Ныне даже теоретически нельзя допустить того, что действия руководства СССР, которые привели к началу азербайджано-карабахского конфликта, были обусловлены, как якобы выяснилось позже, недостаточной информированностью или искаженным представлением о сути Карабахского вопроса, ситуации в Нагорном Карабахе и других армянонаселенных территориях Азербайджана. Об этом красноречиво свидетельствует заявление ныне покойного президента Азербайджана Г.Алиева, возглавлявшего КГБ и СССР, бывшего члена Политбюро ЦК КПСС (высшего эшелона партийного руководства) и первого зам.председателя правительства Советского Союза.

Во время встречи в Нахичевани с американским журналистом Томасом Гольцем Алиев говорит о виновных в событиях “черного января”. “Это были КГБ Центра и Азербайджана, а также все руководство Азербайджана. Все они причастны к нападениям на армян 12-го, 13-го, 14-го, а затем и 20-го января, когда советские войска штурмовали Баку. Это был план Москвы, в осуществлении которого принимало участие также азербайджанское руководство – Везилов и Мута-

¹ Акопян Т., *Карабахский дневник «Зеленое и черное, или ни войны – ни мира»*, Ереван, 2010, с.33.

либов”.¹ Примечательно, что событий в столице Азербайджана января 1991г. М.Горбачев по меньшей мере не опроверг, а если быть точнее, косвенно подтвердил слова Г.Алиева. Признав, что советские войска были в январе 1990г. были введены в Баку по его приказу, первый и последний президент СССР заявил: “События в Баку стали неуправляемыми, Верховный Совет и Компартия парализованы, разрушена двухсоткилометровая государственная граница, совершались нападения на местные органы власти”

Обратим внимание на то, что приостановление армянских погромов не указывается им даже в числе третьестепенных задач. В том же источнике говорится о том, что 22 – 23 ноября армянские погромы начались в Баку, Кировобаде, Шемахи, Шамхоре, “из городов и сел Азербайджана изгонялись последние армяне”². Апофеозом стали известные события в Баку 13-20 января. Вышеизложенные факты, а также то, что процессы, аналогичные происходящим в Закавказье почти одновременно, происходили и в других регионах СССР показывают, что в этот момент страна переживала тяжелый системный кризис, обострение, углубление и расширение масштабов которого вероятно было спровоцировано внешними силами.

В Открытом письме всемирно известного советского ученого и правозащитника Андрея Сахарова Генеральному секретарю ЦК КПСС М.С.Горбачеву (21 марта 1988г.) говорится...”Я решил обратиться по двум наиболее острым в настоящее время вопросам: о возвращении крымских татар в Крым и об исправлении исторической несправедливости в отношении к одному из народов нашей страны. Автономная область Нагорного Карабаха была присоединена к Азербайджанской ССР в 1923г. В настоящее время примерно 75% населения составляют армяне, остальные курды, русские, азербайджанцы. Можно предполагать, что присоединение Нагорного Карабаха к Азербайджану было произведено по инициативе Сталина. В результате внутренних и внешних комбинаций того времени, вопреки воле населения Карабаха, вопреки предыдущим заявлениям Сталина и руководства Азербайджана, на протяжении последующих десятилетий оно явилось постоянным источником межнациональных трений. Вплоть до самого последнего

¹ там же, с.61.

² Акопян Т., *Карабахский дневник «Зеленое и черное, или ни войны – ни мира»*, Ереван, 2010, с.91

времени имеют место многочисленные факты национальной дискриминации, диктата, ущемления армянской культуры»¹...

За период пребывания в составе Азербайджана площадь территории, как и доля армянского населения, автономии постоянно сокращалась.

В другом месте письма отмечается: «К сожалению, приходится констатировать, что уже не в первый раз в обострившейся ситуации гласность оказывается подавленной как раз тогда, когда она особенно нужна. Все это не могло не вызвать соответствующей реакции. В Ереване, в Нагорном Карабахе и других местах произошли забастовки и новые демонстрации, которые носили законный мирный характер. Но в Азербайджане в последние дни февраля произошли события совсем другого рода: трагические, кровавые, вольно или невольно напоминающие 1915г.»²

Важность вышеназванных замечаний заключается в следующем: а) они позволяют установить точные хронологические рамки противостояния; б) определить содержание конфликта и ее аспектов; в) точно оценить его последствия и пути урегулирования. Началом конфликта следует считать не 1988, а 1918г., поскольку за весь последующий период ни Сторонам, ни Посредникам не удалось найти взаимоприемлемого урегулирования конфликта, а также добиться устранения последствий противостояния.

Более того, положение армянства как на территориях, включенных в границы Автономной области Нагорного Карабаха, так и оставшихся за ее пределами усугубилось. Сделаем несколько важных пояснений: географически, помимо районов, включенных в границы автономной области (Мардакертского, Аскеранского, Шушинского, Гадрутского и Шаумяновского, в 1921г., выведенного из состава автономии) в Нагорный Карабах также входили Лачинский, Кельбаджарский, Джебраильский, Кетабекский(полностью) и Шамхорский, Ханларский, Таузский и Корягинский районы(частично). Последний в 1959г. был переименован в Физулинский³.

Тот факт, что решение о подчинении НК Азербайджану крайне негативно отразилось на положении населения и его развитии, прямо или

¹ www.genocide.ru

² www.genocide.ru

³ <http://nkr.am/rus/mid/chron.htm>

косвенно явившись причиной межнациональной напряженности и исхода армянского населения, был признан также союзными властями. В сборнике документов и статей, посвященных возникновению проблемы Нагорного Карабаха, “Карабахский вопрос: истоки и сущность в документах и фактах” приводится выписка из протокола заседания Президиума Совета Министров СССР от 23 ноября 1977г. В ней констатируется: “Вследствие ряда исторических обстоятельств несколько десятилетий назад Нагорный Карабах был искусственно присоединен к Азербайджану. При этом не были учтены историческое прошлое области, ее национальный состав, желание народа и экономические интересы. Прошли десятилетия, и вопрос о Карабахе продолжает склоняться, вызывать беспокойство и моменты недоброжелательности между двумя соседними народами, связанными вековой дружбой. Надо присоединить Нагорный Карабах (“Арцах” по-армянски) к Армянской ССР, и тогда все станет на свои законные места”¹...

Власти СССР предпочли сохранить статуса-кво в Карабахе и других регионах, в которых имелись межнациональные проблемы. В принятой в 1978г. Конституции СССР появилась статья, по которой изменение границ союзной республики могло производиться только с ее согласия. А изменение границ между союзными республиками могло производиться только с их обоюдного согласия. Следует отметить, что вторая половина 1970-х, называемая “периодом застоя”, характеризовалась стремлением консервативного руководства СССР избегать глубоких перемен во всех сферах общественной жизни, тем более, что пожилые руководители страны, вероятно, не могли или не желали их проведения. А допустить политическую альтернативу так называемой генеральной линии партии, или доверить проведение реформ сравнительно молодым политикам, руководство правящей Компартии тоталитарной СССР не могло.

Межнациональные противоречия и так называемый национальный вопрос, которые, вопреки советской пропаганде, не были преодолены пролетарским интернационализмом и решены установлением социализма в СССР и которым было предназначено стать средством удержания влияния союзного центра, стали бомбой замедленного действия для общественно-политического строя и единства одного из самых

¹ *Нагорно-Карабахская Республика: Путь к вершинам., Степанакерт, 2001, с.61.*

мощных государств. В 1980-е годы советская пропаганда вынужденно признавала наличие в СССР межнациональных проблем и стремление отдельных национальных групп к расширению самостоятельности. В учебниках по обществоведению приводились слова западных идеологов о том, что социализм в СССР можно уничтожить, растащив по национальным квартирам.

Примечательно, что первая реакция со стороны союзных властей на начало Карабахского движения была в духе марксистско-ленинской и сталинской идеологии. Национальный вопрос считался порождением политики эксплуататорского строя. Он неизбежно должен быть решен после победы социалистической революции и установления социалистического строя. Посему заявлялось, что в СССР национальных проблем не существует. Даже признав существование серьезных проблем, сложившихся во всех сферах общественной жизни Нагорного Карабаха, правительство и ЦК Компартии СССР, предпочли провести комплекс социально-экономических мер по их решению, направив на эти цели огромную, в масштабах населения, территории и хозяйственного потенциала НК сумму – 400 000 000 рублей. В книге «Нагорно-Карабахская республика: Путь к вершинам» постановление ЦК КПСС и Совета Министров СССР «О мерах по ускорению социально-экономического развития Нагорно-Карабахской Области Азербайджанской ССР в 1988-1995г.» названо «фактически игнорирующим требование карабахцев о воссоединении с Арменией».¹

В своем выступлении на заседании Президиума Верховного Совета 18 июля 1988г. первый секретарь Нагорно-Карабахского Обкома КП Г.Погосян подчеркнул, что население Нагорного Карабаха не может быть удовлетворено одними лишь материальными благами в ущерб национально-культурному и духовному развитию. Не случайно, что сотни тысяч карабахцев вынуждены жить за пределами области. «Уж не от хорошей ли жизни, они покинули родные очаги? Несправедливое решение проблемы Нагорного Карабаха, как показывает жизнь, непременно приведет к выживанию армянского населения со своей родины. Порукой и укором тому - трагическая судьба армян Нахичеванской ССР», - утверждал тогдашний глава НК. Суть политики властей Азербайджана в отношении Нагорного Карабаха в советское время раскрывается в произнесенных в ходе встречи с группой

¹ *Нагорно-Карабахская Республика: Путь к вершинам.*, Степанакерт, 2001, с.131

азербайджанской писателей и поэтов в 1999г.. словах Г.Алиева о том, что НКАО должна была остаться (имелось в виду в составе Азербайджана- К.Д.), “но не в виде автономии”.

Отметим, что 26 ноября 1991г. Верховным Советом Азербайджана было принято решение об упразднении Нагорно-Карабахской Области¹.

И стоит ли удивляться, что сегодня, на фоне периодически озвучиваемых представителями властей Азербайджана угроз стереть Карабах и Армению с лица земли и шантажа мирового сообщества, нынешний азербайджанский лидер Ильхам Алиев открыто заявляет, что армяне - временные гости в Ереване...².

Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ներկա փուլի գենեզիսը,
դինամիկան եւ առանձնահատկությունները

Ղափիթ Ղարաբեկյան

Ամփոփում

Հոդվածում վերլուծվում են այն գործոնները, որոնք նպաստել են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության վերսկսմանը 1988 թ. փետրվարին եւ պայմանավորել նրա առանձնահատկություններն ու դինամիկան, ինչպես նաեւ դիտարկվում են ուսումնասիրության հակամարտության մի շարք մեթոդաբանական խնդիրներ:

Խորհրդային Միության փլուզման նախօրեին եւ դրանից հետո պարզ դարձավ, որ Լեռնային Ղարաբաղի հետ կապված առաջատար երկրների քաղաքականությունը նշանակալիորեն չի փոխվել: Այն արտացոլվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ համաշխարհային եւ եվրոպական ընկերակցությունների կողմից երկակի չափանիշների դրսեւորմամբ:

“The Genesis of the Current Stage of the Azerbaijani-Karabakh Conflict, its Dynamics and Features”

David Karabekyan

Summary:

The article analyzes the factors that contributed to the resumption of the Azerbaijani-Karabakh conflict in February 1988 that led to its characteristics and dynamics, and a number of methodological problems in the study of conflict is also considered.

¹ <http://nkr.am/rus/mid/chron.htm>

² .“Нагорный Карабах. Факты против лжи” А. Мелик-Шахназаров. М.Волшебный фонарь, 2009, стр. 14.

At the threshold and after the collapse of the Soviet Union, it became clear that the policy of the leading countries on Nagorno-Karabakh has not changed significantly. This was reflected in the reaction of the world and European communities on the Nagorno-Karabakh conflict, expressed in the manifestation of double standards.

ԻԳՂԻՐԻ ԵՎ ՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ*

Լյուբա Կիրակոսյան

*Ճարտարապետության թեկնածու
ԵՊՀ*

Վերջին տարիներին (1997թ.-ից սկսած) թուրք և օտարերկրացի հնագետները քարաշար դամբարանների հետաքրքիր խումբ են բացել Իգղիրի և Վանի շրջանում:

«Աբասգյոլ» ջրամբարի և համանուն գյուղի միջև գտնվում է **Յուրեկի** ամրոցն ու **դամբարանադաշտը**: Դամբարաններից մեկը հատակագծում ուղղանկյունաձև (երկ. 5,50, լայն. 1,80մ) կառույց է: Դամբանասրահը կողմնորոշված է հյուսիս-հարավ առանցքով: Վերևում ծածկի մակարդակում, դամբանասրահի պարագծով շարված են բազալտե միջին մեծության քարեր: Այս շարքի վրա լայնական ուղղությամբ դրված են ծածկի երեք խոշոր սալեր: Սրանցից յուրաքանչյուրը մոտ 2,5x1,5մ չափեր ունի և կշռում է 1-1,5 տ: Դամբանասրահի պատերը շարված են կողքերի վրա դրված միջին մեծության քարերով: Դամբարանը նախամուտք (դրոմոս) չունի¹ (Աղ.1):

Իգղիրի շրջանում՝ ներկայիս Տուզլաքա բնակատեղիից 32 կմ հարավ տարածված է մեկ այլ դամբարանադաշտ: Այստեղ հուշարձաններին

*Հոդվածը ընդունվել է 23.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ մշակութաբանության ամբիոնը:

¹ Belli O., Konyar E., Early iron age fortresses and necropolises in East Anatolia, Istanbul 2003» p.6

շատ վնաս են հասցրել գյուղի բնակիչները: Նրանք թալանել են դամբարանները, ավերել կառույցը: Այս դամբարաններից մեկը հատակագծում ուղղանկյունաձև (2,5x1,75մ չափերով) սրահ է: Այն ունի հյուսիսից հարավ կողմնորոշում: Ծածկված է երեք սալերով, որոնք նստած են դամբանասրահի լայնական պատերին: Երեք սալերից երկուսը տեղում պահպանված են, իսկ երրորդը հանված է գանձախույզների կողմից՝ դամբանասրահի մուտք գործելու համար: Պատերը շարված են հորիզոնական ուղղությամբ դրված համեմատաբար փոքր քարերով՝ հողաշաղախի օգտագործմամբ: Քարերի շարքը դեպի վերև, առաջակարկառ են՝ ապահովելով դամբանասրահի ծածկի թռիչքի փոքրացումը¹:

Դոդուբայազետի դամբարանները քարաշար դամբարանների դասական օրինակներ են, որոնք գտնվում են Էսքի Դոդուբայազետից 11 կմ հյուսիս արևմուտք:

Սրանցից **առաջինը** հատակագծում ուղղանկյունաձև (երկ. 4,0 մ, լայն. 1,75, խորությունը բացված մակարդակում 1,0մ) սրահ է: Դամբարանն ունեցել է հողային դամբանաթումբ: Դամբանասրահը կողմնորոշված է արևելք-արևմուտք առանցքով: Չունի նախամուտք (դրոմոս): Պատերը շարված են հորիզոնական ուղղությամբ դրված խոշոր քարերով: Շարվածքը բավական կանոնիկ է: Դամբանասրահը մաքրվել է 4 շարքի մակարդակում, որը մոտավորապես 1,0մ խորությանն է համապատասխանում: Շարվածքում հետաքրքիր մոտեցում է նկատվում. կանոնավորությունը պահպանելու համար՝ որոշ տեղերում բարձր քարի կողքին դրել են նրա մակարդակն ապահովող երկու փոքր քարեր: Քարի ռացիոնալ օգտագործման ակնառու օրինակ է սա:

Դամբանասրահն ունեցել է սալային ծածկ: Այդ ծածկասալերից մեկն է պահպանվել տեղում: Այն դրվել է սրահի երկայնական պատերի վրա: Դեպի վերև՝ պատերի շարքերը առաջ են եկած, որպեսզի փոքրացվի ծածկի թռիչքը²:

Երկրորդ դամբարանը նախորդին նմանվող կառուցվածք ունի: Ուղղանկյունաձև դամբանասրահը ավելի փոքր է (երկ. 3,0մ, լայն. 1,60մ): Կողմնորոշումը արևելք-արևմուտք է, դեպի հյուսիս մի փոքր շեղումով:

¹ Նույն տեղում, էջ 9:

² O., Konyar E., *Early iron age fortresses and necropolises in East Anatolia, Istanbul 2003* p. 17

Շարվածքը կանոնիկ է, սակայն զիջում է առաջին դամբարանին: Քարերը, որոնցով կանգնեցված է պատը, ավելի փոքր չափերի են: Սակայն դրան հակառակ ավելի մեծ է երկայնական պատերի շարքերի առաջակարկառությունը: Դամբարանի իրական խորության մասին խոսելը դժվար է, քանի որ այն ամբողջությամբ բացված չէ և առկա է միայն փաստված խորությունը: Դամբանասրահը ծածկող սալերը նույնպես բացակայում են: Ինչպես այս, այնպես էլ դամբարանադաշտի մյուս դամբարանները ավերվել և թալանվել են տեղի բնակչության կողմից¹:

Դողուբայագետի **երրորդ** դամբարանը չափերով ամենափոքրն է: Դամբանաթմբի լիցքը քարահողային է: Դամբանասրահն օղակում են կրոմլեխի՝ որոշ տեղերում պահպանված քարերը: Սրահը հատակագծում ուղղանկյունաձև է (երկ. 2,60մ, լայն.1,0մ): Կողմնորոշված է արևելք-արևմուտք առանցքով՝ 20° աստիճան դեպի հարավ շեղումով: Դամբանասրահը ծածկող երեք սալերից երկուսը տեղում են, իսկ երրորդ՝ արևելյան կողմինը, տեղաշարժված է: Գանձախույզները այստեղից են մտել դամբարան և թալանել: Դամբանասրահի պատերը շարված են միջին մեծության քարերով: Այստեղ ևս շարվածքում կանոնիկության միտում է զգացվում²:

Յուքարի Սաղմալի դամբարանադաշտը գտնվում է Վանից 90 կմ հյուսիս-արևելք: Այն տարածված է փոքրիկ բլրակի վրա: Դամբարանադաշտում բացվել են հինգ դամբարաններ, որոնցից երեքը խիստ ավերված են³ (Աղ. 1):

Դամբարան **առաջինը** իր կառուցվածքային առանձնահատկություններով ամբողջացնում է դամբարանադաշտի բոլոր դամբարանների գծերը: Այն քարահողային լիցքով դամբանաթումբ է, որը եզերված է կրոմլեխի օվալաձև շարքով: Կրոմլեխը լայնական առանցքով ունի 6,6մ, իսկ երկայնականով՝ 11,3մ չափեր: Այս շարքը դամբանաթմբի համար կոնստրուկտիվ նշանակություն ունի՝ հենապատ է ծառայել: Դամբանասրահն ունի բավական մեծ (երկ. 6,10, առավելագույն լայն. 2,35, խոր. 1,8մ) չափեր: Կողմնորոշված է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք առանցքով: 2,1մ երկարությամբ նախամուտքը (դրոմոս) սրահից անջատ-

¹ Նույն տեղում, էջ 17:

² O., Konyar E., *Early iron age fortresses and necropolises in East Anatolia*, Istanbul 2003, p. 17

³ Նույն տեղում, էջ 22:

ված է միակտոր սալով: Դամբանասրահի մակարդակը նախամուտքից մինչև սրահի վերջնամաս խորանում է: Հավանաբար այն ծածկված է եղել յոթ խոշոր սալերով, որոնցից երեքն են պահպանված տեղում: Պատերը շարված են համեմատաբար փոքր չափերի բազալտաքարերով: Այն կանոնիկությունը, որ հատուկ էր Դողութայագետի դամբարանների պատերի շարքում, այստեղ չի նկատվում: «Կեղծ թաղի» գաղափարը իրականացված է նաև այստեղ: Դամբանասրահը վերնամասում ունի 1,9-2,05մ լայնություն, ներքևի 2,35 մ-ի փոխարեն:

Երկրորդ դամբարանը շրջապատված է 8,8մ երկարությամբ և 6,0մ լայնությամբ կրոմլեխով, որը օղակում է քարահողային դամբանաթումբը: Դամբանասրահը կողմնորոշված է հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք առանցքով: Նախամուտքը հարավ արևմտյան կողմում է: Հատակագծում մոտավորապես քառակուսի է (2,0x1,8մ)՝ կորացող անկյուններով: Դրոմոսը շարված է մանր քարերով: Պատի հաստությունը 0,4մ է: Ծածկասալերը բացակայում են: Դամբանասրահը հատակագծում ուղղանկյունաձև է՝ կորացող անկյուններով¹:

Դամբարաններն իրենց ճարտարապետական լուծումներով, շինարարական նյութով շատ նմանվում են Վանի շրջանի մյուս քարաշար դամբարաններին:

Վանից 80կմ հյուսիս՝ ժամանակակից **Էդնիս** գյուղի մոտ տարածվում է մի դամբարանադաշտ, որտեղ կառույցները թվագրության լայն ընդգրկում ունեն: Դամբարանները թվագրվում են վաղ բրոնզից մինչև Վանի թագավորության ժամանակաշրջանով: Համալիրը դամբարանաշինության ճարտարապետությունն ու ոլորտի բոլոր առանձնահատկությունները ներկայացնող մի ուրույն հուշարձանախումբ է, որտեղ դամբարաններն իրենց կառուցվածքային տեսակով մի քանի խմբի են բաժանվում (Աղ.2):

Դամբարանների առաջին խումբը ուղղանկյունաձև կամ բոլորակ կրոմլեխներով շրջապատված ցածր դամբանաթմբեր են, որոնց տակ դամբանասրահներ են տեղադրված:

Դամբարաններից մեկը 13,0x14,5մ արտաքին չափերով ցածր դամբանաթումբ է: Ուղղանկյունաձև շարված կրոմլեխի ներսում բացվել են չորս փոքրիկ դամբանախցեր: Դրանք հատակագծում ուղղանկյունաձև, քարաշար պատերով (երկ. 2,1, լայն. 1,2մ, 1,8x0,9մ;

¹ Նույն տեղում, էջ 22:

1,25մx1,0մ, 2,0մx1,2մ) կառույցներ են: Կողմնորոշումը հյուսիս-հարավ առանցքով է: Խորությունները փաստել հնարավոր չէ, քանի որ դամբարանները լրիվ չեն բացվել: Դամբանասրահները հավանաբար ծածկվել են սալերով, որոնք նույնպես չեն պահպանվել: Մեկ կրոմլեխի ներսում չորս դամբանախցերի գոյությունը թույլ է տալիս ենթադրել, որ սա կարող էր ընտանեկան դամբանաթումբ լինել: Այս դամբարանը ևս ավերված է: Ճարտարապետական այսպիսի լուծումներով դամբարաններ հայտնի են Նախիջևանի տարածքում¹:

Դամբարանների **երկրորդ** խումբը ներկայանում է որպես բլուրակ կրոմլեխով (տրամագիծը 11,5մ) ցածր (0,3մ) քարահողային դամբանաթումբ: Դամբանասրահը դամբանաթմբի կենտրոնում չէ՝ տեղաշարժված է դեպի հյուսիս-արևմուտք: Ուղղանկյունաձև դամբանասրահը (երկ. 3,0 մ, լայն. 1,20 մ) ուղղված է արևելք-արևմուտք առանցքով: Պատերը շարված են բազալտով: Նախամուտքը բացակայում է: Շարվածքը կանոնիկության է ձգտում: Դամբանասրահը ծածկված է սալերով, որոնցից երկուսը տեղում են, իսկ երրորդն, ըստ երևույթին հանվել է գանձախույզների կողմից, որոնք այստեղով թափանցել են ներս և ավերել դամբարանը²: Դամբարանի կողքին պեղվել է մեկ այլ՝ չափերով ավելի փոքր, բայց կառուցվածքային առանձնահատկություններով վերջինիս նման դամբարան (կրոմլեխի տրամագիծը 6,5մ): Դամբանասրահը մոտավորապես քառակուսի է՝ 2,10մx1,95մ: Սա նույնպես տեղաշարժված է դամբանաթմբի կենտրոնից:

Դամբարանների **երրորդ** խումբը չունի կրոմլեխներ: Դրանք ուղղանկյունաձև դամբանասրահներով, սալածածկ կառույցներ են: Դրանցից մեկի օրինակով (այն ունի այս խմբի դամբարանների կառուցողական բլուր բնորոշ գծերը) կարելի է պատկերացում կազմել մյուսների մասին: Այն հատակագծում ուղղանկյունաձև (երկ. 5,20մ, լայն. 2,60 մ) է: Պատերը շարված են դեպի վերև նեղանալով, այնպես որ ծածկի մակարդակում լայնության 2,60մ-ը հասցված է 1,40մ-ի: Այսինքն թռիչքը փոքրացվելով, հնարավորություն է ստեղծվել դամբանասրահը ծածկել³: Դամբարանը նախամուտք (դրոմոս) չունի, խորությունը 2,0մ է:

Վանի շրջանում, քաղաքից 55 կմ հարավ, հարավարևելյան Տավրոսից հարավ գտնվում է մի ամրոց, իսկ նրանից 26 կմ հարավ

¹ O., Konyar E., *Early iron age fortresses and necropolises in East Anatolia*, Istanbul 2003, նկ. 30

² Նույն տեղում, էջ 42:

³ O., Konyar E., *Early iron age fortresses and necropolises in East Anatolia*, Istanbul 2003» p. 34

տարածվում է դամբարանադաշտը: Վերջինիս հյուսիս-հարավ ուղղության վրա՝ ժայռափոր բարձունքի արևելյան մասում բացվել է մի դամբարան: Այն ավերվել է տեղի բնակիչների կողմից: Պահպանված մասը հատակագծում ուղղանկյունաձև (երկ. 7,5մ, լայն. 2,75մ) կառույց է: Պատերի շարվածքի դեպի վերև զգալի առաջադիր լինելու հաշվին դամբանասրահի լայնությունը հասել է 1,1-0,8 մ-ի: Տեղում բացվել են ծածկին պատկանող երեք սալաքարերը: Խորությունը հավաստի չի փաստվում, քանի որ մինչև հատակի մակարդակ դամբարանը լրիվ մաքրված չէ¹:

Այս շրջանի դամբարանները վնասվել են ոչ միայն տեղի բնակչության, այլև այստեղ իրականացված ճանապարհաշինության պատճառով: Որոշ դամբարաններ հատակագծերում շրջանաձև են: Կառուցման եղանակը նույնն է՝ քարաշար պատեր, ծածկի «կեղծ թաղի» կառուցվածքային լուծում²:

Հայկական լեռնաշխարհի այս և մինչ այս ներկայացված Վանի թագավորության ժամանակաշրջանի քարաշար դամբարաններում բավական հաճախ կիրառված է ծածկի «կեղծ թաղի» եղանակը: «Կեղծ թաղով» դամբարանները այս տարածաշրջանում հանդիպում են մ. թ. ա. II հազարամյակից և հարատևում մինչև մ.թ. ա. 8-րդ դար: Ըստ որում, հանդիպում են երկու, երեք և չորս կողմից աստիճանաձև նեղացող ծածկով դամբարաններ: Այսպիսի դամբարաններ հայտնաբերվել են Օշականում³, Սևանի ավազանում, Արագածի լանջերին, Լոռիում⁴, Սիսիանում, Շամիրամում⁵: Կամոյի շրջանի Կարմիր գյուղում բացված, մ.թ.ա. 8-րդ դարով թվագրվող ուրարտական դամբարանը, որը հատակագծում ուղղանկյունաձև է, ծածկված էր անկյուններում ձգված, աստիճանաձև նեղացող կոպիտ քարերով:

Ենթադրվում է, որ «կեղծ թաղը» հայկական ճարտարապետության մեջ լայնորեն կիրառվող գլխատների և հազարաշենների գմբեթավոր փայտե ծածկերի նախատիպն է⁶: Ծածկի այս ձևը ավելի ուշ կիրառվում է

¹ Նույն տեղում, էջ 85:

² Նույն տեղում, էջ 88:

³ ժրՈՎ հ., ԽՍՀՄՀՄՈՐՎ Ը., ԿԵՆՈՎ Ի, ԿրկՏԶվոպ ՈւղղաձևՅՈՅՈ ՌՈՐՍՏՈՍՍՍ 1971-1983չ., ԺՐԿԶՈՎ 1988, ը. 77.

⁴ Деведжян С., Лори – Берд І, Ереван, 1981« с. 19, 20, 24.

⁵ Կիրակոսյան Լ., Շամիրամի Մեծ դամբանաբլուրների ճարտարապետությունը, ԼՀԳ, թիվ 10, Երևան, 1988, էջ 88-94:

⁶ Вартанян С., Азарашен и его значение в армянской архитектуре, ВОИ, Ереван, 1967, N 6, с. 78.

նաև հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ՝ գավիթներում և ժամատներում: Այսպիսի ծածկերի հնագույն օրինակներ հանդիպում են Կարմիր բլուրի մինչուրարտական բնակավայրում¹:

Աստիճանաձև նեղացող ծածկով (քարից ու աղյուսից դամբարաններ հայտնի են նաև Հին աշխարհի տարբեր երկրներում՝ Եգիպտոսում (II դինաստիա), Մարիում, Ուրում (III հազ.), Քիշում՝ վաղ դինաստիական շրջանում², Սիրոս կղզու կիկլոպյան շարվածքով դամբարաններում³ և այլուր:

Ծածկի այս ձևը տարածված է եղել հունական աշխարհում, Փոքր Ասիայում, Թրակիայում, Էտրուրիայում, Հյուսիսային Մերձսևծովյան շրջաններում, որտեղ այդ կառուցվածքը կատարելության է հասցված և հարատևում է մինչև մ. թ. I դարը: Սակայն արևելքում ծածկի այս ձևը ավելի վաղ է հանդես գալիս, ուստի «կեղծ թաղով» ծածկի ակունքները պետք է փնտրել այնտեղ: Փոքր Ասիայում, խեթական աշխարհում (Խաթուշա)⁴, Լիդիայում⁵ և այլուր «կեղծ թաղով» քարե և աղյուսե դամբարաններ մ. թ. ա. II-I հազարամյակում հաճախ են հանդիպում:

Ուշ շրջանի այսպիսի կառույցներ են Անկարայից 40կմ դեպի արևմուտք գտնվող Կարալարում 1933թ. բացված, չորս կողմից աստիճանաձև նեղացող «կեղծ թաղով» դամբարանները:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում Վանի թագավորության ժամանակաշրջանի վերևում ներկայացված քարաշար դամբարաններում կիրառված ծածկի «կեղծ թաղի» կառուցվածքային ձևը այս տարածաշրջանի համար խիստ բնորոշ է և պայմանավորված է այդ ձևի ստեղծման և զարգացման ավանդույթով: Այդ ավանդույթը հասել է մինչև հելլենիստական դարաշրջան: Ուշ հելլենիստական Հայաստանում «կեղծ թաղն» օգտագործում են ոչ միայն քարե և փայտե, այլև աղյուսե կառուցվածքներում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

¹ Мартыросян А., *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ереван, 1964 с. 25, 30.




² Чаульд Г., *Древнейший Восток в свете новых раскопок*, М., 1956, с. 144-223-237.

³ Նույն տեղում, էջ 86:



⁴ Թրակիայի ՆորՅՏՏՐՈ՝ ՈՐԱՌՑԱԿՍԳՐՈ, 8.1, ԾՏՐԱՇՈՒ, 1970, թ. 242.

⁵ Նույն տեղում, էջ 251:

Ի՝ ԿՇԹՇ՝ ԿՍՁՁ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝



Ի՝ ԿՇԹՇ՝ ԿՍՁՁ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝



Ի՝ ԿՇԹՇ՝ ԿՍՁՁ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝





Ի՝ ԿՇԹՇ՝ ԿՍՁՁ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝


ԿՇԹՇ՝ ԿՍՁՁ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝ ԿՇՇ՝

Վանի շրջան.

Էդնիսի դամբարանները




դամբանաթմբի հատակագիծը 3




դամբանասրահի ծածկի մակարդակում




լայնական եւ նրկայնական կտրվածքներ




»կենդ թաղով« իրականացված ծածկը 2 3 m.



քառակուսի դամբանաթումբը



շրջանաձեւ կրումիւխով դամբանաթումբը



գտածոներ
դամբարանից



նյութերը՝ Բելլի Օ., 2003, էջ 43-47, նկ.21, 25

Архитектура погребений регионов Игдир и Ван
Люба Киракосян
Резюме

В статье представлены плановые, объемно-пространственные и конструктивные особенности погребений, раскопанных в последние годы (начиная с 1997 г.) в регионах Игдир и Ван. Было выявлено, что архитектурные особенности этих погребений типичны и традиционны для всех памятников Армянского Нагорья периода Ванского царства.

The Architecture of Tombs in Igdir and Van Regions
Lyuba Kirakosyan
Summary

In this article there are represented the planning, structural and dimension features of stone tombs situated in Igdir and Van regions and which have been excavated during recent years (since 1997 year). Our surveys show that features of such tombs are characteristic to all kind of traditional structures of Van Kingdom situated in Armenian Highland.

ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՐԻ «ԽՈՒՍԱՆԱԲԵՐՈՂ»*
Վիճակաճարձանագրություններ Խաղբակյանների մասին
Սլավա Սարգսյան

ԼՂՀ

Քաղաքական կյանքի անկայուն վիճակը, արտաքին վտանգի անընդ-
 հատ աճող սպառնալիքը, դարեր շարունակ Արցախի ժողովրդին հար-
 կադրում էին կառուցել ամրոցներ, որոնք հիմնվում էին ոչ միայն սահմա-
 նամերձ հատվածներում, այլև խորքերում ամրապնդելով
 կենտրոնական ռազմավարական հանգույցները: Նման ամրություններից
 է Խոխանաբերդը: Այն գտնվում է Խաչենագետից հարավ, այժմյան
 Մարտակերտի շրջանի Վանք գյուղից 3 կմ հարավ-արեւմուտք, ծովի
 մակերեսույթից 1739-1812 մ բարձրությամբ լեռան վրա:
 Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40 01 28.4, E 46 31 59.9:

Խոխանաբերդը առաջօր սպառիչ ուսումնասիրության չի ենթարկվել:
 Ս. Զալալեանցը¹, Մ. Բարխուտարեանցը² (նրանք ամրոցն անվանում են
 Թարխանաբերդ), Հ. Օրբելին³, Բ. Ուլուբաբյանը⁴ եւ ուրիշներ⁵ ամրոցի
 մասին որոշակի հիշատակություններ ունեն: Ամենավաղ տեղեկությանը
 հանդիպում ենք Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ, որ-
 տեղ հեղինակը ամրոցին անդրադառնում է մոնղոլների արշավանքների,
 ինչպես նաեւ Գանձասարի վանքի կառուցման կապակցությամբ⁶:

*ՃԱՊՅԱՆ ընդունվել է 20.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրԴՀ պատմության ամբիոնը:

¹ Ս. Զալալեանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփլիս, 1842, էջ 192:

² Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 198-199: Թարխանը Ավան հարյուրապետի
 եղբայրն է: Ժե դարի մի ավետարանի ծեղագրի 248 ա էջում «Խաչինու երկրի տէր» Թարխան
 յուզբաշու՝ 1726թ. գրված հիշատակարանն է, որը պարունակում է նրա ընտանիքի անդամների եւ
 ազգականներից շատերի անունները (տես Ժե դարի հայերեն ծեղագրերի հիշատակարաններ,
 մաս 3, Երեւան, 1967, էջ 161):

³ Լ. Կրոպակ, Ղրղզի ժճնախ, Խվճճ ղուկալիկուն, ժՂպՂՂ, 1963, էջ 153:

⁴ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X- XVI դարերում, Երեւան, 1975, էջ 123, 180, 196 եւ այլն:

⁵ Ամրոցին անդրադարձած Գարեգին Կաթողիկոսը Խոխանաբերդը շփոթում է Կաչաղակաբերդի
 հետ, այն անվանում է Ախսաղան Հավթախաղաց (տես Գարեգին Կաթողիկոս, Յիշատակարանը
 ծեղագրաց, հ. Ա, Ամթիլիս, 1951, էջ 928): Իսկ հարեւանների պատմությունը յուրացնելու գործում
 փորձված թուրքերը թարգմանել եւ Օղլանդալախի են վերակոչել Խոխանաբերդը (Արքեպանի
 հանրագիտարան, հ. 10, Բաքու, 1987, էջ 62): Ամրոցին անդրադարձել է նաեւ Ե. Գեղամյանցը,
 (Հայկունի)՝ այն տեղակայելով Գանձասարի վանքից հարավ-արեւմուտք, Խաչենագետի ձախ
 ափին (Ուղեգնացական ակնարկներ, Երեւան, 2010, էջ 64)՝ ըստ էության այն համադրելով
 «Խոխի» - ի հետ, որը հեռու է իրականությունից:

⁶ Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երեւան, 1961, էջ 269, 270, 313: Ուսումնասիրողներից Հ. Կա-
 ռազյոզյանը Խոխանաբերդը համադրում է Բիսնական պետության Սարդուր Բ արքայի (764-
 735) Գանձադռան տարեգրության մեջ. մ.թ.ա. 741թ. կատարված դեպքերի կապակցությամբ

Ուսումնասիրությունները բերել են այն համոզման, որ ամրոցը ժամանակակից է Մեծառանք (Խաչեն) գավառի մի քանի այլ ամրոցների (Շիկաքար, Խաչեն-Կաչաղակաբերդ), բայց կառուցվել է դրանցից հետո՝ ելնելով երկրամասի ռազմապաշտպանական միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությունից:

Համաձայն տեղում կատարած զննումների եւ աղբյուրների պատմա-համեմատական վերլուծության, ամրոցի կառուցման կամ ձեւավորման ժամանակաշրջանը VII-IX դդ. են, այսինքն՝ հայ ժողովրդի պատմության արաբական շրջանը: Արաբական արշավանքների սպառնալիքը պետականությունը կորցրած, նախալեռնային վայրերում անհաջողությունների մատնվող իշխաններին ստիպում էր քաշվել դժվարագնաց լեռնազանգվածները, ամրանալ ժայռագագաթներին, կառուցել ամրոցներ, հոգալ ժողովրդի պաշտպանությունը եւ պայքարել թշնամական ոտնձգությունների դեմ: Ինչպես հայտնի է, այդպես էլ Արշակունյաց եւ նրան հաջորդող մարզպանական շրջանում, երբ կարելի էր մեծ զորաբանակ հանել եւ թշնամուն ճակատամարտ տալ հարթավայրում՝ սահմանամերձ հատվածներում (օրինակ՝ 450թ. Խաղխաղի ճակատամարտը) եւ կանխել նրա առաջխաղացումը երկրի խորքը: Եվ պատահական է, թե ինչու պարսիկներին, իսկ հետո արաբներին (եթե չհաշվենք մանր-մունր ասպատակությունները) չհաջողվեց ոտք դնել Արցախի լեռնային գավառները, որտեղ Առանշահիկ իշխանական տան ներկայացուցիչները, իրենց թագավորներ հայտարարելով, պահում էին հնագույն իշխանական տոհմի ավանդներն ու հավակնությունները¹:

Ուսումնասիրողներից Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը Խոխանաբերդի հիմնարկումը վերագրում է Սահլ իշխանին²: Թերեւս այդ մասին կարող է վկայել ամրոցից հյուսիս, Խաչենագետի ափին գտնվող մի հարթ եւ բավական ընդարձակ տարածքի անվանակոչությունը, որը կրում է նրա անունը՝ Սահլատափ (Սահլի հող): Սա ըստ էության ցույց է տալիս, որ այս վայրում է գործել Սահլ Ամբատյան Առանշահիկ իշխանը, որը ինչպես հայտնի է, Շիկաքարի տերն էր, որի մատույցներում 837թ. բռնեց «մար-

հիշատակվող Ուխտուն երկրամասն հետ, որը կարծում ենք, հեռու է իրականությունից (Յ. Կարազեդեզյան, Սեպագիր տեղանուններ, հ. I, Երեւան, 1998, էջ 138):

¹ Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց արեւելից կողմանց պատմության, Երեւան, 1981, էջ 272:

² Գ. Տեր-Հովհաննիսյան, Բաղդասար Մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի համառոտ կենսագրություն (Փորձ, 1880, N 5, էջ 133):

դախողխող, աշխարհավեր, արյունարբու գազան»¹ Բաբելին եւ հանձնեց արաբների ձեռքը: Սակայն, չի բացառվում, որ «Սահլատափ»-ն ունենա «սուրբ» իմաստը՝ «սուրբ հող», քանզի «սահ»-ն ունի այդ նշանակությունը: Հմմտ. Սահլապատ՝ Եղիշ առաքյալի վանքապատկան բնակավայրերի շարքում²:

Ամրոցի վերաբերյալ X դարից հիշատակություններ հայտնի չեն: XI դարի երկրորդ կեսին Խաչենում իրենց տիրապետությունը հաստատեցին սելջուկ-թուրքերը, այնուհետեւ, սելջուկ-թուրքերից իրենց անկախ հռչակած ամիրաները (XII դարի երկրորդ կես): Խոխանաբերդը Ներքին Խաչենի պաշտպանական կենտրոններից էր: Ամրոցում իշխում էին սկզբում Գրիգոր³, իսկ հետո՝ Վախթանգ⁴ իշխանները:

1236թ. սկսվում են մոնղոլ-թաթարական արշավանքները: Ինչպես հաղորդում է Կ. Գանձակեցին, Խաչենը վիճակով բաժին էր ընկել Ջուղբուղային, որը Մ. Չամչյանի «Հայոց պատմության» մեջ հիշատակված է «Ջուլա եղբայր Չարմաղանայ»⁵: Այս գորավարը Խաչենի անպաշտպան շրջաններն ասպատակելուց ու ավերելուց հետո, անակնկալ հարձակվում է պաշտպանական ամրությունների վրա, անխնա սրի մատնում, մասամբ էլ գահավեժ անում այնտեղ ապաստանած ժողովրդին⁶: Արնածարավ կողոպտիչներից բնակչությանը պաշտպանելու եւ հարձակումը կասեցնելու նպատակով Խաչենի տեր Հասան Ջալալ իշխանը իր ընտանիքի հետ ամրացավ Խոխանաբերդում: Երկար ժամանակ նրա ամրոցը պաշարած թնամին, տեսնելով, որ գրավել չի կարողանում, սկսեց ավերել շրջակա գյուղերը: Ջալալ իշխանը իր երկիրը ավերումներիկց գերծ պահելու համար մեծագին ընծաներով իջավ Ջուլայի բանակը եւ նրան խոստացավ ամեն տարի հարկ եւ զորք տալ, եթե նա համաձայնի թողնել իր երկիրը: Ջուլան սրանով չբավարարվեց եւ պահանջեց, որ հայ իշխանը, ի հաստատումն իր խոստման, Ռուզան դստերը կնության տա իր Բուղա եղբորորդուն: Հանուն հպատակների փրկության, Ջալալ իշխանը վճռեց զոհել սիրելի աղջկան, որին Ջուլան առնելով՝ Ջալալ իշխանի հետ խաղաղություն հաստատեց եւ զորքը հանեց երկրից⁷:

¹ Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, Երեւան, 1969, էջ 259:

² Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 48:

³ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 387:

⁴ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 168:

⁵ Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 210:

⁶ Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 267:

⁷ Նույն տեղում, էջ 269, Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 210, Գ. Տեր-Հովհաննիսյանց, նշվ. աշխ., էջ 139:

Սակայն շուտով մոնղոլները ավերեցին եւ Խոխանաբերդը, եւ այլ ամրոցներ: 1246թ., երբ մոնղոլական մեծ ժողովում Գույուկն ընտրվեց մեծ խան, նրա առաջին ձեռնարկումը նվաճված երկրներում հարկահանությունն էր. այդ նպատակի համար նա հարկահաններ ուղարկեց ամեն տեղ: Խաչենի կողմերում հարկեր էր հավաքում Բուղան: «Վերջինս, պատմում է Կ. Գանձակեցին,- գալով թաթարական զորքի հետ, ներխուժում է ավագանու տները եւ անխնա կողոպտում: Ոչ ոք չէր համարձակվում ընդդիմանալ նրան, որովհետեւ նա իր շուրջն էր հավաքել քրիստոնյաներին թշնամի՝ տաճիկ եւ պարսիկ ավարառուներին: Վերջիններս բարեպաշտ Հասան իշխանի դեմ զրգռեցին Բուղային, որը քանդեց Հասան Ջալալի անմատչելի ամրոցները՝ Խոխանաբերդը, Դեղը, Ծիրանաքարը եւ այլն»¹:

Դարավերջին Խաչենը ենթարկվեց նոր աղետի, այս անգամ մոնղոլ-թաթարական հորդանների կողմից, որոնց առաջնորդում էր Լենկ-Թեմուրը: Ժողովրդի դրությունը չբարելավվեց նաեւ XIV դ. երկրորդ կեսին: Ավերածությունները պարբերաբար շարունակվեցին կարակոյունլու եւ ակկոյունլու թուրքմենների տիրապետության ժամանակ: Երկրամասի պարբերական ամայացումը եւ հայ ժողովրդի բարեկեցության ու մշակույթի կործանումը ամենամեծ չափերով շարունակվեցին XV դարում: Խոխանաբերդը այլեւս կորցրել էր իր վաղեմի դերն ու մշանակությունը: Այն վերջնականապես ավերվեց XV-XVI դդ. թուրքերի արշավանքների ժամանակ²:

Ամրոցի կենտրոնական մասն ընդգրկում է «Խոյախան քար», «Ղուզղուն քար» եւ «Մուղղուսի քար» լեռնագագաթները: Այստեղ, ժայռազանգվածների միջեւ, մի կիսահարթ լանջ-սարավանդակի վրա, տեղակայված է Խոխանաբերդ պատմական ամրոց-բնակավայրը՝ շրջապատված ողորկ ժայռապատնեշներով, ինչպես նաեւ՝ դարավոր անտառով: Սարավանդակը հարավից եւ մասամբ արեւելքից ավարտվում է անդնդախոր ձորերով, որոնք էլ ավելի անառիկ են դարձնում անգամ ամրոցամերձ տարածքը: Տեղանքի ընտրությունը պատահական չէր. հայ իշխանները, ավելորդ արյունահեղություններից խուսափելու նպատակով, ստիպված էին ժողովրդին պատսպարել անմատչելի դժվարագնաց լեռներում, որպեսզի կարողանային

¹ Կ. Գանձակեցի, *նշվ. աշխ.*, էջ 313: Մ. Չանջյան, *նշվ. աշխ.*, էջ 222:

² Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երեւան, 1988, էջ 765:

հաջողությամբ պայքարել զավթիչների դեմ եւ դրանով իսկ ազատ պահել երկրամասը: Այժմ բնակատեղիից պահպանվում են տների մնացորդները՝ ծածկված հողի շերտերով, թփուտներով: Նախնական հաշվումներով կացարանների թիվն անցնում է հիսունից: Քանի որ բնակատեղին հարավից եւ մասամբ արեւելյան կողմից հարում է ժայռազանգվածի կտրվածքին, պաշտպանական նկատառումներով (վայր չընկնելու նպատակով) եզրագծով պատ է կառուցվել, որը չի պահպանվել: Առանձին սենյակներ առաջապահ, պաշտպանական նշանակություն ունեին: Օրինակ, բնակատեղիի արեւելյան կողմում տեղադրված կացարանը, որն ունի քառակուսի հատակագիծ (չափերը՝ 6x6 մ), ըստ էության նպատակ ուներ պաշտպանելու ամրոցամերձ արեւելյան դժվարամատչելի մուտքը: Այստեղ, տուն-կացարանները ներսի բնակարանների համեմատությամբ կառուցված են բավական մեծ քարերով եւ ունեն 1,2 մ հաստություն: Բնակատեղին ընդգրկում է շուրջ 0,5 հեկտար եւ գերազանցապես տարածվում ամրոցի երկու ժայռագագաթների ստորոտով, հարավ-արեւելք-արեւմուտք ուղղությամբ:

Խոխանաբերդից հարավ-արեւմուտք տարածվում է վարուցանքի համար հատկացված ոչ մեծ տափարակը (ժայռազանգվածի ստորոտում մնացել են ընդեղենի եւ ցորենի մի քանի հորեր), դրանից այն կողմ, հյուսիսակողմ թեք լանջի ստորոտում՝ աղբյուրը, որը կրում է Ռուզանի (Հասան Զալալի աղջկա) անունը եւ գերեզմանոցը՝ վերը նշվածներից հարավ:

Խոխանաբերդ ամրոցի գլխավոր ժայռագագաթը «Խոյախան քար»-ն է՝ լեռան արեւմտյան եզրին: Ամրոցակալ ժայռի բարձրությունը մոտ 100 մ է: Միակ մուտքը արեւելյան կողմից է. «Սաստիկ զառիվեր, խիստ վտանգաւոր եւ միշտ ահարկու կաճան ժռ քարի վրայով արեւելեան կողմից դէպի հարաւ-արեւմուտք բարձրանում է մանուածոյ ձեւով: Ահա այսպիսի դժուարատար եւ միանգամայն սոսկալի է նեղ կաճանն, քանգի, Տէրն մի արասցե, եթե սահեցաւ բարձրացողի ոտքն կամ փոքր ինչ ծռուեցաւ նորա մարմնոյ հավասարակշռութեան դիրքն, իսպառ կորսուած է. վասն զի ընկնելուց յետոյ սեպացեալ ժայռերին զարկուելով պիտի գլորուի անդունդն»¹: Կաճանը, որ վիմափոր է եւ 2-3 մետր լայնություն ունի, տանում է ամրոցի վերնամասը, որի մակերեսային

¹ Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 198:

հիմնականում հարթ է եւ ընդգրկում է ոչ մեծ տարածություն՝ մոտ 250 քառ. մետր:

Ջուրը Խոխանաբերդի եւ ընդհանրապես ամրոցների համար ունեցել է առաջնահերթ նշանակություն: Եվ որպեսզի պաշարման ժամանակ թշնամին չկարողանա խափանել ջրամատակարարման գործը, ժայռագագաթի արեւմտյան կողմում, միմյանց կից փորվել է երկու վիմափոր ջրամբար: Առաջինի երկարությունը 3,85 մ է, լայնությունը՝ 2,95, խորությունն անցնում է 2,50 (հողածածկ է): Երկրորդի չափերն են 3,90 x 3,30 x 2 մետր:

Ջրամբարները ներքուստ սվաղված էին անջրաթափանց կրաշաղախի ամուր շերտով, որի մնացորդները տեղ-տեղ պահպանվում են: Դրանք կառուցվել են անձրեւաջրերի հավաքման համար եւ կարելու նշանակություն ունեին հատկապես պատերազմների ժամանակ, երկարատեւ պաշարման պայմաններում:

Խոխանաբերդ ամրոցի գլխավոր ժայռագագաթը միաժամանակ երկրամասի ռազմա-պաշտպանական համակարգում կարելու դեր ունեցող ազդանշանային կարելու դիտակետ է: Ամրոցի հարավ-արեւելյան կողմում, մոտ 10-12 կմ հեռավորության վրա գտնվում է Կաչաղակաբերդը, նրանից այն կողմ՝ Քիրսի լեռնաշղթան՝ Շուշին իր շրջակայքով, Կարկառ գետի հովիտը, արեւելքից՝ Խաչենագետի ստորին հովտում՝ Սբ. Գեորգի սարը, որի գագաթին Կասապատի բերդն էր, իսկ սրանից արեւելք՝ Շիկաքար ամրոցի արեւմտյան եւ հյուսիսային հատվածները, ընդհուպ մինչեւ Տիգրանակերտ: Հյուսիսային կողմում Մռավի լեռնազանգածն է, որից հարավ, լեռան ստորոտում՝ Հաթերք, Ականա, Հավքախաղաց ամրոցները: Արեւմտյան կողմում, Խաչենագետի վերին հոսանքի ուղղությամբ պատմական Վայկունիք սահմանամերձ գավառի արեւելյան տարածքներն են, ինչպես նաեւ՝ Բերդաձոր գավառի հյուսիսային հատվածները:

Խոխանաբերդը, որ տեղակայված է ռազմավարական կարելու վայրում՝ լեռնային երկրամասի կենտրոնում, անմիջական կապեր ուներ շրջակա ամրոցների հետ: Քաղաքական իրավիճակի բարդացման պայմաններում կապը տեղի էր ունենում ազդանշաններով, որոնք տարբեր ժամանակներում իրականացվում էին տեխնիկական տարբեր միջոցներով:

Ամրոցի պաշտպանական հնարավորությունների մեջ հսկայական նշանակություն ունեին նաեւ ժայռեղեն արգելապատերը, դժվարամատչելի կիրճերը, վիճավոր բնակարանները եւ այլն:

Եւս մի նկատառում՝ կապված ամրոցի հետ.

Ուսումնասիրողներից Ա. Հակոբյանը վերջերս լույս տեսած «Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում» հոդվածում փորձում է ապացուցել, որ պատմական աղբյուրներում հիշատակվող «Խաչենի բերդ»-ը ոչ թե ներկայիս Կաչաղակաբերդ-Սխսաղան Հավքախաղացն է, այլ Խոխանաբերդը: Ընդ որում, որպես հիմնավորում, ներկայացվում են հետեւյալ հիմնական փաստարկները.

1. Կիրակոս Գանձակեցին *«Երիցս յիշատակելով Խոխանաբերդը, երկիցս նշում է, որ ամրոցն այդպէս էր կոչուում «ըստ պարսկական բարբառոյն», «ըստ բարբառոյն Պարսից» (այսինքն՝ «մահմեդական (արաբ, պարսիկ կամ թիւրք ժողովուրդ)ների լեզուով»)*. *Հաւանաբար, նա նկատի ունէր «դեղձ» կամ «սալոր» նշանակող արաբերէն «խոխ», «խուխ» բառը կամ մի ուրիշ օտարալեզու եզրոյթ: Իսկ դրանից բխում է, որ Գանձակեցու իմացած՝ ամրոցի «հայերէն» անուանումը մի հանրայայտ անուն էր, որը յիշատակելը նաեւ պարզապէս կրկնութիւն կը լինէր. դժուար չէ կռահել, որ դա հէնց «Խաչէն»-ն է¹:*

Մեր կարծիքով «Խոխանաբերդ» անվանումն իրոք, որոշակի օտարացված տարրեր է պարունակում, որը թերեւս բացատրելի է եւ ունի ստույգ իմաստ: «Խոխանաբերդ»-ը (Խոխխանաբերդ) կարելի է ստուգաբանել օրինակ, «անհնազանդ ամրոց-բնակավայր» (կամ բնակավայր-ամրոց) իմաստով՝ կազմված լինելով «խոխ» (խոխել)՝ անհնազանդ գտնվել, անսաստել, չնվաճվել, ըմբոստանալ, հակառակվել², «խան» (խանե)՝ բնակավայր³ եւ «բերդ»՝ ամրոց, քար (նաեւ պարսկերեն) բառերից: Տեղավայրի կամ բերդանվան հետ համահունչ է նաեւ «խոխոմ» անվանումը, որն ունի «խոր ծոր, որտեղով ջուր է հոսում, թփերով ծածկված, մացառուտ, դժվար տեղեր» իմաստը⁴: Կարծում ենք, պատահական չէ նաեւ Գանձասարի վանքում գետեղված

¹ Հանդէս ամսօրեայ, թիվ 1-12, 2010, էջ 102 – 103:

² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երեւան, 1930, էջ 550, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երեւան, 1944, էջ 279, հ. 1, էջ 175:

³ ԽՍՀՄ-ի ՀայՏէրութիւնի պարտի ՑարՎՈՎՏԶ Ո ՊՈԳՅՈՒ ՐՍՏ, ԽՏՐՎՈՐԳՔՈՒ ՑՏՍՏՎՈՎՈՒ ԼՐՈՎՈ, ԾՏՐՍԶՈ, 1971, էջ 225:

⁴ Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 280: «Մենք արդէն Արցախու լեռանց... խոխոմների միջով ենք ընթանում» (Եղիշե քահանա Գեղամյանց, Ուղեգնացական ակնարկներ, Երեւան, 2010, էջ 41):

արձանագրության մեջ տեղանվան «Խանբերդ» տարբերակը, ինչպես վերժանել է վիմագրագետ Ս. Բարխուդարյանը. «... Ես նուստ ծառա ԱՅ. Ջալալ Դաւա Հասան, որդի Վախտանգա, թոռն (Մեծին) Հասանա, բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի ի(նքնակալ) Խ(ան)բերդի...»¹: Ինչպես կարելի է նկատել, տվյալ դեպքում իրատեսական չեն «դեղծ» կամ «սալոր» բառերը համադրել ամրոց, բերդ հասկացության հետ:

2. «Տեղագրական երկերում այդ կառույցը համարում էին լոկ Հասան-Ջալալեան իշխանատոհմի ապարանք, սակայն արդէն Գարեգին Հովսէփեանն իրաւացիորէն դիտարկել է այն Խոխանաբերդի ամրոց-բնակավայրի համալիրի մէջ՝ Քոլատակ վտակի հովտում...»²:

Հասան Ջալալի ամրոց-ապարանքը անմիջականորեն Խաչենագետի հովտում է, Քոլատակ վտակի հովտից ավելի քան 10-12 կմ հյուսիս-արեւմուտք, միջակայքում ունենալով Գառնաքարի գետահովիտը: Այդ ապարանքի ընդգրկումը Խոխանաբերդի մեջ անհեթեթություն է ոչ միայն այն առումով, որ այն երբեւէ Խոխանաբերդի մաս չի կազմել, այլեւ այն տեսակետից, որ հեռու է ամրոցից ուղիղ գծով 1,2 կմ՝ շուրջ 1,5 ժ հետիոտն վերելքային անցուղիներով:

3. Խորածորում «Վարազ Տրդատի սպանութիւնից յետոյ նրա այրին իր Սպրամ դստեր հետ կարողացել է փախչել եւ գիշերային ծանր ուղեւորութիւնից յետոյ ապաստանել «ի բերդն Խաչէնայ» ... Խոխանաբերդն աւելի մօտ է Դադիվանքի «խորածորին», քան Կաչաղակաբերդը...»: Նոյնի օգտին է խօսում, գուցէ, նաեւ Անանիա Մոկացու յիշատակած «Խաչինայ» վանքի գոյութեան փաստը, եթէ նկատի ունենանք, որ Խոխանաբերդի անմիջապէս լանջին գտնւում է Հաւապտուկ կոչուած վանական համալիրը, իսկ Կաչաղակաբերդին մօտիկ նման հոգեւոր հաստատութիւն յայտնի չէ»³:

Այո, Խոխանաբերդն ավելի մոտ է Դադիվանքին կամ նրա մոտ գտնվող «խորածորին», քան Կաչաղակաբերդը, որը սակայն, չէր կարող արգելքներ հարուցել եւ մի գիշերվա ընթացքում կարճ եւ հին, պատմական ճանապարհով (ներկայիս Վաղուհաս-Գանձասար-Գառնաքար-Հակոբավանք գծով) ծիծ կհասնելու Կաչաղակաբերդ: Ինչ վերաբերում է վերը նշված «Խաչինայ» վանքին, ապա այն վերաբերում է

¹ Դիվան հայ վիմագրության, V, Երեւան, 1982, էջ 38 - 39:

² Հանդէս ամսօրեայ, էջ 73:

³ Հանդէս ամսօրեայ, էջ 101 - 103:

Մեծառանից վանքին, որը եղել է համանուն գավառի (որ նաեւ խաչեն անունն էր կրում) գլխավոր վանքը՝ հոգեւոր առաջնորդարանը, որի գրեթե դեմ-դիմաց Կաչաղակաբերդն է։ Այդ մասին տեղեկություններ են պահպանվել վիմական արձանագրություններում, տեղագրական այլեւայլ հրապարակումներում։

Այսպիսով, խաչենի վարչական կենտրոն է եղել Կաչաղակաբերդը, իսկ հոգեւոր առաջնորդարանը՝ Մեծառանից («խաչինայ») վանքը, որը հետագայում իր տեղը զիջել է Քանծասարի վանքին։

4. «*խաչեն անունն սկզբնապէս ամենայն հաւանականութեամբ, կրում էր նոյնանուն գետի ափին գտնուող այն ամրոցը, որը շուտով դարձաւ Արցախի Մեծ Իրանք գաւառի իշխանների գլխաւոր նստավայրը։ ...Խօ-խանաբերդի լեռնագանգուածը յառնում է անմիջապէս խաչենագետի հովտի վերելում, իսկ Կաչաղակաբերդը նրա Քոլատակ վտակի հովտի միջնամասում է, ընդ որում խաչենագետ գետանունը եւ նրան յարող խաչինաձոր-ը յիշուած են արդէն ժԲ - ժԳ դդ. վիմագրերում*»¹։

«*խաչինաձոր*»-ը հիշատակվում է նաեւ ժԵ դ. պատմական աղբյուրներում, ոչ թե սոսկ խաչենագետին հարող տեղավայր, այլ որպէս գավառանուն², ընդ որում, Մեծառանից վանքը (Հակոբավանք), գտնվելով խաչենագետի եւ նրա վտակ Քոլատակ (Կասակ) գետերի միջեւ, կրում էր նաեւ «Գետամիջո» անվանումը։ «*խաչենի բերդ*» անվանումը չի ծագել «*խաչեն*» գետանունից։ Ինչպէս խաչենագետի վտակի հովտում գտնվող խաչենի բերդը կամ Մեծառանից վանքը, որոնք եղել են համանուն գավառի գլխավոր վարչական ու հոգեւոր կենտրոնները, այնպէս էլ «*խաչենագետ*» անվանումն ունի գավառի գլխավոր գետ իմաստը, որից սակայն, չի կարելի ենթադրել, որ մասնավորապէս խաչենի բերդը անմիջականորեն խաչենագետի մոտ կամ դրա մերձակայքում պիտի գտնվի։

5. «*...հայկական աղբիւրներում բերդանունն խաչեն տարբերակի վերջին յիշատակումներից մէկը գտնում ենք ժԲ դ. երկրորդ կէսի հզօր եւ բարեպաշտ իշխան, Վախտանգի որդի Հասան Կրօնաւորեալի՝ Դադիվանքում անձամբ տեղադրած («եւ բերի զխաչաքարս յագուա շատ աշխատութեամբ եւ բազում հնարիւք») մեծադիր խաչքարի (նախկինում կոչուած՝ «խաչվիմ») թիկունքին փորագրուած 1182 թուակիր («Թուին (Ո)ԼԼ») ծաւալուն վիմագրում... Հասանը յայտնում է, որ 40 տարի աւա-*

¹ Նոյն տեղում, էջ 74, 103։

² ԺԵ դարի հայերեն ծեռագրերի հիշատակարաններ, մաս II, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1958, էջ 66, 325, 344, հմմտ. Ս. Սարգսյան, խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 45։

գութինն է վարել («կացի յաւագութեան ամս խ») ու յաղթական պատերազմներով եղել տէրը երկրի չորս ամրոցների («ես՝ Հասան, որդի Վախտանգա, տէր Հաթերքոյ(յ) եւ Հանդաբերդոյ(յ), Խաչինաբերդոյ(յ) եւ Հաւախաղացին»)¹:

Մեր կարծիքով, տվյալ արձանագրության մեջ հիշատակվող «Խաչինաբերդ»-ը վերաբերում է Կաչաղակաբերդին, իսկ «Հավախաղաց»-ը (Հավքախաղաց) գտնվում է Թարթառ-Տրտուի հովտում: Ի տարբերություն այդ Հավքախաղացի, Խաչենի հովտում գտնվող Կաչաղակաբերդը «Սխսաղան Հավքախաղաց» էր կոչվում: Օրինակ, նույն Ղադիվանքից արելելք, Թարթառի հովտում (Խաթրավանքից հյուսիս) հին կամրջի մոտ եղած մի խաչքարի վրայի՝ «... բարեպաշտ պատրոնիկն Վասակ, թոռն Կիրիկայ թագաւորին, որդի Հասանայ, որդւոյ Սակառայ տեառն Հաթերքոյ, Հանդաբերդոյ, Հաւքախաղացին...» 1201 թվակիր արձանագրության մեջ² նշված Հավքախաղացը գտնվում է Թարթառի հովտում եւ Կաչաղակաբերդ-Սխսաղան Հավքախաղացի հետ կապ չունի:

6. «837թ. Սահլ Սմբատեան խաչենցի իշխանը (որն արաբական աղբիւրներում կոչւում էր Սահլ իբն Սինբաթ, իսկ Միքայէլ Ասորու հայերէն թարգմանութեան մէջ՝ Սահակ Հայկազուն) իր ամրոցում (թերեւս՝ հէնց Խաչէն) ձերբակալեց ապստամբ Բաբեկին եւ դրա դիմաց Խալիփայութիւնից մեծ շնորհների արժանացաւ»³:

Ինչպէս նշվեց, Սահլ Սմբատյանի ամրոցը, որի մատույցներում բռնվել եւ ձերբակալվել է Բաբեկը, Մեծառանքի սահմանում գտնվող Շիկաքարն էր (տես նաեւ սույն գրքի Շիկաքարի բերդին վերաբերող հատվածը):

7. «... Խաչէն-Խօխանաբերդ համադրումն իրենց քարտէզներում անվերապահօրէն կատարում են Սուրէն Երեմեանը եւ Բաբկէն Յարութիւնեանը»⁴:

Հարգարժան գիտնականներ, Սուրեն Երեմյանը եւ Բաբկեն Հարությունյանը ցավոք հնարավորություն չեն ունեցել գտնվելու ամրոցում եւ տեղում ճշտելու իրողությունը:

¹ Հանդէս ամսօրեայ, էջ 107 - 108:

² Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 196, հմմտ. Ղիվան հայ վիմագրության V, Երեւան, 1982, էջ 129 - 130:

³ Հանդէս ամսօրեայ, էջ 74:

⁴ Նույն տեղում, էջ 104:

8. «... մոնղոլներից փախչելով Առաջաւոր Ասիա հասած Զալալ Ադ-Դին սելջուկ խորեզմշահի վեզիր Շարաֆ ալ-Մուլքի բանակը 1227թ., անցնելով Արաքս գետից հիւսիս, «կանգ առաւ Խաչէն ամրոցի մօտ, որտեղ գտնուում էր Զալալ ադ-Դինը (ուղղելի՜ Զալալ Դօլան)՝ Իւանէ ալ-Գուրջիի քրոջորդին» ...Խաչէն... միջնադարեան ամրոցի» համար թարգմանիչը եւս ծանօթագրում է. «Ճիշտը՝ Խօխանաբերդ»¹:

1227թ. այդ դեպքերի կապակցությամբ հիշատակվող Խաչէն ամրոցը սույն գրքի Կաչաղակաբերդին վերաբերող հատվածում իրավացիորեն համադրվել է վերջինիս հետ: Հայտնի է, որ իշխանաց-իշխան Հասան Զալալը բացի Խօխանաբերդից տերն էր նաեւ Ներքին Խաչէնի մյուս մի շարք այլ բերդ-ամրոցների, ներառյալ Կաչաղակաբերդ-Սխսաղան Հավքախաղացը, որը ինչպես նշվեց, եղել է տարածքի գլխավոր իշխանական նստոց-վարչական կենտրոնը, որի մասին ստույգ տեղեկություններ են պահպանվել Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում:

Անդրադառնալով Հայերեն ձեռագրերի հիշատակարանների Զիկագոյի ծաղկագարդ Ավետարանի 1237թ. այդ ձեռագրին, որտեղ Սխսաղան Հավքախաղացը ներկայացված է որպես դոյակ՝ աթոռանիստ կենտրոն, պարոն Հակոբյանը կարծում է, որ ձեռագրում առկա են անճշտություններ, եւ որ Սխսաղան Հավքախաղացի փոխարեն պետք է լինի «Խավխան» եւ վերջինս համատեղելով «Խաչէն»-ի հետ փորձում է ցույց տալ Խօխանաբերդ-Խաչէնի բերդ նույնականությունը՝ «...որ է (հանդէպ) /դղեկիսս Խաւխան անուն Խա(չէն)/...»²:

Բայց նույնիսկ արհեստավարժ մասնագետ պետք չէ լինել, կարդալու եւ հասկանալու համար այդ ձեռագրի բովանդակությունը՝ միմյանցից տարբերակելով այդ երկու ամրոցները: Խնդրի վերջնական պարզաբանման համար նպատակահարմար է գտնվում ներկայացնելու ձեռագրի՝ տվյալ հատվածի վերծանումները.

«Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ, Երեւան 1984, էջ 199. «... ի գլուխ սահմանաց Խաչէնոյ, ի սուրբ ուխտեն Գանձասար մենաստանէ, որ (է հանդէպ) դղեկիս Սխսաղան Հ(ավքա)խաղաց...», որտեղ պարզորոշ երեւում է, որ որպես դոյակ, հետեւաբար իշխանանիստ կենտրոն է եղել Սխսաղան Հավքախաղաց-Կաչաղակաբերդը: Նույն է նաեւ Ա. Սանջյանի «A catalogue of Medieval Armenian Manuscripts in the United

¹ Հանդէս ամսօրեայ, էջ 104 - 105:

² Նույն տեղում, էջ 163:

States, Berkeley» ցուցակի 233 էջում գետեղված ձեռագրի տեքստում.
«...դղեկիս Սխտաղան (Սխսաղան) Հ(աւքա)խա(ղաց)»:

Մ. Մաշտոցի անվան մատենադարանում պահպանվում է վերոհիշյալ ձեռագրի մանրաժապավենը, որտեղ դարձյալ պարզորոշ նկատելի է ամրոցի Սխսաղան Հավքախաղաց անվանումը, որն ըստ մեր ընթերցման ներկայանում է «Սխսա(ղ)ան, Հա(ւքա)խա(ղ)ա(ց)» տարբերակով, ընդ որում «Սխսաղան» բառի մեջ, որը որպես տեղավայր սկսվում է մեծատառով, վնասված-ջնջված է միայն «ղ» տառի ստորին մասը միայն, իսկ «Հավքախաղաց» անվան չպահպանվող կամ վնասված տառերը չեն խաթարում անվանումը:

Այսպիսով, ըստ վերը նշված ձեռագրի հիշատակարանի, Խաչենի գլխավոր վարչական կենտրոն է եղել Սխսաղան Հավքախաղաց-Կաչաղակաբերդը: Ձեռագրի այլեւայլ անհարկի վերծանումներով ու փոփոխումներով հնարավոր չէ ապացուցել հակառակը, քանի որ`

- Ի տարբերություն Կաչաղակաբերդի, Խոխանաբերդը երբեւէ դրյալ չի եղել, այլ սոսկ ամրոց-բնակավայր` շրջափակված լինելով մի շարք լեռնային բարձունքներով, դժվարագնաց անցուղի-խոխոմներով, որոնք կարող էին վտանգի պահին միայն պատսպարաններ ծառայել:

- Իշխանական, առավել եւս իշխանաց-իշխանի դրյալ-ամրոց-նստավայրերը չէին կարող անմիջականորեն բնակավայրերում (կամ ամրոց-բնակատեղիներում) գտնվել եւ, սովորաբար, կառուցվում էին առանձնացված, հնարավորինս անառիկ վայրերում եւ ոչ թե տարբեր կողմերից ելունուտ ունեցող քարափներում: Խոսքը ամրոցներից դուրս գտնվող ապարանքների մասին չէ, որոնք պատերազմական իրավիճակներում հիմնականում կորցնում են իրենց նշանակությունը: Հասան Զալալի ամրոց-ապարանքը, Խոխանաբերդից բավականին հեռավորության վրա գտնվելով, բոլոր կողմերից մատչելի տարածքում է` մի հարթ տափարակի վրա, պաշտպանական առումով գրեթե չի տարբերվում տարածքում գտնվող նմանատիպ շինություններից եւ, մանավանդ պատերազմների ժամանակ, չէր կարող պաշտպանական հուսալի կենտրոն լինել: Դեռ ավելին, վերաբերվելով XII-XIII դդ., այն բնականաբար չէր կարող հավակնել դեռեւս IX դ. պատմական աղբյուրներում հիշատակվող «Խաչենի բերդ»-ի կարգավիճակին:

- Խաչենի իշխանության վարչական տարածքում, որ հիմնականում իր մեջ էր ներառել ներկայիս Քոլատակի եւ Գառնաքարի գետահովիտները,

առկա են թվով վեց պաշտպանական հանգույցներ կամ ամրոց-բնակատեղիներ, որոնցից ամենամանառիկն ու անմատույցը Կաչաղակաբերդն է, որը նաեւ իր առանցքային դիրքով ու նշանակությամբ այդ իշխանության խորհրդանիշն էր դարձել: Գտնվելով Ներքին Խաչենի գրեթե կենտրոնում, բերդից տեսանելի են ոչ միայն Խաչենագետի հովտի վարչական տարածքում գտնվող բոլոր ամրոցները, որը մեր կարծիքով անչափ կարելու է վարչական կենտրոն դառնալու համար, այլեւ Կարկառի հովիտը՝ նշանավոր Կարկառ-Շուշի ամրոցով հանդերձ: Ամրությամբ եւ դժվարմատչելիությամբ երկրորդ տեղում է ներկայիս «Փանջակ քար»-ը (պատմական Դեդ, Նատարին)՝ Խոխանաբերդ ամրոցակալ լեռան հարավային շարունակության վերջնամասում, որտեղ (ինչպես Կաչաղակաբերդում) կան ամրոցներին բնորոշ կառույցներ, այլեւայլ շինություններ: Խոխանաբերդը, սոսկ իր բնական դժվարմատչելիությամբ միայն կարող է հավակնել երրորդ հորիզոնականին: Ի տարբերություն նշված երկու ամրոցների, այնտեղ մինչեւ 5 մ բարձրությամբ¹ պարիսպներ կան ընդհանրապես պարսպապատեր չկան եւ իր ամրոց-բնակավայրի կարգավիճակով չէր կարող լինել Մեծիրանք (Մեծառանք-Խաչեն) գավառի իշխանների գլխավոր նստավայրը:

Այսպիսով, ըստ պատմական աղբյուրների եւ տեղում իրականացված հետազոտական ուսումնասիրությունների, Խոխանաբերդն ու Խաչենի բերդը դիտվում են որպես երկու տարբեր ամրոցներ, որն իր արտացոլումն է գտել նույնիսկ առանձին, ժուս հեղինակների գրվածքներում²:

Խոխանաբերդ ամրոցի շրջակայքում սփռված են բազմաթիվ հուշարձաններ՝ մ.թ.ա. III-I հազ. դամբարաններից մինչեւ XII-XIII դդ. եկեղեցիներն ու խաչքարերը, որոնք անցյալի պատմական իրականությունը առավել հանգամանորեն ուսումնասիրելու տեսակետից ամենահավաստի աղբյուրներն են: Այդ հուշարձաններից են Գառնաքար³ եւ շրջակա այլ գյուղերի տարածքների արձանագիր կոթողները, որոնք Խաչեն գավառի առ այսօր հետազոտության նյութ չդարձած

¹ Հանդես ամսօրեայ, էջ 72:

² Լ. ՄՏտպի, ԼրՅՏՐՈՒփայՍՈՒՌ տՈՎ՝ՅՎՈՍ 2 ֆտՏւց պ՝ տՐՈՐՏպՊՈՎպՎՈ՝ Ս ՀՏրրՈՐՍՏՈ ՌՎտպՐՈՐ, հկը, 1852, էջ 74, որտեղ նշված երկու ամրոցները ներկայացված են առանձին-առանձին:

³ Գյուղի տարածքի հուշարձանների, այդ թվում Խոխանաբերդի ուսումնասիրության գործում իրենց օգնությունն են ցույց տվել Պատմական միջավայրի պահպանության Արցախի տարածքային ծառայության աշխատակիցներ Ջամալ Թադեւոյանը եւ Արտո Մարտիրոսյանը, որոնց շնորհակալություն ենք հայտնում:

հիշատակարաններից են եւ կարելոր տեղեկություններ են հաղորդում խաղբակյան նշանավոր իշխանական տոհմի մասին¹:

«Մուղղուսի» եկեղեցին, որ բնորոշ է XII-XIII դդ., գտնվում է Խոխա-նաբերդի հարավ-արեւելյան մասը կազմող «Մուղղուսի» կոչվող լեռան տակ: Այն իրականում ժայռին հաված մի փոքրիկ շինություն է՝ ուղ-ղանկյուն հատակագծով (չափերը՝ 6,6x7,6 մ): Ներկայումս պահպանվում է կիսավեր վիճակում՝ 2,8 մ բարձրությամբ: Մուտքն ունի դեկորատիվ երիզվածք (չափերը՝ 1x1,4 մ):

Եկեղեցուց քիչ ներքեւ, նույն ժայռի մեջ է գտնվում այսպես կոչված «Ճգնավորի քարայրը», որը ներկայումս պահպանվում է 5 մ խորությամբ եւ 1,6 մ լայնությամբ (բարձրությունը՝ 2 մ): Քարայրի առջեւով անցկաց-ված եւ այն փակող պատը, որ ձգվում է արեւելք-արեւմուտք ուղղությամբ, ունի 6 մ բարձրություն եւ 1,4 մ հաստություն:

Հավապտուկ վանքը գտնվում է Խոխանաբերդից շուրջ 2 կմ հյուսիս-արեւելք, անտառապատ բլրի վրա: Այն բաղկացած է մի շարք կառույցներից՝ եկեղեցուց, գավթից, ինչպես նաեւ չորս այլ շինություն-ներից (գրադեցնում են 16-17 մ երկարությամբ եւ 13 մ լայնությամբ տարածք), որոնք, բացի հոգեւոր դեր կատարելուց, ծառայել են որպէս «բնական տուն եւ շիրիմ Ջաջռոյ իշխանի եւ նախնեաց իւրոց»²:

Հավապտուկ վանքը խաղբակյան նշանավոր տոհմի հոգեւոր կենտ-րոններից էր եւ տոհմական գերեզմանատունը³: Տոհմի նախահայրը Մա-միկոնյան Բակ իշխանն է⁴, որը Ավարայրի ճակատամարտից հետո, 452թ. ձեռքում է Սասանյան զորքերի շղթան, 700 հոգով դուրս գալիս Անգեղ բերդից⁵ եւ, համաձայն Վանենու (Ջաջուռ խաղբակյանի դուստրը) 1232թ. գրչագիր ավետարան-հիշատակարանի տեղեկությունների, հաստատ-վում Արցախում⁶:

¹ Խաղբակյան տոհմի ծագումնաբանությունը քննության է առել պատմաբան Ռ. Մաթեւոսյանը (ՀՍՍՀ ՊԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, N 11), իսկ վիմագրագետ Ս. Սաղունյանը վերծանել է Վասակ եւ Գրիգոր Խաղբակյաններին նվիրված արձանագրությունները (ՀՍՍՀ ՊԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, N 9):

² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (1201 – 1300թթ.), կազմեց՝ Ա. Ս. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 182:

³ Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռշյանք Հայոց պատմության մեջ, մաս I, Վաղարշապատ, 1928, էջ 34 (այսուհետեւ՝ Խաղբակյանք):

⁴ Նույն տեղում, էջ 27:

⁵ Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 122-123:

⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, էջ 182:

Խաղբակյան տոհմը որպես Մամիկոնյաններից սերված է ներկայացվում նաեւ Ն. Լամբրոնացու 1332թ. հիշատակարանում¹:

Ավարայրի ճակատամարտից հետո հաստատվելով Ներքին Խաչենում՝ Խաղբակյանները տեղի Առանշահիկ թագավորական տոհմի իշխանների աջակցությանն են արժանանում եւ ամրապնդում լեռնային երկրամասը, հաջողությամբ պայքարում ոչ միայն ընդդեմ պարսիկների, որոնք «երկյուղ կրելով, դուրս չէին գալիս Արցախի ջոկատների դեմ»², ալեւ արաբների ու մյուս զավթիչների: Համաձայն XIII դ. մի արձանագրության³, Խաղբակյանները ստորադրված էին Խոխանաբերդի կամ Ներքին Խաչենի մեծ իշխաններին:

Ստորեւ ներկայացվող նորահայտ վիմագիր արձանագրությունները⁴ օգտակար նյութ են պարունակում Խաղբակյան մեծանուն տոհմի մասին, ինչ-որ չափով լրացնում նրա կենսագրությունը:

1. Խաչքար, գտնվում է գերեզմանոցի կենտրոնում (չափերը՝ 100x65x65 սմ): Կենտրոնում մեծ խաչաքանդակն է, որի եզրամասերը պատված են պարզատիպ քանդակաշարով: Ստորին մասում հինգ տողանոց արձանագրությունն է, որից պարզվում է, որ Վասակը մոր հետ Խաչքար է կանգնեցնել Սմբատի հիշատակին:

Ի ԹՈՒԻՆ ՈԶԱ (=1232) ԵՍ Վ/ԱՍԱԿ ԵՒ ՄԵՐՍ/ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱԶՍ ՍՄԲԱՏԱ ՈՐ/Ք ԵՐԿՐՊԱԳԵՔ [ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ]:

2. Խաչքար, գտնվում է գերեզմանոցի հարավ-արեւելյան կողմում (չափերը՝ 1,34 x 58-60 x 12 սմ): Ունի պարզ, բայց XIII դ. բնորոշ քանդակներ: Արձանագրությունը տարածվում է հուշարձանի քիվից մինչեւ ստորին մասը՝ աջակողմյան եզրագծով:

ԵՍ ԱՂ/(Բ)ԵՐ ՈՐԴ/Ի ԶԱՀ/ԱՆԻՆ Կ/ԱՆԳ/ՆԵՑ/Ի ԶԽ/Ա/ԶՍ ՀԱԻ/ՐԻՄ/ (ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ)

(վերջին բառերը եղծված են եւ դժվար է ընթերցել):

3. Խաչքար, գտնվում է վանքից 7-8 մ արեւելք (չափերը՝ 1,6 x 49 x 12 սմ): Հուշարձանի կենտրոնում նրբափյուս խաչաքանդակն է՝ շրջապատ-

¹ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 487, նույնի՝ Արցախ («Բազմավեպ», 1988, էջ 269):

² Հ. Հարությունյան, Ավարայրի ճակատամարտը եւ հայ ազատագրական պատերազմները պարսկական տիրապետության դեմ V դարում, Երեւան, 1962, էջ 25:

³ Խաղբակյանք..., էջ 33:

⁴ Հ. Օրբելին, Մ. Բարխուտարեանցը, Գ. Հովսեփյանը եւ ուրիշներ Հավապտուկ վանքի գերեզմանոցից գրի են առել 12 արձանագրություն (տես Դիվան հայ վիմագրության, պր. 5, Երեւան, 1982, էջ 33-36): Որեւէ կերպ չկարողացանք տեղում տեսնել հրատարակված արձանագրությունները, բացառությամբ մեկի: Դրանք գտնվելու համար պեղման-մաքրման աշխատանքներ են պետք:

ված մանվածո զարդաքանդակաշարով: Խաչքարն առանձնապես մեծ արժեք է ներկայացնում թիկունքին փորագրված արձանագրությամբ:

Թ(ՈՒԻՆ) ՈՀԲ (=1223) ԵՍ (Գ)ՐԻԳՈՐ ԵՒ ԹԽ ՄԵՐ ՈՐԴԻ(Ք) ՀԱՍԱՆԱ ԿԱՆ ԳՆԵՑԱԲ ԶԽԱԶՍ ԳՈՐԳԱ ԵՂԲԱԻՐ ՄԵՐ (ԱՍՏՈՒԱԾ) ՈՂՈՐՄԵԱ ՆՄԱ ԱՄԵՆ:

4. Խաչքար, նույն գերեզմանատան մեջ, կոտրված: Ստորին մասում արված են քահանայի եւ հեծյալի բարձրաքանդակներ: Արձանագրությունը հետեւյալն է.

Թ[ՈՒԻ]Ս ՈԼ (=1181) ԷՐ/ԵՍ ՎԱՐ/ՀԱՄ ԿԱ/ՆԳՆԵ/ՑԻ ԶԽԱԶՍ/ ԵՂԲԱՐՑ ԻՄՈՑ/ԽԱՐԻԲ ՍԱՐԳԻՍ/ ՔԱՀԱ[ՆԱ]՝:

5. Գերեզմանատան հարավային եզրի խաչքարը (չափերը՝ 1,30 x 85 սմ) աչքի է ընկնում բուսական ու երկրաչափական քանդակներով: Կենտրոնում հյուսածո քանդակներով խաչապատկերն է, խաչի հորիզոնական թևերի վրա՝ խաղողի ողկույզներ: Արձանագրությունը ստորին մասում է.

ԷՐՆԻ ՎԵՐ/ԱՏԱՊԱՆԻ Հ/[ԱԻ]Ր ՄԵՐ ՈՒ ՄԵՐ ԵՂԲ/[ԱԻ]Ր ՎԱԽ-ՏԱՆԳԱՅ/ ՊԱՏԱ[ՐԱԳ]:

Վախտանգ անվան հիշատակությունը Խաղբակյանների տոհմական գերեզմանատանը պատահական չէ: Ինչպես նշել է Գ.Հովսեփյանը², Հասան Մեծ իշխանի որդու՝ Տանգիկ Վախտանգի տոհմը ցեղակից էր Խաղբակյան-Պռոշյանների տոհմին: Ընդ որում, Հավապտուկը նրանց աթոռանիստ կենտրոնն էր, իսկ Գանձասարը՝ տոհմային տապանատունը:

6. Խաղբակ Բ-ի խաչքար-տապանաքար՝ կիսովին ջարդված (1,30x75x14 սմ): Կենտրոնում ավանդական դարձած մեծ խաչաքանդակն է՝ մանվածո, որի վերին հատվածում, խաչի հորիզոնական երկու թևերի վրա մրգերի (խաղող եւ խնձոր) բարձրաքանդակներն են: Խաչքարի եզրամասերը հյուսված են զարդաքանդակներով: Առանձնապես հետաքրքիր է ներքնամասը՝ արձանագրությունն ու բարձրաքանդակները: Խաղբակ իշխանը պատկերված է կանգնած, զինավառ (իշխանին հատուկ գլխարկ, ձախ ձեռքում՝ երկարասայր սուր, աջում՝ դաշույն): Իշխանից ձախ Գեւորգ (արձանագրություններում Գերգ, Գորգ) վանահայրը³ աջ ձեռքով

¹ Այս արձանագրությունը Հ. Օրբելին արտագրել է բացթողումներով, առանց խաչս, եղբարց, իմոց, խարիբ բառերի (տես Լ. ԿՐՈՊԱՆ, ԸՅՑՏՁԵՐ ՐԱՍՅԱԽՈ, ԺՐԱԳՂՈՎ, 1963, էջ 199):

² Խաղբակյանք..., էջ 28-29:

³ Սա Մեծառանից տան Գրիգոր եպիսկոպոսի եղբորորդին է, որը վանքի 1163թ. արձանագրության մեջ հիշվում է իբրեւ վանական, իսկ ավելի ուշ՝ մի անթվական արձանագրության մեջ՝ «հայր

ցույց է տալիս արձանագրությունը եւ կարծես թե պահում է անվան իս տառը:

Բարձրաքանդակներից վերեւ գրված է. Թ(ՌԻՒՆ) ՌԽԳ (=1194) ԽԱՂ-ԲԱԿ: Նրանից ծախ քանդակված է Թ տառը: Այս արձանագրությունը ամենայն հավանականությամբ վերաբերում է Խաղբակ Բ իշխանին, որը ինչպես պարզվում է, մահացել է 1194 թ., ինչը առ այսօր հայտնի չէր պատմագիտությանը:

Խաղբակյան հայտնի իշխանները՝ Գրիգորը, Վասակը, Ջաջուռը եւ Հասանը Խաղբակ Բ-ի որդիներն են: Առաջինը զոհվել է ղփչաղների դեմ մղված Գանձակի ճակատամարտում (1222թ.): Վասակ Խաղբակյանը, գործակցելով ամիրսպասալար Ջաքարեին եւ աթաբեկ Իվանեին (XIII դ. առաձին տասնամյակ) ազատագրեց Վայոց ձորը, Ղվինը, Բջնին եւ հիմնադրեց մի ընդարձակ իշխանություն, որի կալվածքները գտնվում էին Վայոց ձորի, Շահապունիքի, Վարաժնունիքի եւ Կոտայքի գավառամասերում: Արատեսի վանքի մի արձանագրության վկայությամբ Վասակը նվաճել էր Եղեգյաց ձորի ամրոցները, իսկ ըստ Ստ. Օրբելյանի՝ նաեւ Հրաշկաբերդը¹:

Ջաջուռը զորական էր, պատերազմների ժամանակ եղբոր՝ Վասակ Խաղբակյանի զինակիցը: Ինչպես երեւում է Հավապտուկի արձանագրություններից², Ջաջուռ իշխանի հիմնական տիրույթը Խաչենագետի հովիտն էր: Նրա իշխանության տակ էր ոչ միայն նշված վանքը, այլեւ Կոշիկ անապատը, իսկ Նատարին բերդը նրա ամրոցն էր³: Խաղբակի մյուս որդու՝ Հասանի մասին հիշատակությունները սակավ են: Միակ արձանագրությունը, գրված նրա անունից, վերաբերում է 1184թ.⁴: Կարծում ենք, որ այս Հասանը Բաղաց Գրիգոր Երկրորդ փագավորին փեսայացած Հասանը պետք է լինի, որը գեռաքարեցի էր, իսկ Գեռաքարը (Գառնաքարը-Ս.Ս.) Խաղբակյանների բնակատեղին էր⁵:

Ստ. Օրբելյանը նշում է, թե Գրիգորը, որ իշխում էր Բաղբում, բերել տվեց Խաչենից գեռաքարեցի մի կտրիձի՝ Հասան անունով, իր դուստր Կատային նրան կնության տվեց եւ դարձրեց իր թագավորության ժառան-

վանից» եւ հաջորդել է վանքի առաջին վանահայր Հոհանին (Խաղբակյանք..., էջ 30: Տես նաեւ սույն հոդվածի 3-րդ արձանագրությունը):

¹ Խաղբակյանք..., էջ 35: Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 289:

² Ղիվան, պր. 5, էջ 35:

³ Մ. Բարխուտարեանց, Պատմություն Աղուանից, Ա, Վաղարշապատ, 1902, էջ 192-193:

⁴ Ղիվան, պր. 5, էջ 34: Տես նաեւ Լ. ԿՐՈՍՍՈՒ, նշվ. աշխ., էջ 198:

⁵ Խաղբակյանք..., էջ 32:

գորդը: Երբ սելջուկները 1170 թ. պաշարեցին Բաղաբերդը, «Հասան կացոյց բերդապահս, եւ ինքն առեալ զկին իւր եւ զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն եւ անց, գնաց ի գաւառ իւր եւ ի տուն ի խաչեն»¹:

7. Խաչքար (ջարդված), Խոխանաբերդից հարավ-արեւելք, «Իծաքարի ծորում»: Կենտրոնում խաչաքանդակն է, շուրջը՝ բուսական, մանվածո զարդանախշեր: Թիկունքին կցագրերով արձանագրություն է՝ 8 տող:

(ԹՈՒ)ՈՒ (=1171) ԹԱՐԴԱՆ (=ԹՈՐԴԱՆ, ԹԱՐԴԱՆ) ԵՐԵՅ Թ/ՈՐՆ ՀԱՍԱՆԱ ԵՒ ՈՐԴ(Ի) ՆՈՐԱ ՍՍ/ԲՀԱՂԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶ/Ս ԻՆՁ ԵՒ ԱՍՈՒՄՆՈ ԻՄՈ ՏԻՐԱՄԱԻՐ(Ն) ԵՒ ԱՍԳՈՐԴՈՒ ՄՈՐ ՀԱՆԷՍԻ ԵՒ /ԿՐԴԱՆԷՍԻ (ՈՐ ԿԻՍԱԽԻՐԵԱ/ՓՈԽԵՑԱՆ Ի ՔՐԻՍՏՈՍ) ՈՐՔ ԵՐԿՐՊԱ (ԳԷՔ / ՅԻՇԵՑԵՔ):

8. Արձանագրություն Կոշիկ անապատի Մեծ եկեղեցու (Քոլատակ գյուղից արեւմուտք) բեմի բարձրության վրա².

[ՀԱՍԱՆ]ԱՅ ԵՒ ՄԱՄ [ՄԱՄ]ԱԽԱԹՈՒՆԻՆ ԹՈՐՆ ԿԳ: ՀԵՏ ԻՐ ՂԱՆՆ ԳՆԱՑԻ ՅԱՐԵԻ ՔԻ ԻՄ ԱԶԳԷՆ ԹԱՓԵՑԻ ՂԱՏԱՏԱՆԱԻ ԶԶՐԿԱՆՔՆ ՄԵՐ: Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ.....ԽԵՐԽԱՆ, ՄԱՐԾՊԱՆ, ՄԱՄԻԿՈՆ ԿԱՄԵՑԱՔ ՆՈՐՈԳԵԼ ԶՄԵՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆՍ, ԵՍ ԽԵՐԽԱՆՍ...../ՇԻՆ/ԵՑԻ ԶՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻՄԽԻԹԱՐՔ ԵՂԲԱԻՐ ԻՄՈ...../ԹԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԱ: ԵՍ ՍԵԲԱՂԱ ՏԿԻ ԶԳՐԳՈՐԱՆԱՆՑ, ԶՄՈՐՆՂԱՆԱՆՑ ԶԳԵԼՎԱՐԴԱՆՑ Ի ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ /ՅԱՂՄՆ: Ժ: ԱԻՐ ԺԱՄ: Բ: ՀԱՍԱՆԱ ԶԱՏԿԻՆ, Բ: ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ ԿԱՐԴԱՎԱՌԻՆ, Ա: ՈԶՈՒ/ՔԱՆԱ/: Բ: ԽԵՐԽԱՆԻՆ Յ[Ա]ՅՏՆՈՒԹԵ[ԱՆ]ՅՆ: Բ: ԱՍԹԻՆ. /ՈՐԶԱՓ..... /ԿԱՏԱՐԵՆ: ՈՐ ՀԱԿԱՌԱԿԻ ԿԱՄ ԶՐԿԵԼ ԶԱՆԱՅ ԶԱՅՍ ՏԵՂԵՐՍ Ի ՍԲ. ԳԻՐԳԱՅ, ՈՍՈՒՆ ՆՈՐԱՅ ԱԾ. ԵՂԻՑԻ/ԵՒ ԻՆՔՆ ԶՐԿԵԼ ԼԻՑԻ ՅԱԻՏԵՆԻՑ ՀԱՅՐԵՆԵՑՆ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՅՆ ՊԱՐՏԱՊԱՆ ԱՌԱՋԻ ՔԻ. ԳՐԵՑԱՒ ԳԻՐՍ Ի ԹԿԻՍ ՀԱՅՈՑ. ԶԺԴ: (1265):

Այս արձանագրության մեջ հիշատակվող անձինք (Հասան, Մամախաթուն, Մարծպան, Մամիկոն, Սեւադա), բացառությամբ Խերխանի եւ Ռուզուքանի, տեղ են գտել նաեւ Զիկագոյի համալսարանի հայերեն ձեռագրերի «Կարմիր ավետարանի» հիշատակարանում³, որից պարզվում

¹ Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 337:

² Դիվան, պր. 5, էջ 29, Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 168-169:

³ Տես Զիքակոյի համալսարանի հայերեն ձեռագրերը, կազմող՝ Հ. Քյուրտյան (Սիոն, 1971, N 7-8, էջ 273): Հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, էջ 905:

է, որ Մարծպանը Շիկաքարի Սբ. Աստվածածին եկեղեցուն կատարել է նվիրատվություն, որի դիմաց մատուցվել է չորս պատարագ (իր հարազատների՝ Հասանի, Մամախաթունի, Սեւադայի հիշատակին): Գ. Սարգսյանը, քննության ենթարկելով այս երկու հիշատակությունները եւ հիմք ընդունելով Հ. Քյուրտյանի տեղեկությունները¹, Մարծպանին, Մամիկոնին, Սեւադային, Խերխանին, ինչպես նաեւ Ռուզուքանին ներկայացնում է որպէս Հասանի եւ Մամախաթունի զավակներ եւ, հաշվի առնելով Մարծպան ու Մամիկոն անունները, որոնք բնորոշ են Դսեղի Մամիկոնյաններին, գտնում է, որ նրանք Համազասայան-Մամիկոնյան տան ներկայացուցիչներ են եւ ընտանիքով Տաշիրից տեղափոխվել են Ներքին Խաչեն, որտեղ ձեռք են բերել տիրույթներ²: Նույն կարծիքին է Ռ. Սաթեւոսյանը³, որը վերջնականապէս «ամրապնդում է» Հասանյան-Մամիկոնյանների հաստատումը Խաղբակյան իշխանության վարչական կենտրոնում, նրանց վերագրում Կոշիկ անապատի Սբ. Ստեփանոս եկեղեցու կառուցումը, վանքի մոտ գտնվող տապանատունը համարում այդ տոհմի սեփականությունը⁴ եւ այլն:

Այս երկու հիշատակությունների մանրամասն վերլուծությունը դիտելով տվյալ ուսումնասիրության շրջանակներից դուրս՝ այդուհանդերձ նշենք, որ վերոհիշյալ տեսակետները ճիշտ չեն՝ փաստական տվյալներով չեն հիմնավորվում:

Այսպէս, արձանագրության մեջ նշված Խերխանը Համազասայան-Մամիկոնյան չի կարող լինել, քանի որ նա, համաձայն նույն Կոշիկ անապատի սրահի տապանաքարի վիմագրության, Բաղա⁵ թագավորի թոռն է. «Այս է հանգիստ իշխան Խերխանին, որդոյ Հասանին, թոռին Բաղաց թագավորին, թվին: ՉԼԵ (1286թ.)»⁶: Եվ իրոք, Խերխան անձնանուն չկա Տաշիր գավառում: Այն բացի Խաչենից «բնորոշ է Բաղքին, Վայոց ձո-

¹ Հ. Քյուրտյան, Դսեղի կամ Համազասայան Մամիկոնյաններու տունը (Սիոն, 1970, N 3-4, էջ 177):

² Գ. Սարգսյան, Նոր նյութեր Մամիկոնյան-Համազասայան տան վերաբերյալ (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, N 3, էջ 78-79):

³ Ռ. Սաթեւոսյան, Պռոշյան ֆեոդալական տոհմի ծագումնաբանությունը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, էջ 68):

⁴ Նույն տեղում, էջ 69:

⁵ Բաղքը Սյունիքի իններորդ զավառն է եւ համապատասխանում է այժմյան Կապանի շրջանի հիմնական մասին (տես Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 44, 70, 100):

⁶ Դիվան, պր. 5, էջ 29, Խաղբակյանք... էջ 80: Խերխան անվամբ գյուղեր ու բնակատեղիներ են պահպանվում Շուշիի եւ Մարտունու (Արցախ) շրջաններում, իսկ որպէս տեղավայր («Քեարխանի հարթ»)՝ Գանձասարից հարավ-արեւմուտք, Խաչենագետի ձախ ափին (Ս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 180):

րին»¹: Սեւադան հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ներկայացված է ոչ թե եղբայր, այլ որպես հորեղբայր²: Այս անունը եւս Տաշիր գավառում տարածված չէ: Ինչ վերաբերում է Հասան, Ռուզուբան, Մամախաթուն անուններին, ապա դրանք ավելի մեծ տարածում գտել են նաեւ Խաչենում: Պետք է ասել, որ այստեղ միայն Հասան անունով անձանց թիվը անցնում է չորս տասնյակից, ի տարբերություն Համազասայան-Մամիկոնյանների միակ Հասանի, որը նշված հեղինակների կարիքով «տեղափոխվել է» Ներքին Խաչեն: Ճիշտ է, Խաչենում Մամիկոն եւ հատկապես Մարծպան անունների առայժմ հազվադեպ կարելի է հանդիպել (վիճագրերի ուսումնասիրությունները շարունակվում են), բայց դա չէր կարող նշանակել, որ նրանք, ինչպես նաեւ այդ երկու աղբյուրներում հիշատակվող մյուս անձինք Խաչեն եւ տեղափոխվել Տաշիրից: Ի դեպ, Մ. Բարխուտարեանցը Խերխանին, Մարծպանին եւ Մամիկոնին համարում է Խաղբակյան Ջաջուռ Բ իշխանի թոռներ³: Եվ, վերջապես, կարծում ենք, որ տոհմական գերեզմանատուն հասկացությունը չի կարող վերաբերել Համազասայան-Մամիկոնյաններին՝ որպես երկվորների: Այսպիսով, նշված փաստերը հավաստում են, որ Կոշիկ անապատի արձանագրությունը կապ չունի Համազասայան-Մամիկոնյանների Խաչեն տեղափոխման հետ, եւ որ արձանագրության մեջ հիշատակվող անձինք խաչենցիներ են՝ Խաղբակյանների ներկայացուցիչներ: «Կոշիկ անապատը Խաղբակյանների բնագավառի մի մասն է», - գրում է Գ. Հովսեփյանը⁴:

Մեր կարծիքով, Դսեղի Մամիկոնյաններին հատուկ անձնանունների գործածությունը հատկապես Ներքին Խաչենում բացատրվում ոչ միայն տոհմակցական, այլեւ ամուսնական (խնամիական) կապերի ու փոխհարաբերությունների առկայությամբ: Խաղբակյան իշխանները չէին կարող նման կապեր չունենալ մանավանդ իրենց տոհմակից Մամիկոնյանների հետ, որի հետեւանքով ի հայտ են գալիս այդ տոհմերին բնորոշ անձնանուններ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ Խաղբակյան իշխանների մեծամասնությունը այդպիսի կապ հաստատել էր առանձնապես Տաշիրի (Դսեղի) Համազասայան-Մամիկոնյաններին տան անդամ-

¹ Դիվան, պր. 3, Երեւան, 1967, էջ 52:

² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, էջ 905:

³ Մ. Բարխուտարեանց, Պատմություն Աղուանից, Ա, էջ 144: Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Կ. Գ, Երեւան, 1946, էջ 185, 264, Կ. Բ, Երեւան, 1944, էջ 511:

⁴ Խաղբակյանք..., էջ 30: Սույն կարծիքին է Մ. Բարխուտարեանցը, որը Կոշիկ անապատի հիմնարկումը վերագրում է Ջաջուռ Խաղբակյանին (Պատմություն Աղուանից, Ա, էջ 143, 193):

ների հետ¹: Բացի այդ, հայտնի է, որ ըստ Խաչենի (եւ շրջակա մի քանի գավառների-Ս.Ս.) ավանդույթի, ծնված որդիներից հատկապես ավագը կոչվում էր պապի անունով²: Այդ ամենի հետեւանքով Խաչենում մեծ տարածում են ստանում այլ գավառների տոհմերին բնորոշ անուններ, եւ ընդհակառակը, շրջակա գավառներում ի հայտ են գալիս Խաչենին բնորոշ անուններ:

Խաղբակյան տոհմի պատմությունը առավել մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի:

Хоханаберд: Нововыявленные лапидарные надписи о роде Хакбакянов
Слава Саркисян
Резюме

Находясь в ущелье реки Хаченагет, крепость Хоханаберд сыграла значительную роль при нашествии арабов, турок-сельджуков, монголов и других завоевателей.

На территории крепости имеется много историко-культурных памятников с еще не изученными древними надписями. Последние представляют большой интерес для изучения истории рода Хакбакянов.

Khokhanaberд: newly revealed lapidary inscriptions about
Khakhbakyan family
Slava Sargsyan
Summary

Being in the ravine of the Khachenaget River, the fortress of Khokhanaberд played a significant role during the invasions of the Arabs, Turk-Seljuks, Mongols and other invaders.

In the territory of the fortress there are a lot of historical and cultural monuments with ancient inscriptions, which have not been studied yet. The latter are of great interest for the study of the family history of Khakhbakyans.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԿԵՍՄԻ ՀԱՆՃԱՐԸ*

(Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակի առթիվ)

Սուրաո Խանյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

¹ Այսպես, Խաչենի Գրիգոր իշխանը ամուսնացել է Համազասպյան Մամբան տիկնոջ հետ, Խաղբակի որդի Ջաջուրը՝ Մամախաթունի, Վասակ Խաղբակյանը՝ Մամայի հետ եւ այլն:

² Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 141:

*Հոդվածը ընդունվել է 07.12.12:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրԴՀ հայ գրականության եւ լրագրության ամբիոնը:

ԱրդՀ

Սայաթ-Նովան 300 տարեկան է: Այս տարեթիվը նշվում է ըստ սայաթ-նովագիտության հիմնադիր Գ. Ախվերդյանի: Իսկ ըստ Պ. Սևակի՝ նա 290 տարեկան է: Միևնույն է, եթե աշխարհում մեծարվում է հանճարեղ աշուղ-բանաստեղծը, ընդգծվում նրա 3x100 տարվա դեպի հավերժություն տանող ուղին, ապա մենք ևս միանում ենք նրանց, ովքեր հայ գրքի տպագրության 500-ամյա հոբելյանական միջոցառումների համապատկերի վրա ծածանում են նաև 300 թիվը՝ մեր ազգային հանճարի փայլատակումներից մեկը հանդիսացող մեծ երգչի հոբելյանը:

Սայաթնովագիտությունը 160 տարվա ճանապարհ է անցել: Ստեղծվել են մի քանի տասնյակ ուսումնասիրություններ, մի քանի հարյուրի հասնող գիտական հոդվածներ, տպագրվել են նկարազարդ ալբոմներ, ցուցադրվել են կինոֆիլմեր, լույս են տեսել վեպեր, վիպակներ, չափածո երկեր և այլն, և այլն: Ասել է թե՛ անմահ աշուղ-բանաստեղծը որպես անհատականություն, ձեռք է բերել իրեն ծնող ժողովրդի համաժամանակյա դիմագիծը, ժողովուրդն էլ իր աստվածանվեր որդու հոգու երանգներով ներկայանում է քաղաքակիրթ աշխարհին՝ միանշանակ հաստատելով այն ճշմարտությունը, որ ժողովուրդը ծնում է իր հանճարեղ զավակին, իսկ զավակը վերածնում է իրեն ծնող ժողովրդին:

Համաշխարհային մշակույթի պատմության մեջ քիչ չեն այն դյուցազունները, ովքեր ճամփա ընկնելով իրենց ազգային օջախներից, քայլում են դեպի համամարդկային հորիզոններ ու միասնաբար հնչեցնում մարդասիրության, խաղաղասիրության, հայրենասիրության, ազատասիրության, մարդու իրավունքների պաշտպանության, անհատի հուզաշխարհի գեղեցկության լուսավոր գաղափարներ: Նման հսկաներից է Սայաթ-Նովան, որը վաղուց միացել է առաջին մեծության աստղերի այն բույլին, որի մեջ են Հոմերոսն ու Նարեկացին, Ֆիրդուսին ու Հյուգոն, Շեքսպիրն ու Գյոթեն, Ռուսթավելին ու Բայրոնը, Պուշկինն ու Թումանյանը, Հեմինգուեյն ու Իսահակյանը, Ուիթմենն ու Չարենցը և էլի շատ գերաստղեր:

Բերելով անմահների այս ոչ լրիվ անունները՝ կարևոր եմ համարում ընդգծել հետևյալ ճշմարտությունը: Աշխարհահռչակ մեծությունների հաղթարշավի մասին խոսք բացելիս երկրորդական պլան են մղվում նրանց կենսագրական մանրագնին տեղեկությունները, որոնցով հետաքրքրվում են միայն գրականության պատմությամբ առանձին զբաղվողներ: Դա բա-

ցատրվում է նրանով, որ մեծությունները լինելով կոնկրետ մի դարաշրջանի ծնունդ, քայլ առ քայլ դառնում են գալիք սերունդների ժամանակակիցը, իրենց խորաթափանց ստեղծագործություններով պատասխանում այն հարցերին, որ հուզում են նորերին՝ համապատասխան նրանց աշխարհընկալման ու կենսահայեցողության երանգների:

Այսպես, դիմենք 300-ամյա Սայաթ-Նովային, թերթենք և ըմբռնենք այն պատկերները, որոնց մեջ դատողն ու տառապողը, ապրողն ու փիլիսոփայողը, սիրողն ու տառապողը, երագողն ու արարողը ես եմ, դու ես, նա է, մենք ենք՝ բոլորս: Իսկ այս զգացմունքներին ու խոհերին արդեն երեք դար է, ինչ պատասխանում է հենց ինքը՝ մեծն Սայաթ-Նովան:

Հայտնի է, որ Սայաթ-Նովան ստեղծագործել է հայերեն, վրացերեն, թուրքերեն և երեք լեզուների պատկերային հյուսվածքների աշխարհում ցուցաբերել է հավասարապես բարձր մակարդակ:

Սակայն այդ նկատելի հավասար մակարդակը վերաբերում է տվյալ լեզուների իմացությանը: Գոյություն ունի պոեզիայի անմիջականության և փիլիսոփայության մի հիմնախնդիր, որ առավել նկատվում է Սայաթ-Նովայի մայրենի լեզվով ստեղծած տաղերում: Ժամանակին քննարկելով այդ հարցը, հռչակավոր սայաթնովագետ Մորուս Հասրաթյանն ընդհանրացրել է. «Վրացերենում և ադրբեջաններում (թուրքերենում-Ս.Խ), Սայաթ Նովան կանգնում է մեր առջև որպես սիրաբան ու հուզաթաթավ, ազնիվ ու անմիջական, իմաստուն ու բարոյախոս մի աշուղ բանաստեղծ, որպես ժամանակի ընթացքում չմոռացվող շատ շնորհալի և մշտապես սիրելի բանաստեղծներից մեկը: Իսկ հայերենում նա անկրկնելի է իր անմիջականությամբ ու պարզությամբ, անօրինակ է իր նրբությամբ ու գունագեղությամբ, բացառիկ է հոգու և մտքի, աչքի և լեզվի ներդաշնակությամբ, մի պարզ, գերող կախարդ, մշտապես բաբախուն ջերմ սիրտ, ժողովրդական մի իսկական հանճար: Հայ գրականության մեջ մարդու և աշխարհի հետ այդ լեզվով և այդպես են խոսել հատկապես Նարեկացին ու Լաստիվերտցին, Աբովյանն ու Ալիշանը, Թումանյանն ու Իսահակյանը, Դուրյանն ու Տերյանը, վերջապես այդպես է մրմնջացել դարերով տառապած հայ ժողովուրդը հայ կնոջ և հայ պանդուխտի շուրթերով¹»:

Տվյալ դեպքում օրինակները կբերեն հայերեն նրա խաղերից, և ընթերցողը կհամզովի, որ մարգարե-երգիչն արտահայտել է բոլոր ժամանակ-

¹ Սայաթ-Նովա, խաղերի ժողովածու, Մ. Հասրաթյանի խմբագրությամբ, Երևան, 1963, էջ XIX:

ների մարդկային գործունեության բազմաշերտ ու խորքային կենսափիլիսոփայությունը:

Շաբաթներ առաջ գրական մի հավաքի ժամանակ ընկերներով տրտնջում էինք այն երևույթից, որ նոսրացել է գեղարվեստական գրականություն ընթերցողների թիվը, միաժամանակ նշում Ավ. Իսահակյանի խոսքը. «Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով»: Ջրուցակիցներից մեկը, ի հաստատումն այդ կանխագագումի, արտասանեց Սայաթ-Նովայի հետևյալ տողերը «Քամանչա» հանրահայտ տաղից.

*Ամեն սագի մեջըն գոված դուրս թամամ տա՛սն իս, քամանչա՛,
Նաքազ մարթն քիզ չի տեսնի, դուրս նըրա պա՛սն իս, քամանչա՛,
Ղա՛ստ արա՛՝ է՛լ լավ օրերու էդիվըն հասնիս, քամանչա՛,
Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուղի բա՛սն իս, քամանչա՛:
Մեր ընկերներից մեկն էլ ավելացրեց.*

Օջով դիմեթըտ չի գիդի - լալ ու ալմասն ի՛ս, քամանչա՛:

Ջրույցը շարունակվեց: Եվ ընդգծվեց, որ ամեն դեպքում Սայաթ-Նովան չի դավաճանել ինքն իրեն, արարել է Աստծո ընծայածի իր անմրցակից տաղանդի ուժով, արդարացրել «խալխի նոքար» լինելու իր պարտականությունը.

*Շատ տըխուր սիրտ կու խնդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն,
Յիսի քաղցր ծայնըտ վիր կոնիս, բաց կուլի հիղըտ խաղողըն.
Խալխին էս իլթիմազն արա՛՝ ասին. «Ապրի քու ածողըն»,
Քանի սաղ է Սայաթ-Նովէն, շա՛տ բան կու տեսնիս, քամանչա՛¹:*

Քամանչան, որ խորհրդանշում է հանճարի արվեստը, իրոք, շատ բան տեսավ ստեղծագործական բարդ ու դժվարին ճանապարհին, ինչպես ինքն է բնութագրել՝ «ճորտի դարում»: Իսկ հաշտվե՞լ է, արդյոք, մեծ արվեստագետը «ճորտի դարի» ճորտության հետ: Իհարկե, ոչ: Հենց այս «ո՛չն» է, որ Սայաթ-Նովային բարձրացրել է իր դարաշրջանից, միացրել երկրագնդի չորս ծալքերում բոլոր այն հումանիստ մեծություններին, ովքեր իրենց խոսքով, երգով, նույնիսկ կյանքով մարտնչել են չարերի ու չարիքի դեմ, երազել մարդու արժանապատվության հարգումն ու պահպանումը: Վճռորոշ կանգնելով արդարության պատվաբեր դիրքերում, նա կտակել է դարերին.

*Աշուղի լիզուն բըլբուլ է, օրհնանք ունե, նալաթ չը կա,
Շահի մոդ խոսկն անց կու կենա, սըպանելու ջալլաթ չը կա.*

¹ Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Մ. Հասրաթյանի խմբագրությամբ, Երեւան, 1963, էջ 5-6:

*Հեքիմ ու դատաստան չը կա, մե դըրուստ աղալաթ չը կա,
Մե մարթ չը կար՝ ազատիլ էր, Սայաթ-Նովան դարին մընաց¹:*

Իր դարի գավակը մնալով հանդերձ, Սայաթ-Նովան համոզված էր, որ լույսի և մթան պայքարում լույսի հաղթանակի համար քաջագուններ են պետք, որ կյանքը հերոսամարտի ասպարեզ է, որին պետք է նվիրումով մասնակցեն ժողովրդածին դուրացիները.

Վարթըն ասաց. «Իմ բըլբուլին ալ պուճպուճեն վո՞ւնց կու խափե.

Թե խիլք ունիս, դարիք բըլբուլ, է՛լ քու բաղի ճանփեն չափե»:

Քանի գուզե քընած տիղըն իր թըշնամին կուռըն կապե,

էլի վիրջումըն մեյդանըն Ռոստոմի Ջալուն մընում է՞:

Սայաթ-Նովան ասես կռահել է իր մայր ժողովրդի գալիք գոտեմարտերը և խորհուրդ է տվել՝ երբեք չխաբվել թշնամուց, քանզի գալու է հատուցման պահը՝ ժողովրդի անձնուրաց որդիների մասնակցությամբ: Եվ օրինակ է բերում պարսիկ հնադարյան աշխատավոր ժողովրդի ստեղծած «Շահնամե» էպոսի արդարամիտ հերոսին՝ Ռուստամ Ջալին: Բանաստեղծ-աշուղի մարգարեական խորհրդի իրականացումը հենց մեր ժողովրդի մղած Արցախյան ազգային-ազատագրական գոտեմարտն էր, ուր մեր քաջագունների կյանքի գնով փրկվեց մեր ժողովրդի ազգային արժանապատվությունն ու անկախ, ազատ ապրելու իրավունքը:

Դեռ ավելին: Մի քանի տարի է, ինչ Ադրբեջանի Պուճուր խան Իլիամ Ալիևը իր բարբաջանքներով ոչ միայն սուր է ճոճում Արցախի և Հայաստանի Հանրապետության դեմ, այլև ցինիկորեն հայտարարում է, որ հայերը եկվորներ են, որ Երևանը և հայոց բոլոր քաղաքներն ու բնակավայրերը կառուցված են «ադրբեջանական» հողերի վրա: Սա ոչ միայն ծիծաղելի է, այլև վրդովեցուցիչ, որովհետև խելքը գլխին ոչ մի ադամորդի չի կարող հորինել նման կեղծիք՝ շրջանցելով համաշխարհային պատմագրությունը, որտեղ սևով սպիտակի վրա ոչ միայն գրված է հայ ժողովրդի գոյության և հզոր հարևանների հետ փոխհարաբերությունների մասին, այլև գծագրված են քարտեզները, որտեղ սելջուկ-թուրքերի անունն անգամ չկա:

Սայաթ-Նովան իր տաղերում մեկ անգամ չի անդրադարձել ու խարազանել գալալյին բնավորություն և ախորժակ ունեցող տիրակալներին:

¹ Սայաթ-Նովա, խաղերի ժողովածու, Մ. Հասրաթյանի խմբագրությամբ, Երևան, 1963, էջ 49:

² Նույն տեղում, էջ 69:

Այս առումով ևս մեծ բանաստեղծը դրսևորել է մարգարեական իր կռահումները, որ արդիական հնչողություն ունեն: Այսպես, «Գելն ու չոբանը» տաղում մեծ երգիչը ներկայացնում է նենգամիտ գայլին և նրա հոխորտանքներին համարձակորեն պատասխանող հովվին:

Գելըն ասավ. *«Վուր ամպը գա ծըմակին,
Ակթեքըս կու գրցիմ դոչի դըմակին...
Կեսը կու խիխտիմ, կեսն էլ իմ քամակին
Մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց կուտամ»:*

Չոբանն ասավ. *«Գիդիս անտեր մա՞լ ունիմ,
Ճըտիտ համա էրկըթե կըրկալ ունիմ.
Թե վուր ճանգըս ընգար, յիս իղբալ ունիմ,
Կոմբլիս տակին կընծկընծալը շանց կուտամ»¹:*

Դժվար չէ նկատել, որ հովվի պատասխանը բոլոր ժամանակների, ինչպես և մերօրյա պայքարում զգուշացնում է նաև Ադրբեջանի կառավարող շրջաններին, որոնք վարում են անհեռանկար ու անհավասարակշիռ քաղաքականություն հարևան ժողովրդի հանդեպ: Սայաթ-Նովայի արիական ծոռները Շուշիի բարձունքներում իրենց իմաստուն աշուղ-բանաստեղծի խորհրդով պատրաստ են անասունների վզի մետաղե կապով (կրկալով) հաջողությամբ (իղբալով) մահակի (կոմբլի) ուժով ստիպելու, որ շան նման կընծկընծան:

Սայաթ-Նովայի պոեզիան կյանքի փիլիսոփայությունն է: Իսկ կյանքը վերացական հասկացողություն չէ: Այն մարդն է իր ներաշխարհի բազմաշերտ երանգներով: Իր սիրային տաղերում Սայաթ-Նովայի նկարագրած գոգալը ներկայացվում է որպես Աստծո ստեղծած բնության գլուխգործոց, ինչպես երգիչն է ընդգծում. «Թարիփըտ դավթար իմ արի, փիլ պիտի, վուր գիրքըն տանե»²:

Այս առումով, բնութագրական հավերժող խոսք է՝ Մեծ Լուռեցու դիտարկումը՝ «Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը» հոդվածում, գրված 1913 թվականին: «Սայաթ-Նովան,- գրել է նա,- մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհը ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպես

¹ Սայաթ-Նովա, *Խաղերի ժողովածու*, Մ. Հասրաթյանի խմբագրությամբ, Երևան, 1963, էջ 76:

² Նույն տեղում, էջ 17:

աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով և դեպի էն «զալումը», որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և դեպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրձվեցին էն կրակով, որի մեջ էրվում էր ինքը և դեպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում: Ջայրացավ, բայց երբեք չչարացավ, ցավեց բայց երբեք չանիծեց... նրա սերը նման է ընկերության, ընկերությունը՝ սիրո¹»:

Անդրադառնալով Սայաթ-Նովայի սիրերգությանը՝ կարող ենք կրկին հաստատել, որ նրա անունն իր տեղն է գտել համաշխարհային մեծագույն սիրերգակաների շարքում՝ որպես ինքնատիպ արվեստագետ: Դիմելով արևելյան աշուղական պոեզիայի հարուստ գանձարանին՝ նա ավելի է կատարելագործել նրա ժանրերը և՛ կենսափիլիսոփայական խորքով, և՛ բնապատկերային նրբերանգներով: Այստեղ կարևոր են համարում ընդգծել մեծ երգիչի սիրո առարկայի հիմնախնդիրը, որը դարձել է քննարկման առարկա սայաթնովագիտության մեջ: Ոմանք հաստատում են, որ նրա Սերը եղել է վրաց թագավոր Հերակլ Երկրորդի քույրը՝ Աննան, ոմանք ձգտում են ժխտել այդ ճշմարտությունը: Սակայն Սայաթ-Նովայի սիրերգությունը անձնավորել և Աննայի հանդեպ ունեցած զգացումները ներկայացնել որպես երգչի կենսագրություն, կլինի միակողմանի, երգարվեստի էությունը կաղապարող թեթև ընդհանրացում: Հարցին պետք է մոտենալ արվեստի պայմանականության դիրքերից, արվեստագետի վառ երևակայության սահմաններից, ընդհանրացման ուժով ժամանակների պատմեղները շրջանցելու և սերունդների սրտի խոսքը դառնալու հզորությունից: Նման մոտեցումը սայաթնովագետին կհանգեցնի ճշմարտացի մի եզրակացության, որ Սայաթ-Նովան Աննայի հանդեպ ունեցած աստվածային սիրո մեջ տեսել է մարդուն երջանկացնող նվիրյալ սիրո գաղափարը, սեր, որին, ցավոք, չէր կարող հասնել ինքը՝ վառվող, տառապող, չվայելող մեծ սիրահարը՝ Սայաթ-Նովան: Հենց դրա շնորհիվ է, որ յուրաքանչյուր ոք հավերժախոս աշուղբանաստեղծի երգերում առաջին հերթին ինքն իրեն է տեսնում, իր անունից դիմում սիրեցյալին, երբեք չմտածելով, որ այդ ջերմացնող արտահայտությունները պատկանում են 18-րդ դարի բանաստեղծին: Պոեզիայի հավերժական ուժի մասին են խոսում հանձարեղ գուսանի երգերը:

¹ Հ.Թումանյան Երկերի ժողովածու 4 հատորով, հ.4, Երևան, 1969, էջ 185-187:

Երևի շատերն են լսել սիրեցյալի խոստովանությունը Սայաթ-Նովայի բնութագրումներով. «Չկա քիզի նման... Դուն իս աննման»¹ կամ «Աշխարհիս շըվաք իս անում՝ սալբ ու չինար իս, գովելի»²: Իսկ կարոտից խենթանալու պահին խոստովանել է. «Ծովի պես ուրդան իմ տալիս, գըժվիլ իմ Արագի նըման»³: Քանի՜-քանի անգամ է հնչել այս քառատողը սիրո ցավի մեջ տառապողի շուրթերին և այսօր էլ հաճախակի է հնչեցվում.

*Արի, բըլբուլ, խոսի բարըն:
Օխնըվի քու էկած սարըն,
Քի վարթն էրից, ինձ իմ յարըն,-
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու»⁴:*

Իսկ երբ սիրեցյալը ցանկացել է ընդգծել իր սիրած էակի հանդեպ ունեցած անսպառ կարոտի զգացումը, բացականչել է. «Աշխարս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քեզնից սով մընաց»⁵: Կամ՝ «Դուն կըրակ, հաքածըտ կըրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ»⁶:

Վերլուծելով Սայաթ-Նովայի տաղերը, ականավոր հայագետ-բանասեր Մ.Աբեղյանը նկատել է, որ ըստ անմահ երգչի. «Սերը պետք է հաստատ լինի, և մարդ մի հատիկ յար ունենա: Այդպիսի սեր ունենալու համար պետք է երկուսն իրար հավասար լինեն: Այդպիսի յարն անգին է, որից ոչ մի բանով բաժանվել ու հեռանալ չի լինի, ոչ մարգարտով ու ալմաստով, ոչ մահով, ոչ ահով և ոչ շահի հրամանով»⁷:

Սիրո փառաբանումի պատկերավոր արտահայտություններն այնքան շատ են Սայաթ-Նովայի երգերում, որ կարելի է կազմել թևավոր մտքերի մի հանրագիտարան՝ մարդկային երջանկությունն ու ցավի սփոփանքը հավերժացնող սիրո մասին:

Սայաթնովագետները գրեթե միաձայն անմրցակից աշուղին համարում են սիրո մեծ երգիչ: Դա ճշմարիտ է: Սակայն Սայաթ-Նովան ինչքան սիրո երգիչ է, այնքան էլ մեծ մտածող է, որի խոհափիլիսոփայական, խրատական, հումանիստական, ազատասիրական, աշխատասիրության, բարության, համեստության և այլ գաղափարներն արծարծող երգերը եզակի գործեր են համաշխարհային պոեզիայի պատմության մեջ: Ուստի պետք է

¹ Նույն տեղում, էջ 8:

² Նույն տեղում, էջ 17:

³ Նույն տեղում, էջ 18:

⁴ Հ.Թումանյան *Երկերի ժողովածու 4 հատորով, հ.4, Երևան, 1969, էջ 19:*

⁵ Նույն տեղում, էջ 37:

⁶ Նույն տեղում, էջ 51:

⁷ Փ.Պ.ՕՍԿ, «Ռ՝Ռ, Ռ՝Ռ, Ռ՝Ռ, 1970, չջ 540:

նկատի առնել այն երևույթը, որ նրա խոհափիլիսոփայական խորհուրդներն արտահայտված են ոչ միայն կոնկրետ թեմատիկ գործերում, այլև սիրո մոտիվներում: Ասել է թե՛ Սայաթ-Նովան բացահայտել է երևույթի փիլիսոփայությունը: Այս առումով Աննային նվիրած գործերը դարձել են ոչ թե Աննաերգություն, այլ սիրերգություն, այսինքն՝ մարդերգություն: Դիմենք նրա գանձերին: Տեսեք, թե մարդասիրական, ընկերասիրական անձնուրացության ինչպիսի առինքնող տողեր են ծիածանված սիրային մի երգի մեջ.

Դարդ մի անի, ջան ու ջիգար, միթեկըտ դիվաց չը տեսնե.

Աչկ խավրի, անգաճ խուլանա՝ էրեսըտ թաց չը տեսնե:

Վունց արեգազն շուղկը տա, վունց լուսինը լուս անե.

Ավալ քու տեսնողըն միռնի՝ քիզ գլխիբաց չը տեսնե¹:

Սայաթ-Նովայի սերը մաքրագործող, թևավորող, խրատող, ազնվացնող աստվածային զգացում-խորհուրդ է: Եսասիրության, եսապաշտության նշույլ անգամ չկա նրա սիրերգության մեջ: Ընդհակառակը, նրա քնարական հերոսը դառնում է մարդուն ճիշտ ճանապարհի բերող ինքնօրինակ.

Գուզիմ՝ ումբրըս հենց անց կացնիմ՝ օրըս մունաթ չը քաշե.

Թեզուզ հազար դարդ ունենամ՝ դարըս մունաթ չը քաշե.

Դաստ անիմ, բարու հանդիբիմ՝ չարըս մունաթ չը քաշե.

Գըլուխըս չարեն ռադ անիմ՝ սարըս մունաթ չը քաշե.

Էրեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ չը քաշե²:

Դրանով հանդերձ, Սայաթ-Նովան մատնացույց է անում խրատողի իր նվաճած գանձերը, որոնցով իսկ, մի կողմից ընդգծում է հպարտանալու իր ազնիվ իրավունքը, մյուս կողմից՝ իր խրատը քարոզ չդարձնելու միտումը, որովհետև նա սովորական երգիչ չէր, այլ հայտնություն՝ օծված ու օրհնված Աստծու աջով: Ահա այդ օրհնական ինքնահաստատումը.

Մե բիռըս փռանգի ատլաս է, տալիս է շողք ու շափաղաթ.

Մե բիռըն զար-դալամքարի, տիղ ունի վունցոր մաքաղաթ.

Մե բիռըս Չինումաչինին կու առնե թամամ՝ փարաղաթ.

Մե բիռըն ենգիդունյա է, մե բիռն՝ փաչայի խալաթ,-

Վունց ձևիլ գուզե, վունց կըտրիլ՝ կարըս մունաթ չը քաշե³:

¹ Մ.Աբեղյան, Երկեր, հ.Դ., Երեւան, 1970, էջ 16:

² Նույն տեղում, էջ 27:

³ Նույն տեղում:

Այսպես, մեծ աշուղ-բանաստեղծի սիրային երգերը համեմված են մարդուն մարդ պահող, քրտնաթոր վաստակով պատվի արժանացնող, կյանքը հրաշալի գործերով գեղեցկացնող սրբազան խոհերով ու խորհուրդներով: Եթե կարող են լինել գրքասերներ, որոնք նշեն, թե իբր Սայաթ-Նովան հայրենիքին նվիրած երգեր չունի, չարաչար սխալված կլինեն: Հայրենիքի հանդեպ ունեցած սիրո, նրա գրկում ապրելու և նրանում հող դառնալու աստվածահաճո խնդրանք ու ցանկություն է Հերակլ թագավորին ուղղած տաղի վերջին ընդհանրացումը. «Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի»: Կամ՝ «Մեռնելուս համա չիմ հոքում, ցիղի համա իմ լալի»¹: Սայաթ-Նովան հայրենասիրությունը տեսել է առաջին հերթին մեծատառով սկսվող մարդու լինելության մեջ: Այս դիտարկումի հետքերով բավական է բերել միայն նրա երգերից մեկի կիզակետային տողերը, որոնք քրիստոնեական բարոյահոգեբանական դաստիարակության պոետական խտացումներ են.

...Հայա սիրե, աղաբ սիրե, ար սիրե...

...Աստված սիրե, հոքի սիրե, յար սիրե...

...Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե...

...Խրատ սիրե, սաբըր սիրե, շար սիրե...

...Աղկատ սիրե, դոնաղ սիրե, տար սիրե...

...Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե...²

Սայաթ-Նովայի պոեզիան մի ամբողջ դարաշրջանի՝ 18-րդ դարի գեղարվեստական ամենաբարձր ու հավաստի վավերագրությունն է, որտեղ ինչպես կախարդական հայելում, արտացոլված են ճորտատիրական կացութաձևի արատներն ու դրանց արտահայտությունը մարդկային փոխհարաբերություններում.

Վուրտիղ հարսնիք, վուր տիղըն սուք, վուր տիղ տոյբաթ խաղ է ըլում,

Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք, վուր տիղ սիրով տաղ է ըլում,

Թե վուր հոքուտ կամքն իս անում, մարմինտ բեղամաղ է ըլում՝

Վո՛ւր մե դարդին կու դիմանաս, դուն ջըրատար Սայաթ-Նովա՞:

Ժողովրդի ցավն ու սուգը իրենը համարեց ժողովրդի ազնիվ, հանճարեղ զավակը՝ իր կրակված սրտի զեղումները հանդիսացող երգաշարին ավելացնելով.

¹ Նոյն տեղում, էջ 52:

² Մ.Աբեղյան, Երկեր, հ. 7., Երեւան, 1970, էջ 28:

³ Նոյն տեղում, էջ 53:

*Ով տեսնում է, էս է ասում. «Վա՛յ քու դարին, Սայաթ-Նովա,
Համաշա քիզ պիտինք տեսնի, աչկըտ արին, Սայաթ-Նովա,
Ինչո՞վ չելավ, չըռաստ էկար մե լավ յարին, Սայաթ-Նովա,
Ումբըրս էրագի պես գընաց՝ ծառըս չըխերած գիտենաք¹։*

1759 թվականին, երկրորդ անգամ Հերակլ Երկրորդի պալատից Սայաթ-Նովան հեռանալուց հետո էլ երբեք ու երբեք չի երկատվել, քանզի նա զգացել է, որ անազնիվ ու ազահ թավադները երրեւէ չեն ներելու իրեն, ամեն կերպ ձգտելու են հաշվեհարդար տեսնել իր հետ՝ նրանց քննադատելու և ծաղրելու հետևանքում։ Պալատից հեռանալուց հետո Սայաթ-Նովան ժողովրդի դարավոր անբիծ արժանապատվության զգացողությամբ հղիացած ազնվականներին դիմել է հետևյալ խարազանող խոսքով.

*Ձեռը վի կալ, վադ մարթութին չիմ ուզում,
էս աշխարում փարթամութին չիմ ուզում,
Վադ բան ասիլ, յա վադութին չիմ ուզում,
Յիս մարդ մարթ իմ՝ նամարդութին չիմ ուզում,
Յիս ռամիկ իմ, թավադութին չիմ ուզում²։*

Համաշխարհային փիլիսոփայական քնարերգության գլուխգործոցների շարքում իր տեղն ունի Սայաթ-Նովայի «Աշխարըս մե փանջարա է...» տաղը։ Ժողովրդական կենսափիլիսոփայության լեզվով մեծ գուսանը ներկայացրել է կյանքի հարափոփոխ ընթացքը միայն իր արվեստին հասուկ խորաթափանցությամբ ու պատկերավորությամբ։ Յուրովի արտահայտելով իր դժգոհությունը ժամանակի դաժան օրենքներից ու մարդկային անհավասար փոխհարաբերություններից՝ երգի մեծագույն վարպետը ձգացել է.

*Աշխարըս մե փանջարա է,- թաղերումեն բեզարիլ իմ,
Մըտիկ տըվողըն կու խուցվի,- դաղերումեն բեզարիլ իմ,
էրեզ լավ էր, կանց վուր էսօր,- վաղերումեն բեզարիլ իմ,
Մարթ համաշա մեկ չի՛ ըլի,- խաղերումեն բեզարիլ իմ³։*

Թաղերից, դաղերից, վաղերից, խաղերից բեզարելու գաղափարը բանաստեղծական արտահայտամիջոցներ են, ու դրանցով մեծ երգիչը քննադատել է դարաշրջանի անօրինությունները, որոնց հետ երբեք չի հաշտվել։

¹ Նույն տեղում, էջ 75:

² Մ.Աբեդյան, Երկեր, հ.Ղ., Երեւան, 1970, էջ 128:

³ Նույն տեղում, էջ 70:

Սայաթ-Նովան աշխարհի մի շարք մեծությունների պես ստիպված է եղել ընդգծելու աստվածանվեր իր շնորհքն ու կարողությունը, ապագայի հանդեպ ունեցած իր հավատը: Հերակլ Երկրորդի անարդարացի վերաբերմունքի արդյունքում, երբ Սայաթ-Նովան հեռացվել է արքունիքից, երբեք չի վիստվել, ընդհակառակը, բարձրաձայնել է.

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրերն է,

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրերն է,

Բունիաթըս ավագ չիմանաս, քարափ է, քարուկըրեն է...¹

Հիրավի, Սայաթ-Նովայի երգարվեստի հիմքը և՛ ամուր է, և՛ թևավոր: Այն ճեղքելով դարերի բոլոր արգելքները, ճախրել է՝ ժողովրդի ոգուն ծուլված, որովհետև խոսել է մարդու և մարդկության ցավերի ու հույսերի, սիրո տառապանքի ու քաղցրության մասին, որոնք ուղեկցել և ուղեկցելու են կյանքին: Դրա մեջ է կայանում Սայաթ-Նովայի ստեղծագործության հավերժական գաղտնիքը: Հենց դրա շնորհիվ է նա դարձել հավերժի ճանփորդը:

Гений народного песенного искусства
(К 300-летию со дня рождения Саят-Новы)
Сократ Ханян
Резюме

По решению ЮНЕСКО в 2012 году во всем мире отмечалось 300-летие со дня рождения великого армянского ашуга-поэта Саят-Новы.

Данная статья посвящена философии поэзии бессмертного художника.

Саятнововедение в основном считает Саят-Нову певцом любви. Автор данной статьи конкретными примерами доказывает, что творчество Саят-Новы насыщено философской осмысленностью жизни.

Отсюда и вытекает многогранность его поэзии, где самобытными поэтическими образами воспеты темы божественной любви, трудолюбия, патриотизма, свободолюбия, братство народов и т. д.. Ярким примером этого является и то, что поэт свои песни создал и воспевал на разных: армянском, грузинском, тюркском, иногда и персидском, арабском языках.

¹ Նույն տեղում, էջ 20:

Genius of Folk Song Art
(to the 300 anniversary since the birth of Sayat-Nova)
Sokrat Khanyan
Summary

By UNESCO in 2012, around the world celebrate the 300-th anniversary of the birth of the great Armenian poet-ashug Sayat Nova.

This article is devoted to the philosophy of the immortal poetry of the artist.

Sayatnovevedenie basically considered Sayat Nova as a singer of love.

The author has specific examples proving that creativity of Sayat Nova full of philosophical understanding of life.

This implies the complexity of his poetry, where the distinctive poetic images glorified theme of divine love, hard work, patriotism, freedom, brotherhood of people, etc.

A striking example of this is the fact that poet has created the songs and sang at various Armenian, Georgian, Turkish, and sometimes Persian and Arabic.

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՈՒՇԻՆ*

Օֆելյա Բաբայան

*Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
ԱրդՀ*

2012-ին լրանում է հայ գրատպության 500-ամյակը. հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը հայերեն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրել է 1512թ. Վենետիկում: Տոնակատարությունը սկսվել է Վենետիկի սուրբ Ղազար կղզուց և կշարունակվի ողջ տարվա ընթացքում: XIX դարի երեսունական թվականներին տպարան է բացվել նաև Շուշի քաղաքում:

Տպագրության գյուտը կապվում է Հովհան Գուտենբերգի հետ, որը 1455թ. գերմանական Մայնց քաղաքում հրատարակել է առաջին գիրքը: Այդ հայտնագործությունը այնուհետև տարածվել է Իտալիայում (1465), Իռլանդիայում (1465), Շվեյցարիայում (1468), Չեխիայում (1468), Ֆրանսիայում (1470), Լեհաստանում (1473), Անգլիայում (1474), Ղանիայում (1482), Շվեդիայում (1483), Պորտուգալիայում (1487) և այլն: Եվրոպական երկրներին ու ժողովուրդներին ավելանում են հայերը: Բայց հայ-

Դարերով Հայոց երկիրը մաքառել է արտաքին թշնամիների դեմ, փրկվել բնաջնջումից, պահպանել իր ազգային կերպարանքը: 15-16-րդ դարերում ևս արևելքից ներխուժող ցեղերը մասսայական արտագաղթի պատճառ են դարձել: Գաղթողների մի մասը «նոր հայրենիքում» կարողացել է ոչ միայն բարեկեցիկ կյանք ստեղծել, այլև գործել «յոգուտ ազգի և հայրենեաց»: Դեռ Կիլիկյան հայ թագավորության օրերից Իտալիան քաղաքական և առևտրական հարաբերություններ ուներ հայերի հետ. «Վաղուց հավատացնում են, որ հետագայում վենետիկյան կոչվող ընտիր ժանյակների արտադրությունը առաջին անգամ հայ արհեստավորներն են մտցրել Վենետիկ, ինչպես և բանասեր, պրոֆ. Լևոն Մսերյանի կարծիքով՝ կրկնակ հաշվապահության իտալական կոչված ձևը հայ վաճառականների հեղինակությունն է»: Այդ շահերից ելնելով՝ Մարկոս Ծիանին, որը շատ անգամ էր եղել Կիլիկիայում ու հարստացել էր այնտեղ, Վենետիկում նույնիսկ հիմնել էր «Հայոց տունը»՝ հայերի համար իջևան, որտեղ էլ հանդիպում էին տարբեր տեղերից եկած վաճառական, կրոնավոր կամ աղքատ հայերը: 1510-ական թվականներից Վենետիկում արդեն գործում էին մոտ երկու հարյուր տպարաններ, հարյուրավոր գրախանութներ: 25 տարվա ընթացքում Վենետիկում տպագրված գրքերի թիվը հասնում էր երկու միլիոնի: Բացի կրոնական բովանդակության գրքերից՝ Վենետիկում տպագրում էին նաև դասականների երկեր²: «Հայոց տանը» ապրողներն էլ օգնում էին Վենետիկի արհեստավորներին՝ հայկական տառեր փորագրելու և ձուլելու: Եվ 1512թ. Վենետիկում Հակոբ անունով հայը տպագրում է հինգ հայերեն գիրք (Ուրբաթագիրք, Պատարագատետր, Աղթարք, Պարզատունար, Տաղարան)՝ երկգույն (սև և կարմիր) ներկերով,

² Լեո, Երկերի ժողովածու, հ.5, Եր., 1986, էջ 128-129: Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 38-39:

բոլորագիր ուղղահայաց տառերով, ծաղկատառ գլխագրերով, գլխազարդերով: «Պատարագատետրը» եկեղեցում գործածելու համար էր, մնացածները ժողովրդական գրքեր էին: Հատկապես աչքի էր ընկնում «Տաղարանը», որն ընդգրկում էր XV դարի ժողովրդական երգասացների, այդ թվում և Հովհաննես Թևեկյանցու երգերը¹:

Երկրորդ հայ տպագրիչը՝ Աբգար Եվդոկացին կամ Թոքատցին, ով հայտնի է Աբգար Դպիր անունով, դարձյալ հանդես է գալիս Վենետիկում 1560-ական թվականներին: Միքայել Սեբաստացի կաթողիկոսը քաղաքական նպատակներով 1562թ.մայիսին Աբգար Ամիրբեկյանի գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում Հռոմի պապի մոտ: Իբրև ընծա տանում են նաև «մյուռն, խաչոսկի, մատանի օրհնյալ և ս. Թեոդորոսի մասունք»: Մեկ ու կես տարի տևում է այդ ճանապարհորդությունը: 1563թ. վերջերին Աբգար Թոքատցին հասնում է Հռոմ, ներկայանում Պիոս IV-ին, նրան հանձնում հայոց կաթողիկոսի գրություններն ու ընծաները: Էջմիածին վերադառնալիս Աբգարը լինում է Վենետիկում, ծրագրում ներկայանալ մի քանի պաշտոնատար անձանց: Սակայն իմանալով, որ թուրքական կառավարությունը լսել է իր պատգամավորության քաղաքական նպատակի մասին, վախենում է շարունակել ճանապարհը: Որոշում է հայերեն գրքեր տպագրել: Նա ծուլել է տալիս երկու տեսակ հայերեն նոր տառեր և 1565թ.մի թերթի վրա լույս ընծայում առաջին հայերեն տպագիր օրացույցը, որ կոչվում է «խառնայինթոր տունարի գեղեցիկ և պիտանի»: Այդ օրվանից Աբգար դպիրը, Եվրոպայի սին խոստումներից և «հավատի գնով» առևտուր անելուց հուսախաբ, դադարում է քաղաքական գործիչ լինելուց և զբաղվում տպագրության գործով: Նրա ջանքերով նույն 1565թ. լույս է տեսնում մի Սաղմոսարան կամ «Փոքրիկ մեկնիչ սաղմոսաց»: Փաստորեն 1513-ից մինչև 1565 թ. հայերեն գրքեր չեն տպագրվել: Հռոմի հաջորդ պապի՝ Պիոս V-ի օրոք հավատաքննությունը ավելի է սաստկանում: Անհնարին է դառնում առանց «լատին կղերին գրաքննության» «լուսավորչական» հայ եկեղեցու գրքեր հրատարակել: Եվ Աբգար Թոքատցին 1567թ. գնում է Կ.Պոլիս՝ այնտեղ շարունակելու իր տպագրական գործունեությունը²:

¹ Լեո, *Երկերի ժողովածու*, հ.5, Եր., 1986, էջ 131:

² Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Եր., 1958, էջ 59-67: Լեո, *Երկերի ժողովածու*, հ.5, Եր., 1986, էջ 158-164:

Կ.Պոլսում հայոց Ս.Նիկողայոս եկեղեցուն պատկանող ու նրան կից շենքում բացվում է առաջին հայկական տպարանը, որը 1567-69թթ. տպագրում է հայոց եկեղեցուն նվիրված, լուսավորչական եկեղեցու մեջ գործածվող գրքեր, դրանով իսկ համեմատաբար թուլացնում կաթոլիկ տպարանների ազդեցությունը հայերի վրա («Փոքր քերականութիւն կամ այբբենարան», «Ժամագիրք կամ աղօթամատոյց», «Պատարագամատոյց», «Տօնացոյց», «Պարզատումար», «Տաղարան», «Մաշտոց»):

Որոշ դադարից հետո՝ 1584թ., Հռոմում հայ քահանա Հովհաննես Տերգնցին իր որդի Խաչատուրի հետ Աբգար Թոքատցու որդի Սուլթանշահ-Մարկ Անտոնի հովանու նեքո տպագրում է Գրիգոր XIII պապի հաստատած նոր տոմարի լատիներենից հայերեն թարգմանությունը («Տումար Գրիգորեան»), որի արդյունքում Գրիգորյան տոմարական ռեֆորմը Արևմուտքից տարածվում է նաև Արևելքում: Այնուհետև 1587թ. Հովհաննես Տերգնցին որդու հետ Վենետիկում տպագրում է դավանաբանական տեսակետից մի անմեղ գիրք՝ Սաղմոսարան¹:

Հայերեն հաջորդ գիրքը («Սաղմոս») տպագրվում է Լեհաստանի Լվով քաղաքում (այժմ՝ Ուկրաինա): 1616թ. Հովհաննես Քարմատանենցը Լեհաստանում բացում է առաջին հայ տպարանը, ինչպես ինքն է ասում՝ «կազմարանը»: Գիրքը, բացի բուն սաղմոսից, ունի մի շարք աղոթքներ և Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմքը»: Միլանում 1621թ. Աբրոսյան վարժարանի տպարանում տպագրվում է Ֆրանցիսկո Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանը՝ «Բառգիրք Հայոց»: Այն վերահրատարակվում է Փարիզի արքունի կամ ազգային տպարանում 1633թ.:

Հռոմում՝ տեղի հայ գաղութի «հոգևոր հովիվ» Բարդուղիմեոս քահանան իտալացի Ստեփ. Պավլինոսի տպարանում, 1623թ. տպագրում է «Կանոն Էվձենիոսի չորրորդի Փափի» գիրքը: Դա 1439թ. Եվգենիոս Դ պապի՝ Ֆլորենցիայի ժողովին տված լատին և հայ եկեղեցիների իբր միացման մասին կոնդակի լատիներենից հայերեն թարգմանությունն է: Նույն թվականին Հռոմում՝ Ուրբանյան դպրոցի տպարանում, տպագրում է նաև մի այբբենարան՝ «Այբուբենք Հայոց եւ հրամանաւ սրբազան Գրիգորիս հնգետասաներորդի սուրբ Փափին... այլ ևս սուրբ ժողովոյն որ վասն հաստատութեան հաւատոյ, կարգեալ կազմեալ եղև թվ ՌՌԻԳ»: 1624թ. լույս է տեսնում նույն հեղինակի հայերենի քերականությունը՝ լատիներեն բացատրու-

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 68-74:

թյամբ: 1630թ. Ուրբանոս VIII-ի հրամանով Հռոմի կաթոլիկության պրոպագանդայի տպարանի հայերեն բաժինը տպագրում է «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» կրոնական գիրքը, որը ֆրանսերենից թարգմանել էր հայ քահանա Պողոս-Պետրոսը: Գիրքը վերահրատարակվել է 1634թ.: «Հաւատոյ տարածման սուրբ ժողովի» ջանքերով Հռոմի Ուրբանյան դպրոցի տպարանում տպագրվում են նաև կրոնական-դավանաբանական այլ գրքեր՝ «Դաւանութիւն ճշմարիտ և ուղղափառ հաւատոյ», «Քրիստոնէական վարդապետութիւն», «Ձեռքածութիւն յերկինս», «Մանաւանդականք առարկութիւնք» և այլն: Նույն տպարանում են տպագրվել նաև կրոնավոր Կղեմես Գալանոսի կազմած հայոց լեզվի քերականությունը՝ լատիներեն բացատրությամբ (Համառօտ քերթողութիւն քերականութեան շարակարգեալ ի կարգէ Թէաթինոսաց Կղեմէս վարդապետէ, ներում կատարելապէս պարունակին արիեստք չորք, այսինքն. Ուղղագրութիւն, Բանաստեղծութիւն Արտաբերութիւն և Շարադրութիւն, արտահանեալ ի քերականութեանցն հայոց, յունաց և լատինացւոց. ի խնդրոյ Յովհաննէս Եդեսացւոյ. քաջ ռաբունապետի և աստուածաբան Արքեպիսկոպոսի Միջագետաց աշխարհի» (1645թ.), «Միաբանութիւն Հայոց ս. եկեղեցւոյն Հռովմաց» երեք հատորից կազմված գիրքը և հայ-լատիներեն մի քերականություն (1675թ.), ինչպես նաև Աստվածատուր Ներսեսովիչ եպիսկոպոսի «Բառգիրք հայերեն-լատիներեն (1695 թ.) բառարանը¹:

XVII դարի 40-ական թվականներին Վենետիկում գրատպությամբ զբաղվում էր նաև Հովհաննես Անկյուրացին, որին իտալացիները կոչում էին Ջիովաննի Մոլինո: 1642թ.մի հույն տպարանատիրոջ մոտ հրատարակում է «Սաղմոս ի Դաւիթ» գիրքը (գրաշարը Հովսեփ անունով տասներկուամյա մի տղա էր), 1643-ին՝ «Յիսուս որդին»: 1660-ին լույս է տեսնում վերջին հրատարակության արտատպությունը (գրաշարը Ստեփան անունով մի հայ տղա էր, սրբագրիչը՝ Յաղուբ աղա Ջուղայեցին): Վենետիկում մի քանի իտալացի հրատարակիչներ իրենց տպարաններում հայկական բաժին էին սարքավորել ու գրքեր էին հրատարակում: Օրինակ՝ Միքել Անջելո Բարբոնին 1671թ. տպագրում է «Տօնացոյցը», մինչև 1693 թվականը՝ ևս 13 գիրք՝ «Հայելի ճշմարտութեան», «Բուրաստան աղօթից», «Նորագոյն ծաղիկ զօրութեան» և նման գրքեր: Իսկ

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 80-82: Լեո, Երկերի ժողովածու, հ.5, Եր., 1986, էջ 128-132:

1695-ից մինչև 18-րդ դարի 70-ական թվականները հայերեն հրատարակությունները շարունակում է Անտոն Բարթոլի տպարանը: Այդ տպարանատերերը հաճախ հայ վաճառականներից գումարներ էին ստանում իրենց «հայասեր» գործունեության համար և նրանց անունը դրոշմում գրքի ձևակալին: Օրինակ՝ 1684թ. Բարթոնի տպարանում տպագրվել է «Աւետարանը», որի առաջին էջին գրված էր «արդեամբք և գոյիւք ագուլիսցի Մարտիրոսի որդի Ոսկանի»: Երևանցի Թադեոս ք.Համազասպյանը հայ վաճառական ջուղայեցի Խոջա Սահրատի որդի Գասպարի հետ նույնպես փորագրել և ծուլել է տալիս տառեր՝ «գմինն խոշորածն և գմիւսն մանրագոյն ի պէտս խորագրաց» և 1686-ին տպագրում «Խորհրդատետր» (կամ «Պատարագատետր») գիրքը: Նույն թվականին է տպագրվում նաև «Ճաշոց» գիրքը 2 հատորով, 1687-ին՝ Հովհաննես Հոլովի «Խոկումն քրիստոնէական», «Պատասխանատրութիւնք», «Պարզաբանութիւն սաղմոսաց» և այլ գրքեր: Այդ տպարանը գործում էր իտալացի Ջիակոմո Մոռետիի տպարանին կից¹:

XVII դարում տպարան է ստեղծվում նաև Իրանում՝ Նոր Ջուղայում: Հայտնի է, որ Նոր Ջուղան թագավորի հրամանով հիմնել են ջուղայեցի գաղթականները: XVII դարի երեսունական թվականներին արդեն Արևելքում այն դարձել էր տնտեսական և մշակութային օջախ: Քաղաքի առաջնորդ Խաչատուր վ.Կեսարացին հիմնում է դպրոց, գրադարան, նաև տպարան և տպագրում պարսկահայ առաջին գիրքը՝ «Հարանց վարքը» (1641): 1642-ին տպագրվում է «Ատենի ժամագիրքը»: Դեռևս 1639-ին Խաչատուր Կեսարացին իր աշակերտներից մեկին՝ Հովհաննես վ. Ջուղայեցուն, ուղարկում է Եվրոպա՝ տպագրական գործն ուսումնասիրելու: Այդ ճանապարհորդությունը տևում է մոտ հինգ տարի: Վարպետների հետ հայերեն տառերով Հռոմից գնում է Լիվոռնո, մի իտալական տպարանում տպագրում «Սաղմոսք Դաւթին» գիրքը (1644թ.)՝ Խ.Կեսարացուն ուղարկելու համար: Հովհաննես Ջուղայեցին Նոր Ջուղա է հասնում Խ.Կեսարացու մահից հետո: Մեծ դժվարություններով 1647թ. հրատարակում է իր մի աշխատությունը՝ «Պարզատումար Ագարիայի փոխարկեալ ի Յովհաննէսէ վարդապետէ Ջուղայեցոյ աշակերտէ մեծին Խաչատուրոյ Կեսարացոյ»: 1650թ. փորձում է հայերեն տպագրել Աստվածաշունչը, բայց մի քանի մամուլ տպագրելուց հետո

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 90-97:

Խ.Կեսարացին ստիպված է լինում փախչել Էջմիածին: Որոշ դադարից հետո՝ միայն 80-ական թվականներին, Նոր Զուղայում տպագրվում է երեք գիրք՝ «Գիրք ժողովածոյ ընդդեմ երկաբնակաց» (1686), «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական» (1688) և «Կրթութիւն հաւատոյ, Հովհ.վ.Մրքուզի» (1688)¹:

Հայ գրատպության պատմության մեջ կարևոր տեղ ունի Ամստերդամը, ուր հայերեն գրքերի տպագրությունը սկսվել է 1660-ին, ավարտվել 1716-ին: Հայոց Հակոբ Դ կաթողիկոսը կաթողիկոսության քարտուղար և ծաղկող դպիր Մատթեոս Ծարեցուն 1656-ին ուղարկում է Եվրոպա՝ հայկական տպարան հիմնելու հանձնարարությամբ: 1658-ին հասնելով Ամստերդամ՝ նա հայերեն տպագրական տառեր է պատրաստել տալիս, բայց հիվանդանում է, և սկսած գործը շարունակում է Էջմիածնի միաբան Ոսկան վարդապետի վաճառական եղբայրը՝ Ավետիս Ղլիճենցը: Վերջինս հրավիրում է նաև իր եղբորը՝ Ոսկան վարդապետին: Ավետիսը վերջացնում է Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» գրքի տպագրությունը, 1663-ին տպագրում նաև «Ժամագիրքը»: Տպարանի գործը շարունակում է Կարապետ Ադրիանեցին, որը սիրով սպասում էր իր «մեծ ռաբունապետ» ուսուցչի՝ Ոսկան Ղլիճենցի (Երևանցի) ժամանելուն: Ավարտում են «Շարականի տպագրությունը», 1666-ին լույս է տեսնում «Այբբենարան և քրիստոնեական» դասագիրքը, Ոսկան Երևանցու տպարանում 1666-68 թթ. լույս է տեսնում առաջին հայերեն «Աստվածաշունչը» (Երկրորդ տպագրությամբ 1705թ. լույս է տեսնում Կ.Պոլսում: Երրորդը Մխիթար Աբբայի «Աստուածաշունչն» է, որ տպագրվել է 1773-ին Վենետիկում՝ Անտոն Բարտոլիի տպարանում): Նույն տարիներին լույս է տեսնում ևս 12 գիրք՝ «Ավետարանը» (Նոր կտակարան), «Մաշտոցը», «Աղուէսագիրքը», Մ.Խորենացուն վերագրվող Աշխարհագրությունը, «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեան որ է Աղուէսագիրք» և այլն: 1669թ. հրատարկվում է ևս երկու գիրք՝ «Ձայնքաղ շարական հայկական խաղերով» և Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը», 1670-ին՝ «Քրիստոնեական», 1671-ին՝ «Պարտեզ հոգևոր» գրքերը:

1672թ. Ոսկան Երևանցին իր տպարանը փոխադրում է Մարսել, որտեղ էլ ընդհատումներով գործում է մինչև 1683թ.: 1673թ. լույս է տեսնում «Գրքույկ կարևոր հանապազորդեան» գիրքը: Սակայն Հռոմի կաթոլիկ եկեղեցին չէր կարող չհետևել Ոսկան Երևանցու

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 83-90:

հրատարակություններին, որովհետև նա «կապ ունի էջմիածնի կաթողիկոսի հետ» Տպարանում շարվում էր «Ատենի ժամագիրքը», որը հազիվ լույս է տեսնում 1679-ին: Հալածանքների պայմաններում «Սրբ. էջմիածնի և Սուրբ Սարգսի գորավարին» տպարանում 1676թ. տպագրվում է «Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի» գիրքը, 1683-ին՝ «Ակն հոգեկան» և «Պարտեզ հոգևոր» գրքերը:

Թովմա վ.Նուրիջանյանը, որ «եռամեծ վարդապետի» անուն էր շահել, 1693թ. Գողթնից հասնում է Ամստերդամ, որտեղ 1695թ. հայոց մեջ առաջին անգամ հրատարակվում է աշխարհագրական մի մեծադիր քարտեզ՝ «Համատարած աշխարհացոյցը», որն ուներ իր բանալին՝ «Բանալի համատարած աշխարհացոյցի» (1696): 1696-ին լույս է տեսնում «Թովմաս Գեմբացի», 1698-ին՝ «Նոր կտակարան», «Ձայնքաղ շարական»: 1699-ին՝ «Դուռն իմաստութեան» կամ «Ոսկեայ դուռն դպրատան», «Գանձ չափոց, կշռոց թւոց և դրամից բոլոր աշխարհի», «Պատմութիւն վաճառականութեան» գրքերը: 1698թ., առանց տպարանի հիշատակության, տպագրվում է նաև «Բառգիրք Հայոց Երեմիա վարդապետի» գիրքը¹:

Ամստերդամի հայկական տպարանը գործում է մինչև 1717 թվականը: Տպարանը ղեկավարում էր Նուրիջանյան Թովմաս եպիսկոպոսը, աշխատակիցներն էին նրա ազգականներ Ղուկաս, Միքայել և Մատթեոս Վանանդեցիները: Ամստերդամում է գերմանացի հայագետ Շրյոդերը Թովմա եպիսկոպոսից ու Ղուկասից հայերեն սովորել, գրել «Արամեան լեզուի գանձ» հայերեն-լատիներեն գիրքը, որը տպագրվել է նույն տպարանում 1711թ.: 18-րդ դարասկզբի 17 տարիներին Ամստերդամի հայկական տպարանում լույս է տեսել 14 գիրք՝ «Բնաբանութիւն իմաստասիրական և տարերական» (1702), «Պաշտօն աստուածային...» (1704), Հովհ.վարդ. Զուղայեցու «Համառօտ քերականութիւն և տրամաբանութիւն» (1711), «Հայելի Աստուածաշունչ Հին Կտակարանի» (1713), «Պատկերասէր պատկերատեաց» (1716), «Ժամագիրք» (1717) և այլն:

18-րդ դարում մի քանի ոչ հայկական տպարաններ շարունակել են հայկական գրքերի տպագրությունը: Դրանցից է Հռոմի Ուրբանյան կամ «Հաւատոյ տարածման սուրբ ժողովոյն» բազմալեզվյան տպարանը, որը հայատառ գրքեր է հրատարակել մինչև 1756 թվականը (սկսել է 1623թ.), Վենետիկի Անտոն Բարտոլիի տպարանը՝ մինչև 1777թ. (սկսել է 1695թ.),

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 97-119:

որտեղ տպագրվել են Մխիթար Աբբայի «Աստուածաշունչը», Հայկազյան բառարանի Ա,Բ հատորները և այլ գրքեր, նաև Պիետրո Վալվազիայի և Զիովանի Պիացոյի տպարանը, որտեղ տպագրվել են Մ.Չամչյանի «Հայոց պատմության» Ա,Բ,Գ հատորները, Միլանի Ամբրոսյան վարժարանի և այլ տպարաններ: 1788թ. Ս.Ղազար կղզում Մխիթարյան միաբանությունն արդեն հիմնում է հայկական տպարան¹:

Աբգար Թոքատցու տպագարական գործունեության դադարից հետո Կ.Պոլսում նույնպես հիմնում են մի շարք տպարաններ, որոնց մեջ կարևորվում է Գրիգոր Մարգվանցու՝ XVII դարի վերջերին հիմնած տպարանը: Այդտեղ տպագրվել են «Տաղարանը» (1698), «Խորհրդատետր Սրբազան Պատարագի» (1706), «Յայսմաուրք» (1706), Ագաթանգեղոսի պատմությունը (1710), Հովհ.Մրքուզի «Կրթութիւն հաւատոյ» (1713), «Մեկնութիւն Աւետարանի Հովհ.Ոսկեբերանի» (թարգմանություն) «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ Գլակ» (1719), «Գիրք Տոմարաց և Տաղարան փոքրիկ» (1723), «Նարեկ» (1726), «Ներքող Լուսաւորչին» (1734) և այլն:

1700թ. Կ.Պոլսում տպարան է հիմնում Աստվածատուր Ապուլեխցին: Նույն թվականին էլ լույս է ընծայում Գր.Նարեկացու «Աղթագիրքը» կամ Նարեկը: Հրատարակվող գրքերի սրբագրությունը կատարում է Բաղդասար դպիրը: Աստվածատուրի տպարանում են տպագրվել Առաքել Սյունեցու «Հարանց վարքը» (1720, վերահրատարակություն), «Աղամգիրքը» (1721), Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը (1729), «Գիրք Սահմանաց Ղաթի անյաղթ փիլիսոփայի և աստուածաբան վարդապետի» (1731), Հովհ. Հաննա վարդապետի «Գիրք պատմութեան սրբոյ և մեծի Երուսաղէմիս» (1734), Բաղդասար Ղաթիի «Քերականութիւնը» (1736), Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Յաճախապատումը» (1737), Գրիգոր Սկեռացու «Գիրք աղօթից» (1742), «Չայնքաղ շարականը» (1743) և այլն: Տպարանն արդեն ղեկավարում էր Մահտեսի Աստվածատուրի որդի Հովհաննեսը (նրանից հետո էլ՝ վերջինիս որդի Պողոսը): Պողոս Հովհաննեսի Արապյանը 18-րդ դարի վերջին քառորդում և 19-րդ դարի առաջին երկու տասնամյակներին հայտնի դեմք էր հայ և թուրք տպագրության պատմության մեջ: 1774թ. Վրաստանի թագավորը հրավիրում է նրան Թիֆլիս՝ վրացական

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 120-126:

տպագրական տառերը կանոնավորելու: Թիֆլիսից էլ Արապյանը մեկնում է Էջմիածին:

18-րդ դարում Կ.Պոլսում գործել են նաև այլ հայ տպարաններ: Դարասկզբին տպարան է հիմնել Սարգիս Դպիրը, որը մինչև 50-ական թվականների վերջը ղեկավարել են նրա ավագ և կրտսեր որդիները՝ Գևորգը և Մարտիրոսը: Նրանց տպագրած գրքերի մեջ էին նաև Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գիրքը (1728) և Բուզանդի առաջին հրատարակությունը՝ «Բուզանդարան պատմութիւնը» (1730): 1704թ. տպարան է հիմնում Պետրոս Լատինացին, 1735-ին՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիները, ինչպես նաև դպիր Աբրահամ Թրակացին, որը լույս է ընծայում Գրիգոր Տաթևացու քարոզության գրքերը (1740, 1741), «Ոսկեփորիկը» (1746), 1750-ին՝ ակնեցի Ստեփաննոս Պետրոսյանը, այնուհետև՝ տիրացուներ Հովհաննեսը և Հակոբը, 1790-ին՝ Մատթեոս դպիրը: Հայկական տպարան է բացվում նաև Իզմիրում (Ջմյուռնիա): Անգլիայում նույնպես երկու գիրք է լույս տեսնում՝ Մովսես Խորենացու Պատմության և աշխարհագրության հայերեն-լատիներեն հրատարակությունը (Լոնդոն, 1736) և «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց» գիրքը (Լոնդոն, 1780): 1771թ. հնդկահայ վաճառական Գրիգոր Միքայելյան Չաքիկյանցի (Չաքիկենց) հովանավորությամբ Սիմոն Երևանցի կաթողիկոսի օրոք Էջմիածնում կառուցվում է հատուկ շենք, և բացվում է Հայաստանում առաջին՝ «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» տպարանը, որտեղ առաջին գիրքը տպագրվում է 1772-ին: 1775թ. տպագրվում է Սիմոն կաթողիկոսի կազմած «Տօնացոյցը»: Չաքիկյանի օգնությամբ Էջմիածնում կառուցվում է նաև թղթի գործարան: 1777թ. Էջմիածնի տպարանը լույս է ընծայում «Տաղարան Սիմոն կաթողիկոսի» և «Կարգ թաղման Հայրապետաց» գրքերը, 1779-ին տպագրության է հանձնվում Սիմոն կաթողիկոսի «Պարտավճար» աշխատությունը, որը լույս է ընծայվում 1783-ին՝ Ղուկաս Ա. Կարնեցու հայրապետության շրջանում: 1785-ին լույս է տեսնում «Ատենի ժամագիրքը», 1787-ին՝ Յովսեփոս Եբրայեցու պատմությունը՝ Ստեփանոս Լեհացու թարգմանությամբ, 1793-ին վերահրատարակվում է Սիմոն կաթողիկոսի «Տաղարան փոքրիկը»:

1772-ին հնդկահայ վաճառական Շահամիր Սուլթանում Շահամիրյանը իր որդի Հակոբի անունով հայկական տպարան է հիմնում Մադրասում, որտեղ տպագրվում են «Այբբենարան» (կամ «Քերականութիւն») և

Մովսես Բաղրամյան Արցախեցու «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ» գրքերը, 1773-ին՝ Շահամիրյանի «Որոգայթ փառացը», 1775-ին՝ Մեսրոպ երեցի «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց», 1780-ին՝ «Պատմութիւն Ղահմագի» գրքերը, 1781-ին՝ Եկատերինա Բ-ի մի նամակի թարգմանությունը, 1783-ին՝ Շահամիրյանի «Տետրակ որ կոչի նշաւակ» գիրքը: 1780-ական թվականների վերջերին Մադրասում տպարան է սարքավորում նաև Հարություն Շնավոնյանը և 18-րդ դարի վերջերին ու 19-րդ դարի առաջին տասնամյակում տպագրում 10-ից ավելի գրքեր: Հ.Շնավոնյանը հրատարակում է նաև հայերեն առաջին լրագիրը՝ «Ազդարար» ամսագիրը (1794 հոկտեմբեր-1796 մարտ՝ 18 տետրակ): 1796թ.Կալկաթայում տպարան է սարքավորում Հովսեփ Ստեփանոսյան քահանան: 1775թ. կայսերական արտոնագրով «հայ և հռոմ տառերով» տպարան են բացում Տրիեստի Մխիթարյանները (Նապոլեոնի արշավանքների հետևանքով 1811-ին տեղափոխվել են Վիեննա, այժմ՝ Վիեննայի Մխիթարյան միաբանություն): 1795-ին այդ տպարանն ուներ 47 տեսակ տառ:Մինչև 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի սկզբներին այդտեղ տպագրվել են 30-ի չափ գրքեր: Վենետիկի Մխիթարյանները տպարան են բացում 1789-ին և մինչև դարի վերջը տպագրում 17 անուն գիրք:

18-րդ դարի վերջին քառորդում Ռուսաստանում ևս բացվում են տպարաններ: Նորջուղայեցի Խալդարյանցը, Լոնդոնից տեղափոխվելով Պետերբուրգ, ծանոթացնում է Ռուսաստանի Հայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ, որի խորհրդով էլ բացում է տպարան և 1781-1788թթ. տպագրում մի քանի գրքեր: Խալդարյանի տպարանը, որ նրա մահից հետո (1787) կոչվում էր «Տպարան Նորին Բարձր սրբազնութեան», 1789-ին տեղափոխվում է Նոր Նախիջևան, տեղավորվում ս.Խաչ վանքում: 1790-1796թթ.տպագրվում են մի շարք գրքեր, ապա տպարանը տեղափոխվում է Աստրախան, որտեղ լույս է տեսնում միայն մեկ գիրք (1797): Ըստ Գ.Լևոնյանի՝ 18-րդ դարում տպագրվել է մինչև 500 հայերեն գիրք¹:

19-րդ դարում հայ գրատպությունը զարգացում է ապրում, տպագրվում են հազարավոր գրքեր:

¹Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 131-168: Լեո, Երկերի ժողովածու, հ.5, Եր., 1986, էջ 566-571:

Կ.Պոլսում շարունակում են գործել Պողոս Արապյանի տպարանները (նշվում է նրա 70-ամյա տպագրական գործունեության մասին): Նա հիմք է դրել նաև թուրքերեն տպագրությանը: Սուլթան Մահմուդ Բ-ն գնահատում է Պ.Արապյանի վաստակը, 1816-ին հատուկ հրովարտակով նրան կարգում Արքունի տպարանի տեսուչ, շնորհում արույրից ձուլված մի մամուլ-նշան՝ գլխարկի վրա կրելու արտոնությամբ: Տպագրական արվեստի մեջ կարևորվում է Գևորգ դպիրի պարսկերեն-հայերեն մեծահատոր բառարանը (1826): Ընտիր հրատարակություններ են «Ժամագիրք», «Ճաշոց» «Տոնացոյց», «Նարեկ», «Շարական», «Գիրք մեծագին և պատուական ականց», «Ագաթանգեղոս», «Թանգարան խրատու», «Հրաւեր սիրոյ», «Քերականութիւն Հայոց լեզուի», «Կրթութիւն քաղաքավարութեան», «Յայսմաւորք» և այլ գրքեր: 1853-ին Պողոս Արապյանի որդիները տպարանը տեղափոխում են Մուստաֆա-փաշա խան, իսկ թոռները՝ Օրթագյուղ (Օսմանյան կայսրություն): Տպարաններ են հիմնում մահտեսի Աբրահամ-Թերգյանը, Հ.Պարոնյանի ազգային ջոջերից մեկը՝ Հովհաննես Մյուհենտիսյանը, որը 1846-ից տպագրում է Տերոյանցի «Հայաստան» լրագիրը, «Հայաստան», «Մասիս» (սկզբի տարիներին), «Նոյեան աղանի», «Մեղու», «Սէր», «Կիլիկիա», «Ժամանակ», «Չեփիւռ Հայրենեաց» և այլ թերթեր ու հանդեսներ, բազմաթիվ գրքեր: Նա արժանանում է երրորդ կարգի մեծիտիե պատվանշանի և արվեստի շքադրամի: Պատրաստել է նաև հայկական ծայնանիշների ու խազերի կադապարներ, ձուլել տպագրության համար: Նա «փայլ աւելցուց ազգային տպագրութեան»: 1805-ին Կ.Պոլսում «քիթապձի» Մարգարը սարքավորում է առաջին «գրատունը»: Տպագրական գործը մանրամասն ներկայացրել է Թեոդիկը իր «Տիպ և Տառ» աշխատության մեջ: Տպարաններ են հիմնել նաև Ռուբեն Քյուրքչյանը, Հովսեփ Գաֆաֆյանը, Պողոս Քիրիշճյանը, Նշան Պերպերյանը և ուրիշներ:

Ջմուռնիայում ևս հիմնվում են մի քանի տպարաններ՝ Մեսրոպյան վարժարանի տպարանը, Տետյան եղբայրների, Գր.Մսերյանի, Մատթեոս Մամուրյանի տպարանները:

1833-ին Պետրոս պեյ Յուսուֆյանի միջոցներով տպարան է բացվում նաև Երուսաղեմում՝ Հայոց վանքի պարիսպներում: 1855-56թթ, Մկրտիչ վ. Խրիմյանը Կ.Պոլսում խմբագրում, հրատարակում է «Արծուի Վասպուրականի» ամսագիրը, ապա տպագրական պարագաները վերցնելով՝ վերադառնում է հայրենի վան քաղաքը և Վարազա վանքում սարքավորում տպարան, շարունակում ամսագրի հրատարակությունը: 1863-ին

Խրիմյանը նշանակվում է Մուշի առաջնորդ, գնում է Տարոն՝ իր հետ տանելով նաև տպարանը: Գլակա վանքում իր աշակերտ Գարեգին Սրվանձտյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Լրատար Արծուիկ Տարօնոյ» ամսագիրը (մինչև 1865թ. կեսերը): 1863-ին տպարան է հաստատվում Նիկոմիդիայի Արմաշի հայոց վանքում, այնուհետև՝ Սեբաստիայում, Ադրիանուպոլսում, Մարզվանում՝ «Արուսյակ» թերթի տպարանը և Եվդոկիայում՝ Ազգային վարժարանի տպարանը: XIX դարում տպագրական-հրատարակչական գործերում մեծ նվաճումներ են անում Մխիթարյանները: Դեռևս 1833թ. «Հաւատով խոստովանիմ» աղոթքը տպագրում են 24 լեզվով, ուղարկում Բելգիայի թագավորին, որից շքանշան են ստանում: Արծաթե ու ոսկե մեդալներ, գովասանական առաջին կարգի գրեր են ստանում նաև տարբեր քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներում: Այդ աղոթքը տպագրում են նաև 36 լեզվով, ուղարկում Եվրոպայի մատենադարանները, թանգարանները, թագավորներին, տարբեր անձնավորությունների:

Տրիեստի միաբանության վիճակը վատանում է, և 1810թ. տեղափոխվում է Վիեննա (Վիեննայի Մխիթարեանք), որտեղ էլ հիմնում է տպարան, բարձրացնում արտադրությունների որակը: Վիեննայի Մխիթարյան տպարանը նույնպես բազմալեզվյան տպարան էր. դեռ 1837-ին այդտեղ տպագրվում է «Որ օրինես գայնոսիկ» աղոթքը 25 լեզվով, իսկ 1893-ին՝ 50 լեզվով:

1848-ին Ճանիկ Արամյանը Փարիզում բացում է առաջին հայ տպարանը, որին կից սարքավորում է նաև մասնավոր գրածուլարան, հրապարակ հանում Արամյան տառերը (73 տեսակ), որոնք սկսել են գործածվել 1855-ին «Մասեաց աղանի» ամսագրի էջերում: Ճանիկ Արամյանը իր մասնավոր տպարանը սարքավորում է 1859-ին և տպագրում 20-ից ավելի գրքեր ու պարբերականներ, իսկ մինչ այդ սեփական տառերով շարված հրատարակությունները կատարում էր Վելմարի կամ Մեյերի տպարաններում:

1862-ի վերջերին Արամյանը իր տպարանով տեղափոխվում է Մարսել, 1864-ին՝ Կ.Պոլիս, 1865-ին տպագրում մի ընդարձակ օրացույց, այնուհետև 14 տարվա ընթացքում (մահանում է 1879թ.) լույս ընծայում Ծերենցի, Խրիմյանի, Չերազի, Դուրյանի, Սրվանձտյանի, Աճեմյանի և այլոց գրքերը, Կռիլովի առակները և այլ գրքեր: Նրա գործը մինչև 1898թ.

շարունակում է իր 14-ամյա որդին՝ Ներսես Արամյանը՝ հոր լավագույն աշակերտ Գ. Պաղտատյանի աջակցությամբ:

1856-ին Փարիզում տպարան է հիմնում Էջմիածնի միաբան, բանասեր Կ.Վ.Շահնագարյանը, որը 1862-ին հրավիրվելով Մանչեստր՝ տանում է նաև իր «գործատունը» և 1863-ից հրատարակում «Երկրագունդ» հանդեսը: Մարսելում 19-րդ դարում միակ հայ տպարանը պատկանում էր Սկրտիչ Փորթուգալյանին, որը հիմնել էր 1885-ին, հրատարակել «Արմենիա» լրագիրը:

19-րդ դարի 10-ական թվականներին հայկական տպարան է հիմնվում Պետերբուրգում Հովսեփ սարկավագ Հովհաննիսյան Հաշտարխանցու անվամբ: Այդ տպարանը 20-ական թվականների վերջերին անցնում է Լազարյան ձեռնարանին: Պետերբուրգում գործում էր նաև Ռափայել Պատկանյանի տպարանը, որտեղ տպագրվել են «Հյուսիս» շաբաթաթերթը և Գ.Բ.Պատկանյանի «Հայոց ազգի պատմությունը»: Մոսկվայում Լազարյան ձեռնարանը 1829-ին հիմնում է սեփական տպարան, որը գործում է նաև 20-րդ դարի սկզբում: Այդ տպարանում են լույս տեսել «Հյուսիսսփայլ», «Ճռաքաղ», «Համբավաբեր Ռուսիո» պարբերականները: 1831-ին լույս է տեսել աշխարհաբարով գրված «Համառոտ քննութիւն քրիստոնեական հավատո և մահմեդական կրոնի» գիրքը:

80-ական թվականների վերջերին Մոսկվայում հայկական տպարան է հիմնում նաև Սկրտիչ Բարխուդարյանը, որը գործում է մինչև 20-րդ դարի 10-ական թվականները: 1858-ի աշնանը Թեոդոսիայում հիմնվում է Խալիպյան ուսումնարանը, որին կից 1859-ի մայիսին բացվում է նաև Ազգային տպարանը և գործում մինչև 1874թ.:

19-րդ դարի 70-ական թվականների կեսերին Հովհաննես Տեր-Աբրահամյանը Ռոստովում բացում է մասնավոր տպարան, մինչև 90-ական թվականները լույս ընծայում մի շարք գրքեր: Տպարան է բացում նաև Նոր Նախիջևանում:

Մինչև 1837թ. անգործության էր մատնված Էջմիածնի տպարանը: Այդտեղ գիրք է տպագրվում միայն 1838-ին: Էջմիածնի տպարանը ակտիվ գործում է Գևորգ Դ կաթողիկոսի տարիներին (1866-1882): 1868-ին հիմնվում է Մայր Աթոռի «Արարատ» կիսապաշտոնական ամսագիրը: Էջմիածնի տպարանի առաջադիմության գործում մեծ դեր են ունենում Մակար (1885-1892) և Սկրտիչ (1892-1907) կաթողիկոսները: Գայանեի

վանքի սենյակներից մեկում Վահան վ.Բաստամյանը Գևորգ Դ կաթողիկոսի թույլտվությամբ սարքավորում է տպարան և 1874-76թթ. հրատարակում «Դպրոց» մանկավարժական ամսագիրը: Աստրախանի տպարանը 19-րդ դարում կոչվում էր «Տպարան ս. Էջմիածնի»: Թիֆլիսում 1824-ին Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին բացում է դպրոց. 1823-ի վերջերից արդեն գործում էր տպարանը (փակվեց 1830թ.): 1843-ից, երբ Ներսես Աշտարակեցին կաթողիկոս էր, Ներսիսյան դպրոցի տպարանը նորից սկսում է գործել, տպագրվում է նաև «Կովկաս» լրագիրը: Առաջին տարիներին այնտեղ է տպագրվում նաև «Մեղու Հայաստանի» լրագիրը՝ Ստ. ք. Մանդինյանի խմբագրությամբ: Ներսիսյան դպրոցի տպարանը կովկասահայության մեջ առաջինն էր և մի քանի տասնամյակ միակը:

1850 թ.Նոր Նախիջևանից Թիֆլիս է գալիս Գաբրիել ք. Պատկանյանը, որտեղ էլ հրատարակում է «Արարատ» շաբաթաթերթը «Ի Տպարանի տեառն Գաբրիելի Պատկանեան»: 1860թ. Համբարձում Էնֆիաձյանը Գաբրիել Մելքունյանի ընկերակցությամբ մի բարեկարգ տպարան է բացում, որտեղ էլ սկսում է տպագրվել Մ.Աղաբեկյանի «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիրը: Այստեղ էին տպագրվում նաև «Հայկական աշխարհ», «Գարուն», «Վաճառական», «Մեղու Հայաստանի», «Փորձ» պարբերականները: 1870-ական թթ. Թիֆլիսում հիմնվում է Հովհ.Մարտիրոսյանի տպարանը, որը տպագրում է դասագրքեր, ժամանակի գեղարվեստական գրականության մեծ մասը, մի շարք պարբերականներ՝ «Մշակ», «Մանկավարժական թերթ», «Արծազանք», «Աղբյուր», «Հորիզոն» (հանդես) և այլն: Տպարանի աշխատանքը մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը շարունակում է նրա որդին՝ Կոնստանդին Մարտիրոսյանը: 1896-ին տպարան է հիմնում նաև Հովհաննեսի մյուս որդին՝ Մնացական Մարտիրոսյանը, որն էլ գործում է մինչև 20-րդ դարի 20-ական թվականները: Այդ տպարանում են տպագրվում «Թատրոն», «Ազգագրական Հանդես», «Գեղարվեստ» հանդեսները: 19-րդ դարի վերջին տասնամյակներին Թիֆլիսում գործում էին նաև Մովսես Վարդանյանի (1881), Տիգրան Նազարյանցի «Արոր» (1891) և այլ տպարաններ¹:

Թիֆլիսից հետո տպարանական գործը ծնունդ է առնում Շուշի քաղաքում: Անուհետև տպարան է ստեղծվում Շամախիում, որտեղ առաջին

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 173-186:

գիրքը տպագրվում է 1856թ.: 1853թ. երկրաշարժի պատճառով նահանգական կենտրոնը Շամախուց տեղափոխվում է Բաքու, որտեղ էլ 1872թ. բացվում է տպարան: 1870-ական թվականներին տպարաններ են բացվում Գանձակում, Կիրովաբադում, Երևանում, Ալեքսանդրապոլում (Գյումրի), 1880-ական թվականներին՝ Ախալցխայում, 1890-ին՝ Նոր Բայազետում:

Շուշիում առաջին հրատարակիչները օտարերկրացի միսիոներներն էին: 1822թ. Բազելի Ավետարանական-քարոզչական ընկերությունը Պետերբուրգում ռուսական կառավարությունից թույլտվություն է ստանում՝ Շուշիում սկսելու քարոզչական գործունեություն: Այս ընկերության ներկայացուցիչները Ավգուստ Դիտրիխի և Ֆելիցիան Ջարեմբայի ղեկավարությամբ 1823-ին ժամանում են Շուշի, տարածք գնում ու ձեռնարկում ուսումնարանի, տպարանի և այլ պետքերի համար շենք շինել: «...երեք քարուկիր կրկնայարկ տուն ամենայն յարմարութիւններով, շուրջը պարտեզ, ջուր ծաղկոց»¹:

Բազելի ընկերությունը քարոզիչներին հանձնարարել էր «1. Տարածել Աստուծոյ խօսքը նոյն կողմերի ազգաց և լեզուաց մէջ, առաջնորդ ունենալով Մեծ Բրիտանիոյ Այլասեռից Աստուածաշնչի ընկերութեան իմաստնաբար յօրինած կանոններն ու հաստատութիւնը: 2. Սովորել տեղական նշանաւոր և Աստուծոյ խօսքը տարածելու համար կարևոր լեզուներից մի քանիսը-արաբերէն, պարսկերէն, թաթարերէն և նոր յունարեն: Ձեզանից մինն, ասած է հրահանգների մէջ, գիտէ սլաւոնական լեզուներն և նոր յունարէնի տարերքը. միւսն արաբերէնի և պարսկերէնի սկզբունքը: 3. Հիմնել մի յարմարաւոր տեղ տպարան՝ Ս. գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նաև դասագրեանք իրանց հիմնած ուսումնարանների համար»²: 1827-ին Շուշիում բացվում են Բազելի միսիոներական ընկերության ուսումնարանը և տպարանը: Միսիոներական հրատարակչությունները լույս էին տեսնում ինչպես Շուշիում, այնպես էլ Մոսկվայում՝ Լազարյան ձեռնարանի տպարանում: «Միայն այս տպարանը ինքնըստինքյան մի գեղեցիկ երևոյթ էր Շուշու խաւար իրականութեան մէջ, որին կարող էր նախանծել նույնիսկ Էջմիածինը իր անկատար տպարանով: Միսիոներների տպարանական գործունէութեան արդիւնքներն էին (թե՛ Շուշում, թե՛

¹ Հ. Ղուկասեանց, Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ, Թիֆլիս, 1886. էջ 8:

² Հ. Ղուկասեանց, Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ, էջ 4:

Մոսկվայում) 11.679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն և 100 օրինակ եբրայերեն գրքերը... Առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1828թ.¹ «Պատմութիւն Սուրբ Գրոց»¹: Թե՛ Շուշիում 7-8 տարվա ընթացքում հրատարակած, թե՛ նրանց հետնորդների՝ Լազարյան ձեռնարանում տպագրած գրքերը աշխարհաբար էին, ժողովրդին հասկանալի լեզվով: Բայց միսիոներները բողոքականներ էին և խանգարում էին ռուսական կայսրության կրոնական միասնությանը: Այդ պատճառով էլ Բազելի միսիոներական ընկերության գործունեությունը, որ սկզբում խանդավառությամբ, խրախուսանքով էր ընդունվում Ներսես Աշտարակեցու, Եփրեմ Կաթողիկոսի, ընդհանրապես հայ հոգևորականության կողմից, Հովհաննես Կարբեցու ժամանակ դժգոհության տեղիք է տալիս: Ժամանակի ընթացքում բացահայտվում են նրանց բուն կրոնական ձգտումները: 1832թ. Նիկոլայ Առաջին կայսրը արգելում է Բազելի միսիոներական ընկերության աշխատանքը հայերի մեջ: Կովկասի գլխավոր կառավարիչ պարոն Ռոգենը 1835թ. հունվարին գրություն է ուղարկում ներքին գործերի նախարարին՝ հայտնելով, որ բազելյան քարոզիչների գործունեությունն այլևս անթույլատրելի է Կովկասում: Միսիոներները խնդրում էին թույլատրել գոնե տպարանական գործունեությամբ զբաղվել: Բայց իզուր: Նրանք ստիպված եղան ծախելու Շուշիի իրենց ձեռնարկություններն ու գույքերը: Վերջին միսիոներները Շուշին լքում են 1838թ.: «Ղարաբաղի հայ ժողովրդական կրթության գործը զրկում էր մի կարևոր գործչից, որ կրոնական կերպարանք ունենալով հանդերձ՝ չէր կարող արհամարհելի մի երեւոյթ համարուել ժողովրդի վրայ բռնացած «շատ արտասուելի տգիտութեան» հանդէպ», -գրում է Լեոն²:

Բազելի միսիոներական ընկերության գործունեության շրջանում Շուշիում տպագրվել են հետևյալ գրքերը.

1. Պատմություն Սուրբ Գրոց (թարգմանություն ռուսերենից), 44 էջ, 1828: 2. Ընթերցուածք ի Ս. Գրոց հին կտակարանի (ի պիտոյ վարժարանաց), 28 էջ, 1829: 3. Հավաքումն Աստուածային վկայութեանց, 184 էջ, 1829: Պողոս Ներսիսեանց Ղարաբաղի՝ Համառոտ հայկական քերականութիւն, 30 էջ, 1829: 5. Հովսեփ Արցախեցի՝ Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պիտոյ համբակաց), 398 էջ, 1830: 6.

¹ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Ղայրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 93:

² Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Ղայրոցի (1838-1913), էջ 96:

Ժամանակի վերջն (թարգմանություն) 46 էջ, 1832. 7. Աւետարանի ճշմարտութեան և գորութեան համար (թարգմանություն), 18 էջ, 1833: 8. Կիրեղ Երուսաղեմցի՝ Ճառ վասն տասն հրամանաց հաւատոց, 46 էջ, 1833: 9. Ճանապարհորդութիւն առ բարեպաշտ կեանս (թարգմանություն), 150 էջ, 1833: 10. Քարով ավագ ուրբաթ օրին համար, 1833: 11. Մեղքը խաղ անելու բան չէ (թարգմանություն), 14 էջ, 1833: 12. Չամչեան Միքայել, Քերականութիւն հայկազեան լեզուի, 328 էջ, 1833: 13. Վարդապետութիւն Քրիստոսի խաչին համար, 77 էջ, 1833: Բազելի քարոզչական ընկերությունը 1834թ. Մոսկվայում աշխարհաբարով հրատարակում է իրենց թարգմանած ավետարանը¹:

Միսիոներական ընկերության Շուշիի տպարանը գնում է Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար Մետրոպոլիտը, շարունակում գրքեր տպագրել, հրատարակությունների վրա դրոշմելով՝ «Հրամանաւ Տեառն Բաղդասարայ իշխանազնի Ջալալեան սրբազան արքեպիսկոպոսի և Մետրոպոլիտի Հայոց ամենայն Աղուանից»: Հիշատակվում է նաև տպարանի անունը՝ «Տպարան վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու Բարձր Սրբազան մետրոպոլիտին Բաղդասարայ», ավելի ուշ՝ «Ի տպարանի Հայոց Հոգևոր Տեսչութեան»²: Մետրոպոլիտի տպարանը 1837թ. տպագրում է «Շիլիոնեան կալանաւորը»՝ թարգմանությամբ Մովսես Զոհրապեանի, 1839-ին՝ «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից»-եսայի կաթողիկոս Հասան Ջալալեանի: Այնուհետև լույս են տեսնում «Մաշտոց», «Քերականութիւն համառօտ», «Տետր այբբենական», «Կրօնագիտութիւն» և այլ գրքեր: Բաղդասար եպիսկոպոսի մահից հետո էլ (1854) այդ տպարանը պատկանում էր Հայոց հոգևոր տեսչությանը կամ դպրոցին և իր գոյությունը պահում է մինչև 70-ական թվականները: 1874թ. արդեն դժվարությամբ էին տպագրում Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագրի մի քանի համարները:

1880-ական թվականներին Շուշիում բացվում է բողոքական Միրզաջան Մահտեսի Հակոբյանի արագատիպ տպարանը: Այդ տպարանի առաջին սրբագրողը Լեոն էր: Այդտեղ 1881-ին տպագրվում է Րաֆֆու «Խենթը», ինչպես նաև Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» ոտանավորների գիրքը: Գրքում կային ինչպես ինքնուրույն բանաստեղծություններ, այնպես էլ ռուս և համաշխարհային մի շարք հեղինակներից՝

¹ Տեր- Պատարկյան Ռ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 87-88:

² Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 228-229:

Հայնեից, Բայրոնից, Գյոթեից, Շիլլերից, Պուշկինից, Լերմոնտովից, Դոբրոլյուբովից թարգմանություններ:

1882թ. Շուշիում հրատարակվում է Կ.Մելիք-Շահնազարյանի (Տմբալաչի Խաչան) «Ղըլըցե կնանոց պընը փեշակը» գիրքը, որը գրված է Ղարաբաղի բարբառով, 1883-ին՝ Մակար վարդապետ Բարխուդարյանի «Արագը տարին կտարի» աշխատությունը, որը նույնպես գրված է բարբառով, 1886-ին՝ Սկայորդու՝ Լեոյի «Նոր ցավ» գրվածքը, այլ հեղինակների մի շարք գրքեր: 1882-ին Շուշիում է լույս տեսել նաև «Գործ» գրական, քաղաքական ու ազգային ամսագրի առաջին համարը, որի խմբագիր-հրատարակիչը Սիմեոն Հախումյանն էր: «Գործի» մնացած համարները 1883-ին տեղափոխվել են Թիֆլիս: 1886-ին առաջին անգամ հայերեն լույս է տեսնում Ն.Գոգոլի «Տարաս Բուլբան»: Շուշիում է լույս տեսել նաև Մ.Աբեղյանի «Նմուշներ» ժողովածուն, «Դավիթ և Միեր ժողովրդական դյուցազնական վեպ» աշխատությունը: Լեոյի աշխատությունների մեծ մասը նույնպես առաջին անգամ տպագրվել է Շուշիում՝ «Վե՞պ թե պատմություն» (1887), «Կոյր աղջիկը», «Վահան Մամիկոնեան» (1888), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891), «Թաթախման գիշերը» (1892) և այլն: 1894թ. հրատարակվում է Ֆիրդուսու չափածո գրվածքը՝ «Ֆիրդուսի՝ Ջոհակ-Բյուրասպի Աժդահակ», որը պարսկերենից թարգմանել է Սամվել Գյուրգադյանը: 1896-ին Երվանդ Լալայանի հրատարակությամբ լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» Ա գիրքը (հաջորդ համարները հրատարակվում են Թիֆլիսում): 1899-ին՝ Հ. Ճաղարբեկյանի «Հարստության ավետարան» գիրքը:

1885-ին վերաբացվում է հոգևոր տեսչության տպարանը: Բացվում է նաև Տեր-Սահակյանի տպարանը: Փաստորեն այդ շրջանում Շուշիում գործում էր երեք տպարան: Իր հրատարակած գրքերով, տպագրական տեխնիկայով, տառատեսակներով աչքի էր ընկնում Մ.Մահտեսի Հակոբյանի տպարանը, որը մինչև 1897թվականը հրատարակել էր գիտական, ուսումնական, գրական 83 անուն գիրք: 19-րդ դարի վերջին տասնամյակում հոգևոր վարչության տպարանը փաստորեն դադարեցնում է իր գոյությունը, բայց 20-րդ դարում հիմնվում է մի նոր տպարան՝ Բաբաջանյանի տպարանը¹: Հայերեն հրատարակչության գործը Շուշիում շա-

¹ Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 228-229: Տեր-Պասապարյան Ռ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 91-93, Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Եր., 1989, էջ 64-77:

րունակվում է մինչև 1920 թվականը՝ մինչև քաղաքի հայկական մասի ավերումը. Նույնիսկ 1921-ին տպագրվել է «Գյուղացիական կոմմունա» (Օրգան Ղարաբաղի և Զանգեզուրի գյուղացիական առաջին ինտերնացիոնալ համագումարի) թերթի մեկ կամ երկու համարը՝ հայերեն, ռուսերեն և թուրքերեն¹:

Այսպիսով՝ XIX դարի 30-ական թվականներից Շուշին դարձել էր Անդրկովկասի նշանավոր քաղաքներից ու հայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկը: Սակայն 1905-1908 թթ. հայ-թուրքական արյունալի ընդհարումները, 1908թ. թուրքերի մուտքը Շուշի, մուսավաթականների քաղաքականությունը 1918-1920թթ. Շուշին դարձրել են կիսաավերակ բնակավայր: «Ժողովուրդների բարեկամության» տարիներին Շուշին փոխվել է, դարձել խորհրդային երկրի քաղաք, բայց 20-րդ դարի վերջին այն նորից ավերվեց:

Այսօր Շուշին վերականգնում է իր ազգային դիմագիծը: Հուսանք, որ այն նորից կդառնա հայկական մշակույթի կենտրոն ու ծաղկուն քաղաք:

Армянское книгопечатание и Шуши

Офелия Бабаян

Резюме

Армянский печатник Акоп Мегапарт в1512г. в Венеции напечатал первую армянскую книгу <<Урбатагирк>>.Во многих странах мира создавались армянские типографии, армянские книги печатались и во многих не армянских типографиях. Армянское книгопечатание особенно развивалось в 19-ом веке.Среди армян Кавказа первые типографии были созданы в Тифлисе (1823), в Шуши (1827), в Шемахи (1856), в Баку (1872). В Эчмиадзине первая книга была напечатана в 1838г. В 1870-ые года открылись типографии в Гандзаке, Ереване, Александраполе. В Шуши первыми издателями были базельские миссионеры. В годы их деятельности в Шуши были напечатаны 13 книг. Типографию миссионеров купил и продолжил книгопечатание глава епархии Карабаха Багдасар Митрополит. В 1880-ые годы в Шуши открылась и скоропечатанная типография Мирзаджана Акопяна, а также типография Тер-Саакяна. В начале 20-ого века была основана типо-

¹ Տեր- Պատարյան Ռ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 94-95, Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Եր., 1989, էջ 122:

рафия Бабаджаняна. Армянское издательское дело в Шуши продолжалось до 1920г., до разрушения армянской части города.

Сегодня Шуши восстанавливает свой национальный облик, вновь становится центром армянской культуры.

The Armenian typography and Shushi.

Ofelia Babayan

Summary

In 1512 the first Armenian printer, Hakob Meghapart in Venice, printed the first armenian book «Urbatagirk». In many countries of the world created by the armenian typography, armenian books printed in many not Armenian typographies too.

Armenian printing increased especially in the 19th century. Among the Armenians of the Caucasus first printing press were established in Tiflis (1823), Shushi (1877), then in Shamakhi (1856), in Baku (1872).

The first book was published in Etchmiadzin in 1838. In the 1870' s had opened typographies in Yerevan, Gandzak and Alexandropol. In Shushi the first publishers were Basel missionaries.

In the course of their work in Shushi were printed 13 books sufficiently processed by ashharabar. A printing press of missionaries bought and continued the typography the head of the Diocese of Karabakh Metropolitan Baghdasar.

In the 1880' s in Shushi was opened fast printing press of Hakobyan Mirzhadzhana, pilgrims in Yerusalem and Ter-Sahakyan' s printing press. In the early 20th century based the typography of Babajanyan Armenian publishing in Shushi continue until 1920, until destruction of the Armenian part of the city. Today Shushi restore its national image gradually becomes center of Armenian culture.

Արգիշտիի ժամանակաշրջանից պատմությանը հայտնի տարեգրությունը Վանի ժայռի վրա փորագրված «Խոռխոռյան» կոչվող տարեգրությունն է՝ բաղկացած 400 տողից, ուր խոսվում է Առաջավոր Ասիայի մեծ նվաճողի՝ Արգիշտիի արշավանքների մասին: Փաստորեն Մենուայից հետո Արգիշտին շարունակում է հոր արտաքին և ներքին քաղաքականությունը՝ Ուրարտու-Բիայնային միացնելով նոր տարածքներ, երկիրը հզորացնելով ռազմականապես և տնտեսապես: Ուրարտական պետության հիմնական մաս են դառնում Արարատյան դաշտը, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափը: Բնականաբար, սկսվում է նվաճված տարածքների տարբեր ցեղախմբերի միաձուլումը, այսինքն՝ հայ ժողովրդի ձևավորման ընթացքը: Մ.թ.ա. 782թ. այսօրվա Երևանի հարավ-արևելյան շրջանում՝ Արինբերդ կոչվող բլուրում կառուցում է իր հզոր քաղաք-ամրոցը՝ Էրեբունին: Էրեբունիից հետո Արգիշտի Առաջինը Արաքսի ձախ ափին կառուցել է տալիս երկրորդ քաղաք-ամրոցը, այն իր անունով կոչում է Արգիշտիխինիլի: Ինտագայում այն ստանում է Արմավիր անունը: Այս երկու քաղաք-ամրոցները դառնում են Ուրարտական պետության հյուսիսային մարզերի վարչական, ռազմական ու տնտեսական խոշոր կենտրոններ¹:

Հ. Խաչատրյանի վեպի հիմնանյութը Էրեբունիի հիմնարկման և Բիայնայի փառքի քաղաք հռչակելու պատմությունն է: Ակադեմիկոս Ս. Արզումանյանը «Էրեբունին» պայմանականորեն է պատմավեպ համարում, որքանով որ այնտեղ պատմանյութը սահմանափակվում է Արգիշտի Առաջին արքայով և ուրարտական դիցարանի Խալդ, Թեյշեբա, Շիվինի, Իվարշա աստվածներով²:

Վեպում ակնհայտորեն դրսևորված են սոցիալիստական ռեալիզմի գեղագիտության արտահայտություններ: Մի կողմ թողնելով Ուրարտական ստրկատիրական պետության նվաճողական քաղաքականության գեղարվեստական յուրացումը՝ գրողը Արգիշտի Առաջինին վեր է հանում որպես կառուցող ու խաղաղ գոյատևման գաղափարախոս-գործչի: Վեպը, որ բաղկացած է տասներկու սյունից, և յուրաքանչյուր սյուն իր խորհրդանշական վերնագիրն ունի, բացվում է Արգիշտի արքայի՝ «Բիայնայի գավակներին»³ հղված պատգամով:

¹ Ըստ Հ. Ժամկոչյանի «Հայ ժողովրդի պատմության», Երևան, 1963, էջ 62-64:

² Ս. Արզումանյան, «Սովետահայ վեպը», հատ. IV, 1990, էջ 477-489:

³ Հ. Խաչատրյան, «Էրեբունի», էջ 9:

Գրողը վեպում նրբանկատորեն խուսափում է «Ժողովուրդ» բառի օգտագործումից: Անհրաժեշտության դեպքում դիմում է «ամբոխ» բառին¹:

Իր խոսքի հանդիսավորությամբ և վսեմությամբ ի՞նչ է պատգամում Արգիշտին Բիայնայի զավակներին. «...Սովորեցեք ջրանցքներ ու պալատներ կառուցել, սովորեցեք մշակել հողը, քաղցրահամ դարձնել խաղողի ողկույզները... Հայկա բոլոր զավակները, թոռները, ծոռները և նրանց որդոց-որդիները պարտավոր են պաշտել շինարարության աստծուն՝ Իվարշային: ...Պրկած պահենք մեր աղեղները, քանի դեռ նետեր կան աշխարհում, բայց բրիչով կերտենք մեր փառքը: Ասորական նետերը կարող են մեր սիրտը խոցել, բայց՝ ոչ մեր տաճարները... Բիայնա երկրի յուրաքանչյուր գերդաստան պետք է ունենա առնվազն մի շինարար»²: Ի նշանավորումն Ասորեստանի դեմ տարած հաղթանակի (Էրեբունի՝ նշանակում է հաղթանակ - *ժանդթ. Ժ.Բ.*) և ի հավաստումն արքայի պատգամի, սկսվում է նոր քաղաք-ամրոցի՝ Էրեբունիի կառուցումը:

Էրեբունիում գործողությունների խիտ ծավալումներ ու երկարաշունչ նկարագրություններ չկան: Սյուն առ սյուն գրողն ստեղծում է զուգահեռներ, համալրում վեպի կերպարային համակարգը: Վիպման զարգացումը հիմնականում առաջ է ընթանում տրամախոսություններով, ինչը վիպմանը թատերգությանը բնորոշ խաղացկուն ոճ ու դինամիկա է հաղորդում: Կերպարներն ամբողջանում են ոչ թե գրողական բնութագրումներով, այլ իրենց մտքի, մտածելակերպի, տրամաբանման, խոսքի միջոցով: Թեև վեպը բացվում է Արգիշտի արքայի պատգամով, գրողը նրան վեպի կենտրոնական դեմք չի դարձնում: Ընդհանրապես, դժվար է վեպի գործող անձերից որևէ մեկին կենտրոնական դեմք դիտարկել: Կենտրոնում Էրեբունիի կառուցումն է, և վիպական ծավալումները պտտվում են գլխավոր նպատակի շուրջը: Գրողն ստեղծում է հանգույցներ, որոնք միևնույն ժամանակ ֆոն են՝ վերհանելու ժամանակի քաղաքական, սոցիալ-հասարակական, մշակութային դաշտը: Քարի հետ աշխատելու հանդարտ ռիթմը փոխանցվում է վիպմանը: Գրողի գրիչը ձեռք է բերում պատմական հեռավոր անցյալի կենսանյութի

¹ Նույն տեղում, էջ 123:

² Հ. Խաչատրյան, «Էրեբունի», էջ 10:

գեղարվեստականացման հստակություն: Վերջնական հաշվով ընթերցողի առաջ բացվում է վաղնջական ժամանակաշրջանի ամբողջական պատկեր-կերպարը՝ հասարակական կյանքի բազմակողմ դրսևորումների փաստարկումներով:

Բիայնան ապրում է խաղաղ շինարարական կյանքով: Նրա հիմնական քաղաքական հակառակորդը Ասորեստանն է, որի թագավոր Սալմանասարը Բիայնայի ներքին խաղաղությունը պղտորելու համար նենգ ձանապարհներ է որոնում: Ստեղծվում է Սալմանասար-Շամիրամ-Արգիշտի գիծը: Արգիշտի-Սալմանասար բախումը ներքին տարողունակություն է ձեռք բերում: Դա ուժեղ և թույլ կողմերի բախում է: Թույլ կողմը, չկարողանալով բացահայտ առճակատման գնալ, դիմում է խարդախության: Ուժեղ կողմն ազնվագարմ է ու արդար: Այս գծի կրողը վեպում բիայնացին է՝ հանձինս Արգիշտիի և մյուսների: Ասորի Սալմանասարը հակառակորդի դեմ կարող է օգտագործել նույնիսկ սեփական քրոջը՝ նրան հրելով վտանգներով լեցուն ձանապարհ: Նա գեղեցկուհի քրոջը՝ Շամիրամին, մանկուց որպես Բիայնայի թշնամի է դաստիարակում՝ Արգիշտիին վերացնելու համար: Շամիրամը խելացի է, ճարպիկ, նպատակասլաց: Նա կարողանում է մտնել Բիայնա, խուսափել հետապնդումներից, հասնել էրեբունի: Ի վերջո իր մտադրություններով բացահայտվում է և դաժանորեն պատժվում Արգիշտի արքայի կողմից: Բիայնայի ծաղկումը նոր պատերազմական ընդհարումների պատճառ է դառնում. «Մարերը և Բիայնայի բոլոր թշնամիները սկսել են տեսնել մեր հուշայությունը: Նրանք նախանձում են և գազագում, որ մեր տերության մեջ այնքան շատ ենք կառուցում»¹: Վեպում պատերազմական բախման նկարագրություն չկա: Պատերազմի ընթացքի մասին ընթերցողը ծանոթանում է մարդկանց մեջ պտտվող լուրերով: Յուրաքանչյուր բիայնացի նախ շինարար է, հողագործ, արարող՝ ընդհանրապես ու անհրաժեշտության դեպքում՝ նետ ու նիզակով իր տան ու երկրի խաղաղության պաշտպանը: Սա վեպի գործող անձերից շինարար Արմենակի հաստատուն կեցվածքն է. «Ասորիները չեն կարող գրավել Բիայնան: Կռվի ժամանակ բոլոր շինարարները նետ ու նիզակ կվերցնեն: Բիայնացիք քաջ են, նրա ապագա շինարարները չեն զրկվի քաջությունից»²:

¹ Հ. Խաչատրյան, «Էրեբունի», էջ 175:

² Նույն տեղում, էջ 16:

Արմենակին գրողը վիպական գործողություններ է բերում վեպի սկզբից և գիծը շարունակում մինչև վեպի ավարտը: Արմենակը քարագործ է, վարպետ Ամասիայի սիրելի ու հմուտ աշակերտը: Նա վեց տարի դպրանոց է հաճախել, նրա շինարարական հմտությունների հիմքում ընկած է գիտելիքը: Ամասիայի մահից հետո նա է դառնում Էրեբունիի գլխավոր շինարար-վարպետը: Նրա գործը ծեռքերով ու մտքի թռիչքով է կերտվում Արգիշտի արքայի հուշասյունը, քարե խողովակներով Մեծ ապառաժից ջուրը հասցվում Էրեբունիի միջնաբերդը: Վեպում գործածված չէ «հայ» բառը: Սակայն Արմենակի ընտանիքն ակնհայտորեն վեր է հանված որպես հայկական ավանդական սրբություններով ու սովորություններով շնչող տիպիկ հայ գերդաստան: Ստեղծելով Արմենակ-Գիսակ գիծը, հյուսելով նրանց սիրո, ամուսնության, Էրեբունիում տուն կառուցելու և առաջին Էրեբունցի դառնալու պատմությունը՝ գրողը հավաստի գույներով վերականգնում է իր ժամանակից շուրջ երկու հազար յոթ հարյուր հիսուն տարվա հեռավորություն ունեցող հասարակական կեցության նրբերանգները՝ այժմեական գույներ հաղորդելով դրանց: Հայր-որդի-եղբայր-մայր հարաբերություններում իշխողը նվիրվածությունն ու սերն է, փոխադարձ պարտավորվածությունը: Հոգեբանական խորքով, հավաստիությամբ ու արդիական հնչողությամբ այս գիծը թերևս վեպի լուրջ նվաճումներից է: Երագուհի-Արմենակ (մայր և որդի) հարաբերությունները սրբագործվում են մոր նվիրական զգացմունքներով: Մայրն ամեն օր պետք է սպասի որդուն, եթե չպահեց ճամփան, որդին չի վերադառնա: Այս համոզմամբ է Երագուհին ապրում կյանքում: Նա բնավորության անհատականություն ունեցող ու կենդանի գույներով շնչող կերպար է: Որպես հայ մոր և կնոջ տիպականացված կերպար՝ այժմեական է բոլոր ժամանակների մեջ: Երագուհու ամուսինը՝ Սլկունին և որդին՝ Մանավազը, զինվորականներ են: Երկրի ներքին խաղաղությունը ոչինչ չի ասում Երագուհուն: Թշնամին ամեն րոպե կարող է խախտել այդ խաղաղությունը: Մոր և կնոջ տազնապող սիրտը շատ կցանկանար, որ Սլկունին ու Մանավազը ևս Արմենակի նման շինարարներ լինեին, որովհետև Երագուհին համոզված է, որ նիզակ բռնողը նիզակով էլ սպանվում է: «...Քանի աշխարհում նետ ու նիզակ կա, տղաս, ոչ մի մայր չի կարող հանգիստ լինել», - ասում է Արմենակին¹:

¹ Հ. Խաչատրյան, «Էրեբունի», էջ 42:

Հոգսերի, սպասումների ու մորմոքների մեջ տարիների ընթացքում Երազուհու ձիգ մեջքը կորանում է, սակայն որպես ընտանիքի խմորիչ ու հենասյուն, նա պարտավորված է բոլորի առաջ: Մորմոքում է, որ Մանավազը ժառանգ չունի, Արմենակին միայն աղջիկներ են ծնվում: Երազուհու ներաշխարհը փոթորկվում է, Սլկունու և Մանավազի զոհվելուց հետո աշխարհի լույսը փոխվում է գորշության: Սուսի տաճարում նրա աղոթքը ցավազին բողոք-խնդրանք է. «Ես էլ չեմ գա քեզ մոտ, Իվարշա, հովանավոր եղիր իմ Արմենակին: Նա է մնացել միակ Սլկունի այրը: Ես գիտեմ, որ դու զորություն ունես: Ինչո՞ւ խորհրդի չես նստում Բիայնայի բոլոր աստվածների հետ, ինչո՞ւ քո բրիչը այնքան ուժ չունի, որ փոխարինի բոլոր նիզակներին: Ես աղերսում եմ քեզ, բրիչներ դիր բոլոր մարդկանց ձեռքին՝ և՛ բիայնացիների, և՛ Բիայնայի բոլոր թշնամիների: Թող մարդիկ միայն շենքեր կառուցեն և հող մշակեն»¹: Էրեբունիի մարդահամարին Երազուհին քար չի նետում նախատեսած փոսի մեջ: Եթե չկան ամուսինն ու որդին, չկա նաև ինքը: Նա ամուսնու ու որդու բաժին քարերը պահում է ծոցում, սրտին մոտ, եթե հնար ունենար, կպահեր սրտի մեջ ու քանի ապրում է, կջերմացներ իր սրտի բաբախյունով: Երազուհին հայ սգակիր մոր մորմոքի խորքն ու խորհուրդն իր մեջ ներառած կայացած ու ամբողջական կերպար է հեղինակի ողջ կերպարային համակարգում, թերևս ամենակայացածը «Էրեբունիի» կերպարներում:

Երազուհու ընտանիքի առաջ պարտավորվածության ժառանգողը Արմենակն է: Արմենակը ոչ միայն հմուտ քարագործ է, այլև հողի մշակ ու այգեգործ: Նա պետք է շեն պահի Կորեկավանի հայրական տունը և շարունակի կառուցել Էրեբունին: Արմենակը վեհանձն է և մարդասեր: Նա ազատ է արձակում ասորուհի Շամիրամին, թողնելով, որ Շամիրամն ինքը տնօրինի իր ընտրած ճանապարհը: Անընտանիք ու անժառանգ վարպետ Ամասիան իր կյանքի վերջին օրերն անց է կացնում Արմենակի տանը՝ նրա խնամքի ու հոգածության ներքո:

Վեպում բիայնացիք վեր են հանված որպես Հայկա և Արամա սերունդ: Նրանք ազատատենչ են, արարող, հողի պաշտամունք ունեն, դժվար պահերին հենվում են հենց զենքի ուժին ու ապավինում իրենց հովանավորող աստվածներին: Գրողի գաղափարաբանական

¹ Նույն տեղում, էջ 253:

հիմնական շեշտադրումը արարումով հավերժելու փիլիսոփայությունն է: Այս փիլիսոփայության կրողը նախ և առաջ Արգիշտի արքան է: Արգիշտին, որ վիպական դրվագներում երևում է իր պատգամներով, հրովարտակներով, քարե պնակիտների վրա ապագային հղած արձանագրություններով, մշակութային ձևավորված ժառանգության կրողը, գնահատողն ու զարգացնողն է: Որպես ռազմականապես կայացած տերության արքա՝ նա մշակութային հստակ քաղաքականություն ունի: Արգիշտին պետական խոր մտածողության տեր այր է: Ոգեկոչելով աշխատանքն ու շինարարությունը՝ չի ժխտում ռազմական հզորության ուժը: Վեպի բազմաթիվ դրվագներում հեղինակը վեր է հանում Արգիշտի արքայի մտքի խորությունն ու ժամանակի իրադարձությունների գնահատման սթափությունը: Նա գործում է ոչ միայն ի նպաստ ներկայի: Նա գալիքի մունետիկն է: Համոզված է. «...Բիայնայի աստվածներն ինձ հավաստում են, որ հազար տարի հետո Բիայնայի և աշխարհի բոլոր կողմերից մարդիկ կգան Էրեբունի՝ տեսնելու և սովորելու համար: Աստվածներն ինձ հավաստում են, որ հազար տարի հետո Էրեբունին կլինի շինարարների ամենամեծ քաղաքն աշխարհում¹»:

Գրողը հայկականացնում է պատմական միջավայրը: Բիայնայում արքայական հրովարտակներով ստեղծվում է հողի, ծառի, ծաղկի, բերքի պաշտամունք: Շինարարի կողքին նույն հավատքով շնչավորվում է հողագործը, փառաբանվում նրա աշխատանքն ու աշխատանքի արդյունքը, կազմակերպվում են փառատոներ ոչ միայն աստվածներին՝ Իվարշային և Վանատուրին նվիրված, արքայի հրամանով նռան տոն ու տոնավաճառ է կազմակերպվում Էրեբունիում: Բիայնացիք աստվածություններին նուռ ու խաղող են ընծայաբերում, կազմակերպում գինարբուքի տոներ: Գրողը Բիայնայի դիցարանին խառնում է հայոց դիցարանի ներկայացուցիչներին, Բիայնայի կենցաղավարությունը շնչավորում հայկական սովորություններով: «Եթե չալարես, ջուրը քո ետևից սար կբարձրանա»² գլխում արքունի գուսանը վիպում է աշխատանքի ու աշխատասիրության ասքը. Բենի տասներկու որդիներից Հայկին բաժին է ընկնում Քարաստան երկիրը: Լեռների ոգին հուշում է Հայկին, որ եթե ինքը չալարի, օրնիբուն աշխատի, ջուրն իր

¹ Հ. Խաչատրյան, «Էրեբունի», էջ 264:

² Հ. Խաչատրյան, «Էրեբունի», էջ 59:

հետևից կշարժվի, ու Քարաստանը կփոխվի ծաղկաստան-դրախտի: Այդպես էլ լինում է: Հայկի ավանդները շարունակում է նահապետ Արամը: Եվ հրաման է արձակում Արամը. «Թող բոլորն անիծեն նրան, ով Քարաստան երկրի երկնքի տակ ծուլություն կանի: Բոլորը պարտավոր են աշխատել օրնիբուն»¹: Քարաստանի կանայք բողոքում են, որ սիրո համար ժամանակ չի մնում: Քարաստանում սիրո ժամանակ է ընտրվում գիշերը. «Հմայիչ է դառնում ցերեկվա հոգնությունից հետո գիշերվա սերը... Գիշերային սիրո ժամերն ուժ էին տալիս մարդկանց ցերեկվա հոգնատանջ աշխատանքը թեթև տանելու համար»²: Գրողն ստեղծում է մարդու և աշխատանքի դաշնության փիլիսոփայությունը:

Բիայնայում ամեն մեկը գիտակցում է իր գործի կարևորությունը և այդ գործի նվիրյալն է: Քաղաքապետ Արծրունի, վարպետ Ամասիա, հիսնապետ Սկունի, քարագործ Արմենակ, երկաթագործ Կորյուն, արքունի խորհրդական Շատունի և ուրիշներ կերպարային խորք ու բնավորություն են ստանում իրենց գործունեության մեջ: Իսկ նա, ով կեղծարարության է գնում իր կոչման մեջ, պատժվում է աստվածների կողմից, դատապարտվում կործանման: Քրմապետ Կրտսեր Բզնունին ցնորվում է և դատապարտվում մահվան: Թեև վիպական այս գիծը հավաստիություն չի ներշնչում, բայց ակնհայտորեն ընդգծում է գրողի միտումը:

Վեպում բոլոր կերպարները չեն, որ տիպաբանորեն կայացած են ու ամբողջական: Պատմական ժամանակաշրջանին առանձնահատուկ սոցիալական հակադրության գեղարվեստական յուրացման նպատակով ստեղծված են ստրուկներ Վազիկի և Մրջյունի կերպարները: Երեբունիից փախուստի դիմած հիսուն ստրուկների միջադեպը և նրանց առաջնորդ Քարասիրտի կերպարը զուրկ են հավանականությունից ու իմաստային խորքից: Կերպարակերտման մեջ գրողը երբեմն գնում է չափազանցումների: Կերպարի արդիականացման միտումն է, որ դրդում է վաղնջական շրջանում ապրող ներկատան կառավարչի աղջկան՝ Սիրվարդին, վեր հանել որպես բարի, ցավակից, ստրուկի և ազատի միջև տարբերություն չդնող, խորունկ մտքի տեր, համարձակ աղջկա: Քաղաքապետ Արծրունի-Սիրվարդ զուգահեռում աղջիկն այնքան խելացի, տրամաբանական ու համարձակ պատասխաններ է տալիս, որ վերջինս

¹ Նույն տեղում, էջ 65:

² Նույն տեղում, էջ 65:

ասում է. «Մնաս հաջողությամբ, կառավարչի աղջիկ, դու տղամարդու չափ խելք ունես»¹: Նույն անհավանական վիճակների մեջ ենք տեսնում Սալմանասարի դեսպան Նոստրին: Արքայազն Ռուսայի հետ դրվագում անհավանականությունը փոխվում է զավեշտի: Գրողական համակրանքի և հակակրանքի ակնհայտ դրսևորումները հատուկ են Հ. Խաչատրյան-գեղագետին: Տուշպայում հայտնված դեսպան Նոստրը ոչ միայն զարմացած, այլև հիացած է Բիայնայի նվաճումներով: Իսկ Տուշպայի ծովակի գեղեցկությամբ ուղղակի զմայլվում է՝ մտածելով. «Այս ծովակն արժե երեք անգամ երեք Ասորեստան»²: Արգիշտի արքան ամիսներով ձգձգում է Նոստրի ընդունելությունը: Ի վերջո արքայի հետ Տուշպայից դուրս հանդիպելու իրավունք է ձեռք բերում արքայազն Ռուսայից՝ թույլ տալով, որ վերջինս որպես ծի հեծնի իրեն: Վեպում բազում են բնավորության անհատականություն ձեռք չբերած կերպարները՝ շինական Հրայր, Լուսնթագ, երեք Շամիրամներ, նահապետ Նասինի, ստրուկների առաջնորդ Քարասիրտ, Մանավագ, Վանուհի և ուրիշներ:

«Էրեբունի» վեպով սկսվում է Հ. Խաչատրյանի գուսանապատումը և շարունակվում մյուս պատմավեպերում: «Ինչո՞ւ Էրեբունիում գարունը կարճ է, աշունը՝ երկար» գլխում³ գրողը կերպավորում է գուսաններ Վինիին, Կումին, Ճորոխին, որոնք իրենց բնաշխարհի հմայքը, գեղեցկությունն ու յուրօրինակությունն են վեր հանում հանպատրաստից ասքվիպումներով՝ արժանանալով արքայի հավանությանն ու նվերներին:

«Էրեբունին»՝ իր տասներկու սյուներով շինարար կյանքի ու խաղաղ գոյության գաղափարաբանության հիմն է, կենսունակ կամուրջ՝ ձգված մ.թ.ա. 8-րդ դարի ու ապագայի միջև: Այն արդիական հնչողություն կունենա նաև գալիք ժամանակներում:

¹ Հ. Խաչատրյան, «Էրեբունի», էջ 198:

² Նույն տեղում, էջ 94:

³ Նույն տեղում, էջ 221:

«Эребуни». Историческая эпоха и система образов
Жанна Бегларян
Резюме

В статье рассматривается место романа Айка Хачатряна «Эребуни» в ряду его исторических романов. «Эребуни» - первое завершенное произведение автора, вышедшее в свет в 1968 году. В основе романа лежит история основания Эребуни-Еревана и провозглашения Биайны городом славы. Действие романа разворачивается в 8 веке до н. э. Основной идеологический акцент делается на прославлении мирного строительного труда, совершаемого по твердому убеждению большинства действующих лиц в романе. Состоявшимися образами романа являются царь Аргишти, мастер Амасия, каменщик Арменак, Еразуи, мэр Арцруни, и другие. Роман является живым мостом между 8 веком до н.э. и будущим, овеванным оттенками современности.

Historical Epoch of “Erebuni” and a System of Characters
Zhanna Beglaryan
Summary

The article reveals a position of Hayk Khachatryan's novel “Erebuni” in the rank of his historical novels. “Erebuni” was the first complete work of the author published in 1968. Basis of the novel lies in the history of Erebuni – Yerevan foundation and Biayna's proclamation as a glory city. The novel's action is developed in the 8th century B.C. The basic ideological accent is done on the glorification of the peaceful building work, which is the firm belief of the majority of characters in the novel. The main characters of the novel are the king Argishti, master Amasiya, mason Armenak, Yerazuhi, mayor Artsruni and others. The novel is a living bridge between the 8th century B.C. and the future fanned by modern times shades.

«Վեղը շատ չըրչարե: Վեղեն հիշքան շատ չըրչարիս, էնքան վեղը քըխծրանումա, վեղեն քաղծրն էլ տամա պրանետ: Ըստի ասիմ տու էլ աշկո՝ ծակ չի պահիս, ըշտահետ էլ քացախ չանիս: Ծառ շատ տնգե, համա շիլ չըղնիս քրիստոսա տունգը պուք տաս, քամուն պերած սերմը տնգիս:

Վըղումդ թըմահեն ծառը տնգիս վուչ, չաշմիշ կընիս, հացըդ պատան չի կենալ, սորփը մատաղդ ընթունել չի, կաթնըդ կը շաղե... Հաքիդ վըղումդ խոր վեր թողե, վեր տական-կլխան փչող քամեն կարելուչ թա Ղյամա դիք տակեռն պուք տա»: Սա արցախցու՝ հողին, հայրենի օջախին ամուր կառչելու դարավոր պատվիրան է:

Լ. Հարությունյանի «Նշխարների» 5 հատորներն էլ ազգագրական, բանահյուսական նյութերի անսպառ ու մնայուն գանձարան են և Լ հերթին արժևորվում են որպես հարագատ ժողովրդի կյանքը, նիստուկացն ու հինավուրց բառ ու բանը ամբարող ստեղծագործություններ: Հեղինակի բուն նպատակը մեր պատկառելի ժառանգության ընդհանրացումը, հավաքումը, դասդասումն է՝ գիտական դասակարգմամբ ու հետազոտության բանասիրական քննությամբ: Դրանք տեսական ու գործնական ընդհանրացումներով ներկայացնում են Արցախի ժողովրդի կյանքը, նրա լինելության գաղտնիքը: Բազմաթիվ հոդվածներ են հրատարակվել Լ. Հարությունյանի բանահյուսական գործունեության, գրի առած արժեքների մասին, սակայն «Նշխարները» համալրված են կարևոր բանագիտական նյութերով, ազգագրական տեղեկություններով, որոնք խորքային, կառուցվածքային փոփոխություններով անդրադարձնում են իրենց մեջ հայոց կյանքի ու մտքի պատմական տարբեր ժամանակաշրջանների կարևորագույն դրվագները, ժողովրդի բարքերն ու սովորույթները:

Ժողովածուները ստեղծվել են այն համոզմունքով, որ ժողովրդական ստեղծագործությունների հավաքումն ու ուսումնասիրությունը նպաստում է յուրաքանչյուր ազգի ազգային ինքնաճանաչման զգացումի ձևավորմանն ու զարգացմանը, այն խիստ կարևոր է ոչ միայն ազգային պատմության, ժողովրդի կյանքի հետազոտման առումով, այլև գրական լեզվի զարգացման, ժողովրդախոսակցական լեզվի բազմաճյուղ ուսումնասիրման համար:

Ազգագրական լայն ընդգրկում ունի Լ. Հարությունյանի աշխատանքը:

Գիտնականի անխոնջ ջանքերով է Լ. Հարությունյան ազգագրագետը նոր լուսաբանություններ տվել հնագիտական պեղումների ժամանակ Արցախյան հողում հայտնաբերված նյութական մշակութային երևույթներին: Շատ դեպքում պատմաբանի հմտությամբ են կատարվում քաղաքական-տնտեսական-սոցիալական-կենցաղային մեկնաբանությունները: Մեծ

189

է Լ. Հարությունյանի դերը հայ ժողովրդական բանահյուսական հուշարձանների հայտնաբերման, գրառման, հետազոտության ու գիտական հիմնավորման գործում:

Մոտիկից շփվելով համագյուղացիների, շրջակա գյուղերի բանասացների հետ, Լ. Հարությունյանը կատարում է հնագիտական, բարբառագիտական և ազգագրական հետազոտություններ: Ուսումնասիրությունները, գրքերի զանազան բաժինները վկայում են, որ բանահավաք-ազգագրագետը քաջատեղյակ էր ոչ միայն Արցախի ժողովրդի հարուստ բառ ու բանին, այլև ծանոթ էր հարևան ժողովուրդների նիստ ու կացին, Արցախի պատմության կարևոր իրադարձություններին, նրա դարավոր կյանքի պատմությանը:

Լ. Հարությունյանի ազգագրական նյութերը քաղված են ամենատարբեր աղբյուրներից, ժողովրդից գրառված ու հավաքված է մի պատկառելի բաժին, ստեղծված մի բազմաքանակ, արժեքավոր, յուրատիպ հանրագիտարան, որը վերաբերում է ժողովրդի իրական վիճակին, սոցիալական պայմաններին, աշխատանքի մարդու հոգու տվայտանքներին, հույսերին ու ձգտումներին: Հայրենի եզերքի բանասաց-բանահավաքների ջանքերով Լ. Հարությունյանը ստեղծել է մի պատկառելի ժառանգություն: Բոլոր նյութերի քննություններում տեսնում ենք թե՛ տեքստաբանություն, թե՛ ժանրերի տեսական հիմնավորում, թե՛ պատմություն, թե՛ գրականության, ազգագրության և բանահյուսության խորքային առնչություններ: Բանասերի հմտությամբ են մեկնաբանված տեքստերն, ավանդությունները, դարավոր ծեսերն ու սովորությունները:

Ավանդություններն ազգագրական արժեք ունեցող բանահյուսական կտորներ են: Դրանց նպատակը ոչ միայն գեղարվեստական պահանջի բավարարումն է, այլ նաև համապատասխան պատմական, աշխարհագրական, կենցաղային գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը:

Ավանդությունները և ավանդական զրույցները վաղուց մտել են ազգագրության, հնագիտության շրջանակները: Նման օրինակների հանդիպում ենք Լ. Հարությունյանի «Նշխարների» գրեթե բոլոր հատորներում: Հեղինակի մոտ դրանք մի դեպքում զետեղված են «Զրույցներ, առակներ, ավանդություններ» վերնագրի տակ, մի այլ դեպքում՝ «Ավանդությամբ մեզ հասած տեղեկություններ», որոնց տակ քննարկվում են տարբեր տեղանուններ («Թաքավերեն պալատը», «Իրեք ծառ», «Քուչակավ լցված», «Մեծ Նահատակ», «Պիծի Նահատակ», «Աղջաբեդի»,

«Քարախայուր, Մռավա կլխեն», Ուվտարան, Ամարաս-վանք, Ամարաս-քաղաք, Աշան, Հերշեն և այլն):

Ազգագրությունը ժողովրդի կենցաղը, սովորույթները, ծագումը, տարաբնակեցումը, էթնիկական յուրահատկությունները, պատմամշակութային առնչությունները հետազոտող գիտություն է: Այս սպեկտրով են գրի առնվել ու մեկնաբանվել բանահյուսական-ազգագրական նյութերը: Լ. Հարությունյանը քաջատեղյակ է հայ ազգագրության անցած ճանապարհին: Այդ են վկայում ազգագրական նյութերի հմուտ դասդասումը, ժանրային առանձնահատկությունների, ժողովրդի պատմության տվյալ հատվածի առանձնահատկությունների դրոշմը՝ ներկայացվող նյութի վրա:

Փաստ է, որ ազգագրական նյութերի բովանդակությամբ առավել ակնառու է Հին Հունաստանի գրականությունը, որի ավանդույթները պահպանել ու զարգացրել են միջնադարի բյուզանդական, պարսկական ու արաբական պատմիչներն ու աշխարհագետները: Որպես ինքնուրույն գիտություն՝ ազգագրությունը ձևավորվեց 19-րդ դ. կեսին, երբ տարբեր երկրներում ստեղծվեցին ազգագրական հիմնարկներ ու ընկերություններ, հրատարակվեցին հատուկ հանդեսներ:

Բանասեր-մանկավարժ Լ. Հարությունյանը ծանոթ է մեր ազգագրության պատմությանը, հայ միջնադարյան մատենագրությանը, որտեղ բազմաթիվ են ազգագրական նյութերը: Այդ են վկայում մամուլի էջերում հրատարակված նրա բազմաթիվ հոդվածները՝ գրականության, գրականագիտության ամենատարբեր թեմաների, հարցերի շուրջ:

«19-րդ դարի սկզբներին գրականության մեջ հաճախակի դարձան ազգագրական նյութերի գրառումները (Մ. Թադիադյան, Խ.Աբովյան, Մ. Բժշկյան, Մ. Էմին, Ղ. Ալիշան և ուրիշներ): Սակայն բանահյուսությանը միահյուսված ազգագրության ձևավորման սկիզբը 60-80-ական թվականներն են: Ազգագրության մեջ մեծ դեր խաղացին Գ. Սրվանձտյանցը, Գր. Խալաթյանը, Ե. Լալայանը և ուրիշներ: Մեծ ուշադրություն դարձվեց ազգագրական նյութերի վերլուծմանը, ժողովրդական կենցաղի ու մշակույթի ուսումնասիրմանը», - կարդում ենք «Հայկական Սովետական հանրագիտարանում»:¹

Ազգագրության կարևոր բաժիններից մեկը համարելով բանահյուսությունը՝ Լ. Հարությունյանը բացահայտում է նրա գեղագիտական

¹ Հայկական Սովետական հանրագիտարան, Երևան, 1974., հ. 1, էջ 103:

ֆունկցիան, ընդգծում ծագումնաբանական արմատները, որոնք տանում են դեպի ժողովրդի պատմությունը, նրա կենցաղն ու բարքերը: Լ. Հարությունյանի հավաքած, գրի առած բանարվեստի նմուշները զուգակցվում են ազգագրությանը՝ դառնալով հայ բանագիտության մեջ եզակի արժեք ներկայացնող հատված, որի ուսումնասիրությունն անտարակույս, ավարտված չէ: Ավարտված չեն, օրինակ, այնպիսի խնդիրների լուծումներ, որոնք վերաբերում են Արցախի բանահյուսության ազգային առանձնահատկություններին, որոշակի կառուցվածքային կապերին, լեզվաոճական հարցերին. «Սխալ կլիներ պնդել, թե հայ բանագիտությունը արդեն լուծել է իր առջև ծառացած բոլոր հարցերը...,- գրում է Ա. Ղանալանյանը,- հայ ժողովրդի հարուստ բանահյուսության բոլոր ժանրերն ու ստեղծագործությունները, թեմաներն ու հարցերը չէ, որ արժանացել են հավաստի ու անհրաժեշտ ուշադրության: Համեմատաբար քիչ են հայտնաբերված, գրի առնված, ի մի բերված և ուսումնասիրված մեր ժողովրդական մանրապատումները, հմայական աղոթքները և այլն»:¹

Հիրավի, բազմաթեմա և բազմազան է Լ. Հարությունյանի ստեղծագործական աշխարհը: Այն դեռևս չբացահայտված շատ հարցեր ունի՝ կապված բանահյուսական առնչությունների, ժողովրդի պատմամշակութային արժեքների քննության հետ:

Քննելով Լ. Հարությունյանի «Նշխարների» 5 հատորներում զետեղված նյութերը, նկատում ենք մի կարևոր հանգամանք. ազգագրական ու բանահյուսական նյութերում ակնհայտ պաշտամունքը Աստծո, երկնային մոլորակների հանդեպ: Այդ մասին մանրամասն խոսում է հեղինակը իր գրականագիտական հոդվածներում և, հատկապես, «Նշխարների» I գրքի առաջաբանում:

Ղարաբաղյին պաշտում է աստծուն՝ որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Հայ աշխատավորը աստծո անվան հետ է կապում մարդկային բարօրության հույսը և պատեհ առիթով աղաչում էր, որ մեղքանա և սատար լինի նրանց, ովքեր նեղ օրում են: Նա աստծո գաղափարի մեջ է դրել նաև ղեկավարի, առաջնորդի, զորավարի հանդեպ իր իդեալը: Նրա չգոյության մեջ էլ նա տեսել է իր դարավոր երազանքների, հավատի փլուզումը: «Աստուծ հիշքան կենդան ա ըլալ, մունք մռնեիս չընք ըլալ, էս մին ըշխարքաս սաղ-սալամաթ քնիիս ընք

¹ Ա. Ղանալանյան, *Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985, էջ 53:*

ըլալ էն մին աշխարքը: Մեռնելը միենգ ա: Մինչև մեռնելը սրտորնես ճաքումա»:¹

Ղարաբաղցին միայն Աստծո հետ չէր «ընկերական», այլև բնության հզոր ու իրական բոլոր ուժերի՝ արևի, լուսնի, գիշերվա, ծովի...

Այսպես. հնձվորը ջրով լի կուլան դրել էր ծառի ստվերում, ինքը գործի անցել: Արևը բարձրանում է դեպի կիզակետ, և կուլան ընկնում է պլպլան արևի տակ: Ջուրը տաքանում է: Հնձվորը փորձում ու չի խմում, հայացքը դարձնում է դեպի արևը. «Իմ տեղը վեր տու ընիս, կլակի՞ս...»

Կամ. «Լուսինը չարաճճի աղջնակ է եղել, չարչարել է մորը, երբ նա խմոր էր հունցում: Համբերությունը հատած մայրը խմորոտ ծեռքով ապտակում է աղջկան: Նա խռովում է ու թռչում երկինք: Հիմա էլ խմորոտ ու ալրոտ է նրա դեմքը և կարող ենք նայել ու տեսնել, թե ինչպես է ամպի տակից կարոտով նայում իր մորը»:² Բազում են օրինակները: Լ. Հարությունյանը խոսում է երաժշտության, երգի ու պարի, սգո երգերի ոգեղեն ընդգրկվածության, նրանց թողած լայնածավալ ազդեցության սահմանների մասին:

«Համոզված եմ, որ համաշխարհային երաժշտության պատմությունը այդ կապակցությամբ դեռ իր լիահնչյուն խոսքը կասի»: «Ինչպիսի անուններով թաքցրած լինեն նրանք, թեկուզ օտար երաժշտաշղարշով յոթեղևված, խոսում են մեր սրտի ու արյան հետ, մրմնջում են ուրիշներին անհաղորդ՝ հայկական ցավ ու կարոտով», - գրում է բանահավաքը:³

Լ. Հարությունյանը, հենվելով տարեց բանասացների պատմածների վրա, բացատրում է «Յալի» պարի էությունը:

Պարը կատարվում էր «Նահատակ» կոչվող վանքի լայնարձակ տափարակում, իսկ վանքը գտնվում է Ղզղալա գյուղի մոտ, նույնանուն սարի բարձրադիր հարթության վրա: Պարի պատրաստությունը կատարվում էր արևագալից առաջ: Իսկ արևագալի հետ տաքանում էր պարը՝ ընդգրկելով բոլորին (Յալի փոքնել): Հետո դրան հետևում էր կոխը, խաղկապուկները, հետո՝ ճինջեխը, որի նկարագրությունը հետաքրքիր է ու նպատակային:

Լ. Հարությունյանը վկայում է, որ Յալին սկզբից արևապաշտական ծիսական պար է եղել, հետո այն ունեցել է իր տարատեսակները: Յալիին

¹ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991, էջ 10:

² Նույն տեղում, էջ 10:

³ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991, էջ 11:

նախորդել է «կանչ» նվագը: Որն ուղեկցվել է զուռնա-դիոլի նվագակցությամբ:

Լ. Հարությունյանը խոսում է նաև կապերտի, գորգի, կենցաղային գործածության այլ իրերի մասին: Հետաքրքիր բացատրություններ են տրվում հայկական գորգանախշերի, վիշապագորգի մասին:

«Նշխարների» առաջաբանում հեղինակը խոսում է դարաբաղյան աղբյուրների մասին, իսկ աղբյուրի մոտ դարաբաղցին հավերժակենաց ծառ է տնկել՝ թթենի, կաղնի, ընկուզենի, քեֆի սեղան է բացել, եկող-գնացողին, ծանոթ-անծանոթին նստեցրել է «վերին թարեքին», նրա պատվին զինու նոր կարաս է բացել: Աղբյուրը շինել է «հովտ ու նավով»: Երկար նավը անասուններին ջրելու համար, իսկ ակնը՝ մեծ ու փոքր, մեծ ու փոքրի համար:

Լ. Հարությունյանը հիշատակում է, որ դարաբաղցին հնուց ի վեր աչքի է ընկնում ամուր հիմք ունեցող բարոյականությամբ ու կայուն սովորություններով: Նույնիսկ կանոնարկված էին հայկական կյանքի բոլոր բնագավառները: «Աշկը տեսածն ա սիրում», - ասում է դարաբաղցին և սա հենց պահպանել է ընտանեկան կայունությունը:

Ըստ դարաբաղցու՝ սերը կծլարծակի տևական կենակցության ջերմոցում: «Թեկուզ մարթ ու կին, էլի մարթը կնգանան բդի հմանչի, կնեզը՝ մարթան», կամ «Մեր Օսանենն նհետ էնքան օր ու քշեր ըմ ըրալ, քուրախպեր ընք տեռալ»:

Դարաբաղցին ամուսնանալու հարցում խիստ պահանջկոտ է, վճռական: Նա զանազանում է ներքին և արտաքին գեղեցկությունը, վճռական համարում ներքինը: «Դշընգյոթունը սարու ձյուն ա, սարը բդի դաշանգ», «Դաշանգն ասումա՝ ինձ հոնանցե եշի»: Տղամարդու համար է ասված՝ «կնեզ ըրա, քնենք ըրա» (լավ մտածիր): Համեստությունը, առաքինությունը այն թևերն են, որ կնոջը պետք է պահեն ավանդական բարձրության վրա: Մի գրույցի մեջ կինը մեղադրվում է այն բանի համար, որ երազում տղամարդուն ներկայացել է թեթևաբարո կողմերով. «Վեր իմ ըրագումս տի ըս, քու ըրագումդ հո՞ւնց կընիս», - ասում է ամուսինը: (Էդ խոսքը մտքումը ասելն էլ ա համոթ):

Ժառանգության հաշվառումը խիստ կարևոր է ամուսնական հարաբերություններում: Օխտը պորտը հաշվառելը ամուսնական հարցում պարտադիր է:

«Սերտն ու տոռնը պեց դարաբաղցե», - այսպես են անվանել դարաբաղցուն: Նույնիսկ դարաբաղցու չափավորության մասին է խոսում այն երևույթը, երբ ասում են. «Վեր մարթին աչքը հացեն յրան ընի, հիվանդանալ չի», «Վեր մին պենան շատ կերեր, կընհամե»: Հացի նկատմամբ պաշտամունքի հասնող սերն է դարաբաղցու էությունը: «Մարթին անա մրթավըտ պիտի կյա», - ահա դարաբաղցու ցանկությունը:

Լ. Հարությունյանը մոռացումից փրկում է արցախյան թռչունների, կենդանիների, միջատների, խոտաբույսերի, ուտեստների, թխվածքների երկար ցանկեր: Առաջին հատորի «Բանաձևային բանահյուսություն» բաժնում զետեղված են ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, խրատներ, օրհնանքներ, կենացներ, սպառնալիքներ, անեծքներ, ժողովրդական խաղեր, հանելուկներ, շուտասելուկներ, հին անձնանուններ և այլն, որոնք վերաբերում են արցախցու սովորույթներին, վարք ու բարքին:

Լ. Հարությունյանի բանահավաքչական գործունեության մի կարևոր առանձնահատկությունն այդ աշխատանքի ընդգրկած տեղագրական լայն ոլորտն է՝ Արցախ աշխարհը, նրա պատմական հինավուրց տարածքը, ուր ապրել է հայը և ճակատագրի բերումով տարագրվել՝ իր հետ տանելով իր բանարվեստի նշխարները:

Երիցս ճիշտ է Խ. Աբովյանը, որ «Ժողովրդական բանահյուսությունը ամենից առաջ հարուստ ու թանկագին նյութ կարող է տալ ազգագրագետի համար, քանի որ նրա մեջ լայնորեն դրսևորված են ժողովրդի հավատալիքները, սովորությունները, վարքն ու բարքը»:

Լ. Հարությունյանի շրջագայությունների, ժողովրդի մեջ հաճախակի լինելու, նրա՝ լսելու կուլտուրա ունենալու, հետաքրքրասիրության դրսևորման արդյունքն են ժողովրդի կյանքի, կենցաղի, վարք ու բարքի, նիստ ու կացի մանրակրկիտ ուսումնասիրությունը: Հմուտ բանասացն ու ազգագրագետը բացատրություններ ու ծանոթագրություններ է տվել ժողովրդական բանասացների տարիքի, սոցիալական-կենցաղային միջավայրի, բանահյուսական բնատուր ընդունակությունների, կատարողական արվեստի վերաբերյալ: Այդ բացատրություններն ու ծանոթագրությունները հնարավորություն են տալիս ավելի լայն պատկերացնելու բանահյուսական այս կամ այն ստեղծագործության բնույթը, ժանրային առանձնահատկությունները:

Ազգագրական նյութերը լուսաբանված են բազմակողմանիորեն ու լայն ընդգրկումով:

Ժողովածուներում հետաքրքիր ազգագրական նյութեր կան ժողովրդական բժշկության, հարսանեկան ծեսերի, վիճակախաղերի, բուժիչ բույսերի, բուժիչ աղբյուրների, սուրբ ծառերի, խաչի պաշտամունքի վերաբերյալ:

Ազգագրական բազմաթիվ նյութերը վկայում են արցախցու բաբեպաշտությունը, հյուրամեծարությունը, ազնիվ, պարզ ու անխարդախ ոգին: Անձնական բանահավաքչական աշխատանքներին զուգահեռ Լ. Հարությունյանը իր մտերիմներին, ծանոթներին, աշակերտներին համախմբել է իր շուրջը: Նրանք բավականին նյութեր են տրամադրել հեղինակին: Անմշակ այդ նյութերը բանահավաքը խմբագրել է՝ յուրաքանչյուրի մեջ դնելով նպատակամետ վերաբերմունք՝ հայ ազգագրությունը ճիշտ գնահատելու առումով: Ազգագրական նյութերը 5 ժողովածուներում էլ լուսաբանված են բազմակողմանիորեն և լայն ընդգրկումով: Հետաքրքիր է Լ ժողովածուի «Բառարան» բաժինը: Նախաբանում հեղինակը հավաստում է, որ իր «մեկնությունները հաճախ խուսանավում են նախածանոթ ու նախանշված շավղից»: Անկեղծ է ասված, այնքան անկեղծ, որ չես էլ փորձում «մեղք գործել», ասել է թե՛ կասկածել շատ բացատրությունների ճշտությանը: Սա չէ կարևորը: Կարևորը հեղինակի պրպտումներն են բառաբացատրությունների անդաստանում՝ թեկուզ երբեմն վրիպումներով ու սխալներով, մտացածին որոշ ընդհանրացումներով, որի համար և հայցում է ընթերցողի ներողամտությունը: Այնուհանդերձ մեկնությունները յուրօրինակ բանալիներ են՝ բացահայտելու երևույթը, սովորույթը, ազգագրային դիմագիծը, դիտելու դրանք ընդհանուր ժողովրդական ստուգաբանության համապատկերում: Որոշ մտացածին բացատրությունները ստվեր չեն ձգում գիտնական-բանասերի պրպտումն մտքի, ստեղծագործական երևակայությամբ կատարած հայտնագործությունների վրա: Առավել՝ խորհելու տեղիք են տալիս:

Կարևորն այն է, որ Լ. Հարությունյանը կարողանում է բացել պատմական անցյալում Արցախի կյանքում ճակատագրի բերումով տնտեսական, առավել ևս՝ քաղաքական իրավիճակների վրա դարերի ընթացքում ծանրացած վարագույրը, հետաքրքիր մեկնություններով բացահայտում է հայ ժողովրդի արցախյան հարվածի հուշարձանների ներքին

գաղտնիքները՝ կապված հոգևոր ու նյութական արժեքների ճանաչողական ու դաստիարակչական նշանակության հետ:

«Բառարանի» բացատրությունների մի մասը դարձվածքներ են, որոնք ևս արցախցու բնավորությունը, ազգային դիմագիծն են բնութագրում: Այսպես օր.

1. թկը մհակ անել - կռվել, ծեծկռտուք անել, աղմկել
2. էշը մոխրում թավիլ տալ-սիրած բանով զբաղվել
3. Ըստծու թափշուր անել-հանձնել Աստծո խնամակալությունը, աղերսել Աստծուն
4. թոզը եր անել-ծեծել
5. Ժժըպապա անել-պարել՝ դեմքը ծամածռելով
6. Երեսը պինդ-անամոթ, համառ և այլն

«Նշխարների» հատորներում գետեղված են շուրջ 4 հազար դարձվածքներ, ավելի քան 5000 բառ-հոդված՝ բացատրված, մեծ մասը՝ ստուգաբանված:

Ուշադրության արժանի են «Տեղանուններ» բաժնի բացատրությունները-Վարանդա, Մուղան-Մուխանի, Ղարաղշլաղ, Կանաչ Թալա, Արքևան, Ցից քարեր, Հաղորտի և այլն: Իրավացիորեն բանահավաքը տեղանունը համարում է պատմական վկայություն, իր մեջ դարերի խորհուրդը ներառնող հուշարձան: Լ. Հարությունյանը նախ ներկայացնում է անհիշելի ժամանակներից մեզ հասած տեղանվան պատմական կողմը, ապա նաև՝ նրա հետ առնչվող ավանդությունները, բառ ու բանը: «Մի նվիրական անուն» խորագրի տակ ազգագրագետը պատմում է «Քուչակեն բաղ» տեղանվան մասին՝ այն կապելով տաղասաց-գուսան Քուչակի պանդխտության հետ: Բացառված չէ, որ աստանդական բանաստեղծն իր երկար կյանքի մի մասն անց է կացրել Ղարաբաղի դեռևս շեն քաղաքներում և գյուղերում: «Գուցե նա իր սիրո և գինու երգերի մի մասը հորինել է հենց հինավուրց Կուսաբերդի դիմաց և գինու, սիրո և խաղողի երգեր է երկնել»:¹ «Վարանդա» տեղանունը հեղինակը դիտում է որպես վար և անդ բաղադրիչներից կազմված բարդություն: Վար-վայր բառի հնչյունափոխ ձևն է, որն Արցախի բարբառում վար, վեր, նոր ձևերով «բաղադրվելով այլևայլ բառերի և

¹ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Ստեփանակերտ, 2009, գիրք IV, էջ 92:

ածանցների հետ, ստեղծել են բազմաթիվ բառադարձվածքային կազմություններ:¹

Նախապես բառը նշանակել է ցածրադիր տարածք, դաշտ, դաշտավայր...

Բերված են վեր բառով կազմված հարադրությունների օրինակներ (վեր եկած, վեր թափել, վեր հմբարել, վեր օնիլ, վեր քինիլ և այլն): Նշանակալից են Լ. Հարությունյանի կողմից կատարված պատմական, աշխարհագրական, կենցաղային միջավայրի նկարագրությունները և միաժամանակ կատարվող ստուգաբանությունը: Լ. Հարությունյանը պեղեց, ուսումնասիրեց հայրենի լեռնաշխարհը, ճանաչեց հայրենի ծառը, թուփը, շենը, ձորը, պատմական կոթողը, մոտիկից շփվեց ժողովրդի հետ, ուսումնասիրեց նրա կենցաղը, նիստուկացը՝ հրապարակ հանելով 5 հատորանոց աշխատություն՝ հայ ժողովրդի Արցախի հատվածի բանավոր ստեղծագործության գանձերը և իր արժեքավոր լումաներդրեց հայ բանագիտության մեջ: Լ. Հարությունյանի «Նշխարների» բանահյուսական ու ազգագրական արժեքը առաջին հերթին հետևյալումն է.

«Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փոքրիկ, չնչին թվացող մի աղվամազ, լինելու է միակ ու թանկագին. մեր ազգուտակի հիշատակի պես սիրելի», - գրում է Լ. Հարությունյանը: Բոլոր ժողովածուներում էլ մենք տեսնում ենք հեղինակի անսթուգ սերը, հարգալից վերաբերմունքը բանահավաքչությամբ, ազգագրությամբ զբաղվող մարդկանց հանդեպ, իսկ բանասացները «իմ խելացի ու փորձառու զրուցակիցները երբ կային իմ շրջապատում, ինձ այնպես էր թվում, թե վաղուց է, ինչ նրանք եկել են հարյուր հազար տարվա հնությունից: 126-ամյա Սարգիս Դանիելյանը, 108 ամյա Շուքուր Խաչատրյանը, Բերդաշենցի Գրիգոր Առստամյանը, Իդունց Կարանաբին...

- Մեր սերունդներին էր հարկավոր մարդուն առողջ պահելու նրա 1000-ամյա փորձը: Բայց մենք անտարբեր գտնվեցինք դաժան օրերին: Իսկ նա էլ մեր անտարբերությունից դառնացած հեռացավ մեզ պատկանող աշխարհից: Քանի՜ քանիսն են արհամարհված հեռացել՝ կուլ տալով անգոսնության կծու հաբերը: Մենք չհասկացանք, որ բանասացը մարդ լինելուց զատ նաև արժեք է, իմաստուն, ասող, անող, հիշող, հին օրերի հմայքն իմացող, անցյալը ներկային փոխանցող

^{1 1} Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Ստեփանակերտ, 2009, գիրք IV, էջ 31:

ազգային արժեք, որին որպես այդպիսին, պետք է գնահատենք ու սիրենք,- գրում է Լ. Հարությունյանը:¹ Ինչպես խոստովանում է բանահավաքը, ստեղծագործական տարիների իր II կլանիչը ազգագրական աշխատանքն է եղել՝ վերջին տասնամյակների իր ամենասիրելի զբաղմունքը: «Դրանով են հաղորդակցվել մեր ժողովրդի տարեգրությանը, և դրանով է, որ իմ մեջ ամբողջացավ ինքնուրույն ու հայկական, երբեք ուրիշին չնմանվող նրա լինելության կերպը: Եվ դա վեհացնում էր ինձ ու ես ավելի ամուր էի կապվում նրա առօրյային ու ապագային»², - գրում է նա:

Լ. Հարությունյանի «Նշխարների» 5 հատորյակից դուրս չեն մնացել հայրենի Արցախի կյանքին ու կենցաղին վերաբերող ազգագրական որևէ դրվագ, որի գիտական, բանահյուսական արժեքը անչափ մեծ է: Ըստ հեղինակի՝ «հայ ժողովուրդն ունի ազնվատոհմիկ պատմություն: Նա ի սկզբանե սուտ ու կեղծիք չի խառնել իր պատմությանը»:

Հայ ժողովրդի արցախյան հատվածի սովորություններն ու վարքաբարքը իրենց ակունքներով մաքրամաքուր են ու ժողովրդական: Ահա թե ինչու բոլորի կողմից ընդունված են ու սիրելի:

Հայ ժողովրդական բանահյուսության, ազգագրության ուսումնասիրությունը ազգային ինքնաձանաչողության զարգացման գործոն է, նաև՝ Արցախի հնագույն պատմությունը աշխարհին հաղորդելու միջոց:

«Ի ծննդե մերված են քո ոգու գեղեցկությանը, ինչպես Արևին: Հավիտենական հայ, հավիտենական Արև», - գրում է բանահավաք-ազգագրագետ, նաև մանկավարժ ու բանագետ Լ. Հարությունյանը³:

Արցախցին գիտի իր բառ ու բանի արժեքը: Ահա թե ինչու իր խոսքն ու գրույցը գրի առնողին միշտ էլ օրհնել է՝ պերանդ քաղցր կենա: Ներակ տեսնամ Աստված հար-հավիտենական կյանք տա քեզ, աշխարքս քզանավ լիանա...

Լ. Հարությունյանը հասցրեց գրել իր 5-րդ գիրքը, այն համոզմունքով, որ մահվանից հետո հիշատակը չի թառամի: «Հուսով եմ, որ պետք կլինեմ իմ ժողովրդին մահվանից հետո էլ,- գրում է Լ. Հարությունյանը⁴: Երիցս ձիշտ է ասված: Գործն է անմահ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

¹ «Ամարաս», 2001 դեկտ., համար 22:

² Լ. Հարությունյան, Գրառումներ ծոցատեստից, Ստեփանակերտ, 2004, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 155:

⁴ Նույն տեղում, էջ 62

1. Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991:
2. Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք III, «Սոնա», Ստեփ., 2007:
3. Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք IV, Ստեփ., 2009:
4. Լ. Հարությունյան, Նշխարներ, գիրք V, Ստեփ, 2011:
5. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1967:

Ա. Арутюняна "Реликвии", а так же этнография

Анаит Атаян

Резюме

В названии статьи "А. Арутюняна" "Реликвии, а так же этнография" говорится о пяти сборниках знаменитого арцахского педагога, филолога, фольклориста и этнографа Левона Арутюняна, которые являются биографией арцахского народа, ее историческим воспоминанием, которые на протяжении веков розложились на мифы и легенды, традиции, сказки и другие фольклорные жанры.

Цель автора - обобщение, сбор и классификация исторического наследия, с научным исследованием.

Этнографические материалы собраны из различных источников. Пяти томник, имеющий энциклопедическую ценность, является и текстологией, и теоретическим обобщением этнографического жанра, и историей, и этнографией.

Велика ценность этнографических материалов в сборниках.

Их важной особенностью является выраженное широкое географическое исследование Арцахской земли, ее исторической территории, где жил армянин и волею судьбы нес на себе свои традиционные реликвии.

L. Harutyunyan's "Relies" and "Ethnography".

Anahit Atayan

Summary

L. Harutyunyan's "Relies" and "Ethnography" introduce the five collections of Levon Haroutyunyan. The latter was a great pedagogue, philologist, folk lore specialist and ethnograph. The mentioned works can be regarded as the biography of the Artsakh people, their historic recollections which have become myths, legends, traditions, fairy-tales and other folk works through many centuries. The author aimed, to collect, classify, consolidate and finally to investigate the historic material.

The ethnographic information presented by him has different sources. L. Haroutunyan's work consisting of five volumes has encyclopedic value. It's the theoretic consolidation of ethnographic genre. At the same time it's both history and ethnography.

One of the distinctive features of the mentioned work is the wide-scale geographic study of the Artsakh land and its historic territory where the Armenians lived and inherited their traditional relics by the will of fate.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽԱՆՅՈՒՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ

ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հովհաննես Խորիկյան

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ

ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ 18-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Վահրամ Բալայան

ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ԿԻՋԼՅԱՐԸ

ՈՐՊԵՍ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԿԵՆՏՐՈՆ

Նինա Գաբուևովա

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՋԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ

ԴԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ալեքսանդրա Իլյասովա, Յուրի Կլիչնիկով

1827 թ. ԷՋՄԻԱՇՆԻ ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՈԱԶՄԱԿԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԴՈՆԻ ԿԱԶԱԿՆԵՐԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ալեքսեյ Զախարևիչ

ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՓՈԽԱՐՔԱ Մ.Ս. ՎՈՐՈՆՑՈՎԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սերգեյ Լազարյան

ՎԱՐԴԻԿՈՎՎԱՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ
ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
Վիկտոր Հակոբյան

«20 ԴԱՍԱԿԱՐԳԻ» ԶՈՐԱԿՈՉԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1941-1942թթ.)
Ռուբեն Մելքոնյան

ԱՂՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԻ
ԳԵՆԵԶԻՍԸ, ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Դավիթ Ղարաբեկյան

ԻԳՂԻՐԻ ԵՎ ՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
Լյուբա Կիրակոսյան

ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻ «ԽՈՒՆԱՆԱԲԵՐԴ»
Սլավա Սարգսյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ՀԱՆՃԱՐԸ
Սոկրատ Խանյան

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՈՒՇԻՆ
Օֆելյա Բաբայան

«ԷՐԵԲՈՒՆԻ»: ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆ ՈՒ
ԿԵՐՊԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
Ժաննա Բեգլարյան

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇԽԱՐՆԵՐԸ»՝ ՆԱԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Անահիտ Աթայան

СОДЕРЖАНИЕ

К вопросу о идентификации и локализации халибов Оганнес Хориян	
Зарождение идеологии национально-освободительного движения и первые шаги в Арцахе (конец 17- начало 18 в.в.) Ваграм Балаян	
Кизляр как центр миграции армянского населения в контексте реализации колониционно-переселенческой политики России на северо-восточном Кавказе в XVIII–XIXв. Нина Гарунова	
К вопросу о торговой активности армянского купечества на кавказе и ближнем востоке Александра Илясова, Юрий Клычников	
Участие Донского казачества в боевых действиях под Эчмиадзином в каманию 1827 года Алексей Захаревич	
Роль армян в политике Кавказского наместника М.С. Воронцова Сергей Лазарян	
К истории армянской общины Владикавказа в 20-е годы XX века Виктор Акопян	
Призыв «двадцати классов» в Турецкой Республике (1941-1942 гг.) Рубен Мелконян	

Генезис нынешней стадии Азербайджано-Карабахского противостояния, его динамика и особенности

Давид Карабекян

Архитектура погребений регионов Игдир и Ван

Люба Киракосян

Хоханаберд: Нововыявленные лапидарные надписи

о роде Хахбакянов

Слава Саркисян

Гений народного песенного искусства

(К 300-летию со дня рождения Саят-Новы)

Сократ Ханян

Армянское книгопечатание и Шуши

Офелия Бабаян

«Эребуни». Историческая эпоха и система образов

Жанна Бегларян

Л. Арутюняна “Реликвии”, а так же этнография

Анаит Атаян

CONTENT

On the issue of the identification and location of the chalibyans

Hovhannes khorikyan

The Origin of National-liberation Movement Ideology in

Artsakh (XVII-XVIII cc.)

Vahram Balayan

Kizlyar as the Migration Centre of the Armenian Population

in the Context of Realization of Colonisation and Migration

Policy in the Northeast Caucasus

Nina Garunova

To the Question of Trade Activity of the Armenian

Merchant Class in the Caucasus and Middle East

Alexandra Ilyasova, Yuri Klichnikov

Participation of Don's Cossacks in militant actions at Echmiadzin in 1827 year company. Aleksy Zakharevich	
Armenians' Role in the Policy of the Caucasian Deputy M.S. Vorontsov Sergey Lazaryan	
The history of the Armenian community of Vladikavkaz in the 20-s years of the XX century Viktor Akopyan	
"20 classes" draft in the Republic of Turkey (1941-1942) Ruben Melkonyan	
"The genesis of the current stage of the Azerbaijani-Karabakh conflict, its dynamics and features" David Karabekyan	
The architecture of tombs in Igdir and Van regions Lyuba Kirakosyan	
Khokhanaberd: newly revealed lapidary inscriptions about Khakhbakyan family Slava Sargsyan	
Genius of Folk Song Art (to the 300 anniversary since the birth of Sayat-Nova) Sokrat Khanyan	
The Armenian typography and Shushi. Ofelia Babayan	
Historical Epoch of "Erebuni" and a System of Characters Zhanna Beglaryan	
L. Harutyunyan's "Relies" and "Ethnography". Anahit Atayan	

ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(հոդվածների ժողովածու)

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
(сборник статей)

JOURNAL FOR ARMENIAN STUDIES
(collection of articles)

3

Շարվածքը

և էջադրումը՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Սրբագրիչ՝ Ժ. ԲԵՂԼՍՐՅԱՆ

Հանձնված է շարվածքի՝ 09.10.12 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 21.12.12 թ.:
Ծավալը՝ 24.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300:

ԱրդՀ հրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5